

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

ՎԱՔՐԱՐ ԱՐԹՆԵՆՅԱՆ

Խ Ո Ջ Վ Լ ՈՒ Հ Ա Ն Յ Ա Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Յ Ա Ն Ա Ն Ա Տ Ո Մ Ի Ա

1. Կրթական հաստատությունների և ուսուցիչների մասին հարցերի քննարկումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կրթության նախարարի կողմից:

2. Հայաստանի Հանրապետության կրթության նախարարի կողմից կատարվող հարցազրույցները կատարվում են հարցազրույցի արժեքի և հարցազրույցի արդյունքի հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության կրթության նախարարի կողմից կատարվող հարցազրույցները կատարվում են հարցազրույցի արժեքի և հարցազրույցի արդյունքի հիման վրա:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՂՄԻ

ՎԱՅՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Խ Ո Ջ Ա Լ ՈՒ.
Հ Ա Ն Ց Ա Գ Ո Ր Ծ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ն Ա Տ Ո Մ Ի Ա

«Դիզակ պլուս» հրատարակչություն
Ստեփանակերտ-2013

ՀՏԴ 941(479.25):070
ՊՄԴ 63.3(2Յ)+76.12
Ա 263

Աթանեսյան Վահրամ
Ա 263 Խոջալու. հանցագործության անատոմիա/ Վահրամ Աթանեսյան.-
Ստեփանակերտ: Դիզակ պլուս, 2013.- 88 էջ:

*«Խոջալու. հանցագործության անատոմիա» գիրքը հրապարակա-
խոս-վերլուծաբանի անկողնակալ և անաչառ քննական հայացք է Խո-
ջալուի 1992թ. փետրվարյան իրադարձությունների՝ հինք ունենալով
տեղեկատվության մատչելի աղբյուրներից քաղված ամենատարբեր
փաստաթղթերը, ականատեսների վկայությունները, պաշտոնական
աղբյուրների և անհատ անձանց ներկայացրած վիճակագրական տվ-
յալները, այլ հետազոտողների անդրադարձումները:*

*Գիրքը, կառուցված լինելով թեմայի շուրջ պարբերական մամուլում
հեղինակի հրապարակումների վրա, նախատեսված է ընթերցող լայն
շրջանակների համար:*

ՀՏԴ 941(479.25):070
ՊՄԴ 63.3(2Յ)+76.12

ISBN 978-99941-2-839-6

© Աթանեսյան Վահրամ, 2013

ՎԱՅՐԱՄ ՍԵՐՊԵՅԻ ԱԹԱՆԵՍՅԱՆ



Ծնվել է 1959 թ. դեկտեմբերի 7-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Առաջածոր գյուղում:

1977 թ. ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1981թ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական բաժինը:

1981-1988թթ. աշխատել է Առաջածորի միջնակարգ դպրոցում՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, փոխտնօրեն:

1989թ.՝ «խորհրդային Ղարաբաղ» թերթի սեփ. թղթակից Մարտակերտի շրջանում:

1989թ.՝ ԼՂԻՄ բնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրվել է Արցախի Ազգային խորհրդի անդամ, մասնակցել ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Արցախի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերին 1-ի համատեղ նստաշրջանին:

1990թ. ԼՂԻՄ-ից ընտրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր, այնուհետև՝ ԳԽ մշտական հանձնաժողովի անդամ:

1992-1994թթ.՝ «Արցախ» պաշտոնաթերթի բաժնի վարիչ:

1994թ. սեպտեմբեր-դեկտեմբեր՝ ԼՂՀ լրատվության և մամուլի դեպարտամենտի բաժնի վարիչ:

1995-1996թթ.՝ ԼՂՀ Պաշտպանության բանակի «Մարտիկ» թերթի գլխավոր խմբագիր:

1996-1997թթ. զինվորական ծառայություն ԼՂՀ ՊԲ-ում՝ վաշտի, այնուհետև՝ ուսումնական գումարտակի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով հրամանատարի տեղակալ:

1997-2000թթ.՝ «Ազատ Արցախ» թերթի բաժնի վարիչ:

1998-2000թթ.՝ Արցախում «Ազատություն» ռադիոկայանի սեփ. թղթակից:

2000թ. առ այսօր, երեք գումարում շարունակ, ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր, ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ:

Արցախի ժողովրդավարական կուսակցության անդամ է:

Ամուսնացած է, ունի երկու զավակ, երեք թոռ:

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ուրիշի համար փոս փորողն ինքը կընկնի մեջը: Ժողովրդական այս իմաստությունը հնուց ի վեր բազում անգամ ապացուցել է իր ճշմարտացիությունը: Անշուշտ, աշխարհի բոլոր այն ժողովուրդների կյանքում, որոնք, առաջնորդվելով անպատժելիության սին ու անկենսունակ սկզբունքով, երբևէ կամ առհասարակ քամահրել, անտեսել են այդ ահեղ հեռանկարը: Եվ, որպես տրամաբանական հետևանք, ի վերջո ակամա գահավիժել են իրենց իսկ ձեռամբ ուրիշի համար պատրաստած ծուղակ-անդունդը:

Բայց, երևի թե, ոչ ամենուրեք և ոչ բոլորն են ճշմարտությունների ընկալունակ և կամ այդ առումով սեփական կենսափորձն այդպես էլ ուսանելի դաս չի դարձել: Չեն օգնել անգամ կողքից հնչած նախազգուշացումները: Ինչպես ասում են՝ խելոքին՝ մեկ, հիմարին՝ հազարումեկ ասա ...

Հայտնի լրագրող, հրապարակախոս Վահրամ Աթանեսյանի «Խոջալու. հանցագործության ամատոմիա» գիրքն ուրիշի համար փոս չփորելու կենսական ճշմարտության՝ կողքից արված ևս մեկ հիշեցում է հարևան ադրբեջանական ժողովրդին և, մանավանդ, նրա քաղաքական վերնախավին՝ մի փոքրիկ այն փոսը, որի մեջ քո իսկ ընկնելու հավանականությունը շատ ու շատ մեծ է:

Այո, հենց այդպես. Խոջալուն մեկն էր այն խորը ծուղակներից, որ դեռևս խորհրդային կարգերի օրոք՝ 50-60-ական թվականներին, ադրբեջանական իշխանությունները սկսել էին հյուսել ԱդրեսՍՅ-ին ՌԿ(Բ)Կ Կովբյուրոյի կամայական որոշմամբ բռնակցված պատմականորեն հայկական Արցախում՝ ամենայն կերպ խրախուսելով և աջակցելով նորանոր ադրբեջանական բնակավայրերի հիմնումն ինքնավար մարզի կարգավիճակով գոյատևող Լեռնային Ղարաբաղի տարբեր շրջաններում: Որ դա ամենևին էլ երկու ժողովուրդների միջև բարիդրացիական հարաբերությունների հետևողական սերտացման գործընթաց չէր, ինչի մասին շարունակաբար տարփողում էին Բաքվից, ի սկզբանե պարզից էլ պարզ էր: Համենայն դեպս՝ արցախցի այն հեռատես գործիչների համար, ովքեր անցյալ հարյուրամյակի ընթացքում քանիցս ահազանգել են այդ վտանգահարույց իրողության մասին: Ընդ որում, իրականացվող ժողովրդագրական էքսպանսիան սոսկ մարտավարական միջոց էր: Իսկ նպատակն անհամեմատ լայնընդգրկուն էր ու հեռահար, քան կարող էր ներկայացնել պարզապես մարզի բնակչության ազգային պատկերի աստիճանական վերափոփումը հօգուտ ներբերվող ադրբե-

ջանական ազգության: Հեռանկարում, որպես մաքսիմում ծրագիր, բնիկ հայ ազգաբնակչության դուրս մղումն էր ազգային պատմական տարածքից, որպես մինիմում ծրագիր՝ առաջացող կացության դեմ նրա բողոքի հնարավոր զանգվածային դրսևորումների կաշկանդումն ու սահմանափակումը՝ նորաստեղծ ադրբեջանական բնակավայրերի խիտ հյուսված սարդոստայնի միջոցով:

Երևույթն առավել ակնհայտ ու առարկայական դարձավ դարավերջին, երբ Լեռնային Ղարաբաղի հայությունը հերթական անգամ ոտքի ելավ ի պաշտպանություն իր ոտնահարված մարդկային և ազգային իրավունքների, ի շահ պատմական արդարության վերականգնման: Շարժման առաջին իսկ շրջանում պարզվեց, որ խնդիրն այնքան էլ դյուրին լուծելի չէ, պայմանավորված նաև մեկ կարևոր հանգամանքով՝ մարզի ադրբեջանական բնակավայրերը տեղակայված էին ռազմավարական նշանակության տեղանքներում՝ տրանսպորտային հաղորդակցության ուղիների անմիջական մերձակայքում կամ ճամփաբաժաններում՝ ծառայելով որպես երթևեկության յուրօրինակ արգելափակոցներ: Այդպիսով՝ 1988-ից Լեռնային Ղարաբաղը հայտնվել էր կրկնակի՝ ներքին և արտաքին շրջափակման ամուր աքցանների մեջ: Միննույն ժամանակ, մարզի ադրբեջանցիներով բնակեցված առանց բացառության բոլոր գյուղերն էլ կարճ ժամանակամիջոցում վերածվեցին Ադրբեջանի զորական ուժի սպառազեն հենակետերի և ավազակային որջերի, որտեղից պարբերաբար արդիական տարբեր զինատեսակներից ավերիչ գնդակոծության ու ելուզակային հարձակումների էին ենթարկվում հարևան հայկական բնակավայրերը, այդ թվում, հատկապես, մարզկենտրոն, հետագայում նորանկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակետը:

Նույն այդ ռազմական հենակետերից ու երթևեկության արգելափակոցներից էր նաև Խոջալու գյուղը՝ գտնվելով Ստեփանակետից Ասկերան ձգվող մայրուղու եզրին, մարզի միակ օդանավակայանի անմիջական հարևանությամբ:

Բնականաբար, ադրբեջանական այդ ռազմական հենակետի վնասագերծումը հրատապ մարտավարական խնդիր էր, որ ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերն իրականացրին փայլուն ռազմագործողության շնորհիվ՝ ոչ մեծ հեռավորության վրա գտնվող Ստեփանակետ և Ասկերան քաղաքները, ինչպես նաև հարակից հայկական գյուղերը փրկելով հետագա հրթիռահրետամային գնդակոծությունից, որին այդ բնակավայրերն ամեն օր ու ժամ ենթարկվում էին նույն այդ Խոջալուի կրակակետերից:

Խոջալուի ռազմագործողության ընթացքում, ինչպես դա անխուսափելի է ցանկացած մարտական գործողության ժամանակ, մարտնչող կողմերը, բնականաբար, զոհեր տվեցին: Ավաղ, պատահական գնդակների զոհ դարձան նաև բնակավայրի մի քանի քաղաքացիական անձինք: Ռազմական հենակետի հրամանատարությունը և քաղաքացիական իշխանությունները, յուրօրինակ կենդանի վահանի կարգավիճակով այդ մարդկանց մինչև վերջ պահել էին Խոջալուում՝ արգելելով հեռանալ առավել ապահով վայրեր: Չնայած, իրենք իսկ քաջատեղյակ էին մոտալուտ մարտական գործողություններին և, առավել ևս, քաղաքացիական բնակչության տարհանման համար նախատեսված այն մարդասիրական միջանցքի գոյությանը, որի առկայության մասին քանիցս նախապես իրազեկել էր ԼՂՀ Ինքնապաշտպանության ուժերի հրամանատարությունը:

Այնուամենայնիվ, երբ արդեն սպառվել էին Խոջալուի ռազմական հենակետն ամենայն գնով պահելու բոլոր հնարավորությունները, ադրբեջանական զորախմբի հրամանատարությունն ի վերջո, ճարահատյալ համաձայնեց դիմել առաջարկվող փրկարար օղակին՝ մարդասիրական միջանցքին, բնակավայրում մնացած փոքրաթիվ քաղաքացիական բնակչությանը թույլ տալով հեռանալ դեպի Աղդամ քաղաք: Սինչդեռ Աղդամի մատույցներում նրանց բոլորին՝ Խոջալուից հեռացած քաղաքացիական անձանց, մեկ այլ ճակատագիր էր դարանակալել՝ իրենց իսկ ազգակիցների կողմից դաժան, անխնա նախճիրի ենթարկվելու ճակատագիրը:

Ինչու՞, ինչպե՞ս, ի՞նչ ռազմական կամ քաղաքական անհրաժեշտությամբ տեղի ունեցավ այդ արյունահեղությունը, ի՞նչ են վկայում ակամատեսները, մատչելի արխիվային փաստաթղթերը, իրավապահ մարմինների հետաքննչական նյութերը, որպիսի՞ք են այդ ողբերգության պատճառահետևանքային կապերը, ինչու՞ «Խոջալու» դարձավ միջազգային ասպարեզում Ադրբեջանի հակահայ քարոզչության կարևոր առանցք՝ հետևողականորեն ներկայացվելով որպես հայ ժողովրդի կողմից ադրբեջանական ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության ակտ:

Վահրամ Աթանեսյանի «Խոջալու. հանցագործության անատոմիա» գիրքը, կառուցված լինելով թեմայի շուրջ պարբերական մամուլում հեղինակի հրապարակումների հիման վրա, այդ և այլ հարցադրումների հնարավորինս իրատեսական պատասխանների որոնում է ներկայանում իր ամբողջության մեջ: Շարադրելով լրագրողական հետաքննության տեսքով, հեղինակը գրքում հրապարակախոս-վերլուծաբանի

անկողմնակալ և անաչառ քննական հայացքով հետևողականորեն, դրվագ առ դրվագ՝ շղթայական կապի մեջ, մանրակրկիտ հետազոտում է իրադարձությունների ողջ իրական ընթացքը, ուսումնասիրությունների արդյունքներից բխող տրամաբանական հետևություններով ցուցանում Ադրբեջանում Խոջալուի վերաբերյալ հետագա ողջ ժամանակաշրջանում ամենատարբեր մակարդակներով հնչած հայտարարությունների, մեկնաբանությունների քաղաքական ենթատեքստերն ու նպատակները:

Ամփոփենք. «Խոջալու. հանցագործության անատոմիա» գիրքը կոչված է կարևոր հակադարձ կռվան հանդիսանալ Խոջալուի իրադարձությունների շուրջ լայնորեն ծավալված այն քարոզչական պատերազմում, որ Ադրբեջանը մղում է ողջ հայ ժողովրդի դեմ՝ առաջնորդվելով «Նպատակն արդարացնում է միջոցները» տխրահռչակ սկզբունքով: Մինևույն ժամանակ, մեր համոզմամբ, այն կարող է լիարժեք ծառայել կռվանի իր կոչմանը, եթե մոտ ապագայում թարգմանաբար ներկայացվի տարալեզու ընթերցող շրջանակներին:

Միքայել ՀԱՋՅԱՆ

Ընդհանուր ակնարկ

Ղարաբաղյան շարժումն ավելի սրեց ԼՂ ադրբեջանական բնակավայրերի հանդեպ Բաքվի ուշադրությունը: Ադրբեջանը չէր կարող հաշտվել ինքնավարության մարզխորհրդի նստարջանի որոշման նկատմամբ ադրբեջանական բնակչության նախնական լոյալ վերաբերմունքի հետ:

Ընդհանուր պատկերի վրա ընդգծված էր Խոջալուն: Թերեւս՝ իր աշխարհագրական դիրքի բերումով: Խոջալուի մոտ 1970-ականներին կառուցվել էր ԼՂ-ում միակ օդանավակայանը: Մինչ այդ ինքնավարության մարզգործկոմի որոշմամբ տարաբնակեցվել էր Նորագյուղը: Այսպիսով, գուցե՝ հեռահար նպատակադրվածությամբ, գուցե՝ ոչ, կանխվել էր Խոջալուի հետագա տարածական ծավալումը:

Խոջալվում լայնածավալ շինարարական աշխատանքներ սկսվեցին 1989-ից: Հիմնական կառուցապատումը, ինչպես նաեւ արդյունաբերական ձեռնարկությունների հիմնադրումը, սակայն, թափ առավ 1990-ին, երբ ԼՂԻՄ-ում հաստատվեց ռազմական կառավարում՝ Վիկտոր Պոլյանիչկոյի գլխավորությամբ: Նույն տարվա ապրիլին Ադր.ԽՍՀ ԳԽ որոշմամբ բնակավայրին տրվեց «քաղաքի» կարգավիճակ: Կարճ ժամանակ անց ադրբեջանական իշխանությունները «լուծարեցին» Ասկերանի շրջանը, այն վերանվանվեց «Խոջալուի»:

Ըստ էության, Խոջալուն մարմնավորում էր ԼՂ հարցում Այազ Մութալիբովի քաղաքականությունը: Նա իշխանության էր եկել 1990-ի հունվարյան արյունալի դեպքերից հետո եւ հենվում էր Մոսկվայի բացարձակ աջակցության վրա, եթե անգամ նրա առաջ քաշած գաղափարները չափազանց «էկզոտիկ» էին: Ինչպես, օրինակ, «անձնագրային ռեժիմի ստուգման» պատրվակով հայկական գյուղերում ԽՍՀՄ ՆԳ եւ պաշտպանության նախարարության ստորաբաժանումների եւ ադրբեջանական հատուկ ջոկատայինների գործադրած բռնությունները: Մշտական սպառնալիքը, որ «Ադրբեջանում կրկին գլուխ կբարձրացնի ժողճակատը», Մութալիբովը բավական ճարպկորեն օգտագործում էր՝ Մոսկվայից ԼՂ հարցում ավելի ու ավելի մեծ սատարում ունենալու համար:

«Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությանը տված հարցազրույցում, որ տպագրել է «Ենի մուսավաթ» թերթը (*տես՝ <http://www.musavat.com/new/M%C3%BCsahib%C9%99>*) Մութալիբովն ասում է, որ 1991թ.-ին ինքը «խոսակցություն է ունեցել ամերիկացի նախկին հետախույզների հետ, որոնք Բաքվում հետեւում էին իրավի-

ճակին» եւ խնդրել, որպէսզի իր համար «գտնեն հայամետ կոնգրեսականները՝ ավագ Ջորջ Բուշին գրած նամակի պատճենը»:

Մութալիբովն ասում է, որ «40 կոնգրեսական ավագ Բուշին խնդրել էր ազդել, որպէսզի Գորբաչովն իր հրամանագիրը ԼՂ-ում չգործադրի, բայց մենք (ինքը- Վ. Ա.) կարողացանք Գորբաչովին կոտրել, մենք անցկացրինք հանրաքվե»: Խոսքը վերաբերում է ԽՍՀՄ պահպանման հարցով Գորբաչովի նախաձեռնած հանրաքվեին, որ տեղի է ունեցել 1991թ. մարտի 17-ին: «Ես գիտեի, որ այդ հանրաքվեն մի կարելուր նշանակություն չունի, եթէ ԽՍՀՄ-ը պիտի փլուզվեր, ապա փլուզվելու էր, դրանից (հանրաքվե անցկացնելուց. – Վ. Ա.) պետք է օգտվել», – անկեղծանում է Մութալիբովը եւ ավելացնում, որ հաջորդ օրը հանրաքվեի արդյունքներով ներկայացել է Գորբաչովին եւ ասել, որ «Հայաստանը եւ Վրաստանը հանրաքվե չեն անցկացրել, իսկ ադրբեջանական ժողովուրդը, ձեզնից դժգոհելու արդարացի պատճառներ ունենալով, ԽՍՀՄ պահպանման օգտին ձայն է տվել, իսկ դա իր գինն ունի»: Ի պատասխան Գորբաչովն ասել է՝ «ի՞նչ է ուզածդ», Մութալիբովը պարզաբանել է. «Կա ձեր հրամանագիրը, բայց չի կատարվում: Ղարաբաղը մաքրեք»:

Այնուհետեւ նա ասում է. «Ապրիլին (1991թ.. – Վ. Ա.) Ադրբեջանում տեղակայված զորքերի եւ մեր (Ադրբեջանի. – Վ. Ա.) ՕՄՕՆ-ի (ՆԳՆ հատուկ նշանակության ջոկատների. – Վ. Ա.) միջոցով 24 գյուղ «ավազակներից» (չակերտները մերն են. – Վ. Ա.) ազատեցի: Այդ լեռներում (Արցախի գյուղերում. – Վ. Ա.) հայկական այնպիսի ուժեղ հենակետեր կային, որ պրոֆեսիոնալ բանակին (ԽՍՀՄ զինված ուժերի ստորաբաժանումներին. – Վ. Ա.) պատասխան էին տալիս»:

Այդ կերպ նա կարողանում էր խորհրդային պատժիչ համակարգն օգտագործել, որպէսզի ընդդիմությանը զրկի գլխավոր հաղթաթուղթը՝ «Ղարաբաղը մեզնից խլում են», շրջանառելու չնչին իսկ հնարավորությունից: «1991թ.-ը կդառնա ԼՂ հարցի լուծման վերջին տարին», – հայտարարել էր Մութալիբովը: Այդ պահի դրությամբ Խոջալուն դարձել էր կարելուրագույն հենակետ: Այնտեղ էին բեռնաթափվում ԼՂ առաքվող գնացքները, օդանավակայանը լիովին վերահսկվում էր ադրբեջանական հատուկջոկատայինների կողմից, արգելափակված էր Ստեփանակերտ-Ասկերան խճուղային հաղորդակցությունը:

Մոսկվայում 1991-ի օգոստոսյան խռովությունը, դրան հաջորդած իրադարձությունները Մութալիբովի համար «ամպրոպ էին պարզ երկնքում»: Կարճ ժամանակ անց Լեռնային Ղարաբաղում տեղաբաշխված խորհրդային պատժիչ զորքերը դադարեցին ենթարկվել Վիկտոր Պոլ-

յանիչկոյի հրամանին: Այսպես կոչված՝ «Հանրապետական կազմկոմիտեն» կորցրեց կառավարման լծակները: Պոլյանիչկոն ստիպված էր հեռանալ Ստեփանակերտից, ապա եւ՝ լքել Ադրբեջանն ու վերադառնալ Մոսկվա, որտեղից Բաքու էր գործուղվել 1988-ին: Խորհրդային զորքերի եւ Պոլյանիչկոյի հեռանալուց հետո կտրվեց Խոջալուի ցամաքային կապն Ադրամի եւ Շուշիի հետ: Ադրբեջանի հետ հաղորդակցությունն ապահովվում էր ուղղաթիռների միջոցով: Սկսվեց բնակչության արտահոսքը:

Ինչպես Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» էլման Սամեդովն է վկայել, 1991-ի տարեվերջին «կանանց, ծերերի եւ երեխաների 60-70 տոկոսն արդեն տարհանված էր»: Նույն տարվա դեկտեմբերի կեսերին «Խոջալուի դատախազ» Աթաքիշի Աթաքիշիեւը Մութալիբովին հղած հեռագրում բնակչության տարհանումը համարում էր «անթույլատրելի» եւ պատճառաբանում, որ «դա նշանակում է Խոջալուի հանձնում, իսկ Ղարաբաղի ճակատագիրը վճռվում է Խոջալուում»:

Տեսակետ կա, որ Խոջալուի հարցով Մութալիբովը «բացարձակապես ոչինչ չի նախաձեռնել»: Իրականությունը, սակայն, բոլորովին այլ է: Ձեռնարկվել են ինչպես գյուղում մնացած խաղաղ բնակչությանը տարհանելու, այնպես էլ «Ասկերանի ուղղությամբ միջանցք բացելու», նույնիսկ՝ «Խոջալու-Ասկերան եւ Ադրամ-Ասկերան՝ հանդիպակա» ռազմագործողություն իրականացնելու միանգամայն լուրջ քայլեր:

1992-ի հունվարի կեսերին Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունը, «իրականացված հետախուզական գործողությունների հիման վրա» մշակել է Անվտանգության խորհրդին է ներկայացրել «Խոջալուի խաղաղ բնակչության տարհանման երթուղիների մասին» տեղեկանք: Ըստ այդմ, նպատակահարմար է դիտվել բնակչությանը տարհանել՝ գազատարի գծով դեպի Ասկերանի շրջանի Քյաթուկ գյուղ, ապա, «աջից թողնելով Նախիջեւանիկը»՝ թեքել դեպի Շելլու եւ դուրս բերել Ադրամի մատույցներ: Երկրորդ երթուղին ավելի բարդ է՝ Նորագյուղի մերձակա դաշտով՝ դեպի «Սունջինկա» տեղամաս, ապա՝ հատելով Հիլիս գետակի հունը, աջ՝ դեպի Սարդարաշեն, որին չհասած՝ լեռնագոգավորությամբ դարձյալ դեպի աջ եւ հայկական Փառուխի շրջանցմամբ՝ Ադրամի շրջանի Ալիադալու գյուղ:

Տպավորություն կա, որ այդ «Տեղեկանքի» հասցեատերը միայն անվտանգության նախարարությունը չի եղել: 1992 թ. փետրվարի 26-ին ԱԺԾ (Ադրբեջանի Ժողովրդական ճակատի) մամլո կենտրոնը տարածել է հաղորդագրություն, որ «Խոջալուի 1 800 բնակիչներ պատանդ են տարվել Խնձրիստան, Առաջածոր եւ Վանք հայկական գյուղերը»,

թեև նման փաստ չի արձանագրվել: Նշված բնակավայրերը գտնվում են Ադրբեջանի ԱԱ նախարարության կողմից մշակված՝ Խոջալուի խաղաղ բնակչության տարահանման երկրորդ երթուղու վրա կամ հարեանությանը: Դիտարժան է նաև, որ խաղաղ բնակչության ամենագանգվածային սպանությունները կատարվել են առաջին երթուղու՝ Շելլու ադրբեջանական գյուղին հարող տարածքում, այսպես կոչված «Գարա-գայա» (Սեւ ժայռ) տեղանքի գոգավորությունում:

Ինչ վերաբերում է ռազմական քայլերին, ապա առաջին անգամ «Ասկերանի ուղղությամբ ուշադրություն շեղող հարված հասցնելու» ծրագիր մշակել է Ադրբեջանի պաշտպանության նախարար Մեթիբեյը՝ 1992-ի հունվարի 26-ին, երբ Շուշիում քննարկել է Քարինտակ գյուղը «գրավելու, գրոհայիններին շրջափակելու եւ ոչնչացնելու» ռազմագործողության մանրամասնությունները: Հարվածը պետք է հասցվեր Խրամորթ-Խանապատ-Ասկերան ուղղությամբ՝ գեներալ Դադաշ Ռզաբեյի հրամանատարությամբ:

Մեթիբեյը գրոհել է Քարինտակը, մատնվել խայտառակ անհաջողության, իսկ Ռզաբեյը քայլ չի ձեռնարկել: 10 օր անց, փետրվարի 6-ին Ռզաբեյը, այնուամենայնիվ, հարձակում է կազմակերպել Խրամորթ-Փառուխ ուղղությամբ: Նրան հաջողվել է մասամբ իրագործել առաջադրված խնդիրը, բայց, ինչպես վկայել է այդ պահի դրությամբ ՆԳ փոխնախարար Թահիր Ալիբեյը, «Խանապատի մոտ հանդիպելով անսպասելի ուժեղ դիմադրության», ադրբեջանական զորամիավորումը ստիպված է եղել նահանջել ելման դիրքեր՝ Ադդամի մերձակա Խըղըրլու գյուղ:

Փետրվարի 10-ին Դադաշ Ռզաբեյը ետ է կանչվել Բաքու եւ գործուղվել Գերանբոյի շրջան: Նրա փոխարեն «Ղարաբաղյան գոտում» ադրբեջանական զորքերի հրամանատար է նշանակվել վերոհիշյալ Թահիր Ալիբեյը: Նրա վկայությամբ, փետրվարի 13-ին Ադդամ է հասել նախկին ԽՍՀՄ ՋՈՒ 4-րդ համագորային բանակի 23-րդ դեսանտային դիվիզիայի հրամանատար գեներալ-մայոր Բուդեյկինը: Սույն անձնավորության մասին հարկ է մի փոքր մանրամասնել. նա «Կոլցո» ռազմագործողության ժամանակ անձամբ է գլխավորել Խանլարի շրջանի Գետաշեն եւ Մարտունաշեն հայկական գյուղերի գրոհը, մասնակցել հայ բնակչության կոտորածին եւ բռնատեղահանությանը:

Եւ ահա դրանից գրեթե մեկ տարի անց նա գտնվել է Ադդամում: Կարելի է ենթադրել, որ դա Մութալիբովի խնդրանքով է արվել: Բուդեյկինը Ադդամ էր հասել «ներշնչող զորախմբով»՝ ունենալով 5 միավոր Տ 72 տանկ, համագարկային կրակի 2 «Գրադ» կայանք, այլ հրետանա-

յին միջոցներ եւ զինամթերք: Նրան ուղեկցել է Գյանջա քաղաքի ՆԳ վարչության պետ Էլդար Չասանովը: Հրետանու հրամանատար է նշանակվել գնդապետ Նիչեպուրենկոն: Իր առջեւ կանգնած խնդիրը գեներալ-մայոր Բուդեյկինը բացատրել է հետեւյալ կերպ՝ «Աղդամից Ասկերանով միջանցք բացել եւ ապահովել Խոջալուի խաղաղ բնակչության անվտանգ տարահանումը»:

Բուդեյկինի զորախումբը Աղդամում շրջափակվել է բնակչության եւ Յաղուբ Ռզանեի (մականվանյալ «Ալա Յաղուբ», «Գաթիր Մամեդ», նախկինում՝ քարգործ վարպետ Աղդամի գերեզմանատանը) զինված ջոկատի կողմից: Ջրահատեխնիկան առգրավվել է: Գնդապետ Նիչեպուրենկոյին հաջողվել է «Գրադ» կայանքները տեղափոխել Աղջաբեդի: Բուդեյկինի դեմ գործողությունները կազմակերպել է ԱԺԿ-ից պաշտպանության նախարարություն գործուղված Ֆահմին Հաջիելը: Պատճառաբանությունը մեկն է եղել. «Ռուս գեներալը պատրաստվում է իր հետ բերած տանկերը, հրանոթներն ու զինամթերքը հանձնել հայերին»:

Թահիր Ալիեւի վկայությամբ, Բուդեյկինը, այնուամենայնիվ, ադրբեջանական կողմի մեկ ռազմագործողության մասնակցել է. նրան առաջարկվել է օժանդակել, որպեսզի «Մուղանլու-Կուրոպատկինո ուղղությունից միջանցք բացվի դեպի շրջափակված Ղարադաղլու»: Ալիեւի ասելով, «եթե հաջողվեր գրավել տեղանքի վրա իշխող մի բարձունք, ապա հնարավոր կլիներ պահել Ղարադաղլուն», սակայն առաջին իսկ գրոհի ժամանակ «հայերը նռնականետից խոցել են ադրբեջանական ԲՄՊ-ն (հետեւակի մարտական մեքենա), եւ Բուդեյկինը հրաժարվել է հետագա աջակցություն ցուցաբերելուց»: Փետրվարի 16-ին գեներալ-մայոր Բուդեյկինը զորախմբի հետ հեռանում է Աղդամից՝ տեղում թողնելով 5 միավոր S 72 տանկ, 2 «Գրադ» կայանք, զենք ու զինամթերքը:

Երկու օր անց ԱԺԿ «Ազադլըդ» պաշտոնաթերթում կազմակերպության Մեջլիսի նախագահ Արիֆ Հաջիեւի ստորագրությամբ տպագրվել է Մութալիբովին ուղղված՝ կամավոր հրաժարական տալու կոչը: «Միայն այդ դեպքում է ԱԺԿ-ն երաշխավորում ձեր եւ ձեր հարազատների անվտանգությունը», - ասված էր Հաջիեւի հեղինակությամբ տարածված վերջնագրում: Ի հավելումն, ԱԺԿ-ն սպառնացել է «չխուսափել արյունահեղությունից», եթե Մութալիբովը կամավոր չհանձնի իշխանությունը:

Մութալիբովի լեզիտիմությանն առաջին հարվածը 1991-ի սեպտեմբերի 3-ին, Նախիջեւանի Գերագույն մեջլիսի նախագահ ընտրվելուց

հետո, հասցրել էր Յեյդար Ալիեւը՝ ինքնավարության տարածքում արգելելով նշանակված նախագահական ընտրությունները: Սեպտեմբերի 10-ին, ընտրություններից երկու օր անց, Մութալիբովը «Օստանկինո» հեռուստաընկերության միջոցով զգուշացրել էր, որ «ստիպված կլինի ուշքի բերել Նախիջեւանի ԻՅ Մեջլիսին», ինչին Ալիեւը հակադարձել էր. «Եթե ուժ գործադրվի, ապա Նախիջեւանի 330 000 բնակչությունը կպաշտպանի իր Մեջլիսը, ինչպես ռուսաստանցիները պուտչի օրերին պաշտպանեցին Սպիտակ տունը»: Գերագույն մեջլիսի ընտրություններում հաղթել էր ԱԺԳ-ն, եւ հենց այդ մեծամասնության «ուսերի վրա» էլ Նախիջեւանի ինքնավարության առաջնորդ էր կարգվել Յեյդար Ալիեւը:

Եւ այսպես, ԱԺԳ նախիջեւանյան թեւը վերակենդանացրել էր Յեյդար Ալիեւ քաղաքական գործչին, իսկ կազմակերպության Մեջլիսը՝ Մութալիբովին սպառնացել «չխուսափել արյունահեղությունից, եթե կամավոր չհեռանա»: Նույն օրը, երբ «Ազադլըդ»-ում տպագրվում է ԱԺԳ վերջնագիրը, Մութալիբովը պաշտպանության նախարարի պաշտոնից հեռացնում է Թաջմեդին Մեհթիեւին: Փետրվարի 19-ին նա հեռախոսազրույց է ունենում «Ղարաբաղյան գոտում» ադրբեջանական զինված ուժերի հրամանատար, ՆԳ փոխնախարար Թահիր Ալիեւի հետ եւ վերջինիս առաջարկում գլխավորել ՊՆ-ն:

Ըստ Ալիեւի, ինքը Մութալիբովին առաջարկում է պաշտպանության նախարար նշանակել «պրոֆեսիոնալ զինվորական, գլխավոր շտաբի պետ Շահին Մուսաեւին»: Մութալիբովն Ալիեւին հրավիրում է Բաքու, որտեղ տետ-ա-տետ հանդիպման ժամանակ ասում է, որ «Մուսաեւը վատ է խոսում ադրբեջաներեն, արտաքինից էլ ռուսի մնան է, մարդիկ նրան չեն ընդունում»:

Նույն օրը՝ փետրվարի 20-ին, Շուշիից ստացվում է Ռահիմ Գազիեւի կայծակ-հեռագիրը. «Հայկական խմբավորումները գրոհել են Խոջալուն: «Քաղաքի» (չակերտները մերն են- Վ. Ա.) վրա շարժվում է 20 միավորից բաղկացած զրահատեխնիկայի շարասյուն: Կան զոհեր, վիրավորներ եւ ավերածություններ: Եթե շտապ միջոցներ չձեռնարկվեն, ապա Խոջալուին սպասում է Մալիբեկլուի եւ Ղուշչուլարի ճակատագիրը»:

Դիտարժան է, որ հեռագիրը հասցեագրված է Ադրբեջանի ՆԳ եւ ԱԱ նախարարներին, իսկ պատճենը... նախագահ Մութալիբովին: Փետրվարի 24-ին Թահիր Ալիեւը նշանակվում է Ադրբեջանի պաշտպանության նախարար: 1991-ի նոյեմբերից այդ գերատեսչությունում դա երրորդ ղեկավարի նշանակումն էր: Մինչ այդ Մութալիբովի կարգադրությամբ ՊՆ-ից Ադդամ էին գործուղվել փոխգնդապետներ Ի. Աբդուլլաեւը եւ Թ. Մեհթիեւը:

Նրանց առջեւ դրվել էր «Ասկերանի ուղղությամբ դեպի Խոջալու միջանցքի բացման» ռազմագործողության օպերատիվ ծրագիր մշակելու խնդիր: Աղդամ էր գործուղվել ՆԳՆ հատուկ ջոկատային զորախումբը՝ Ռովշան Ջավադովի գլխավորությամբ, ինչպես նաև ՊՆ առանձին գումարտակը՝ Ասիֆ Մահեռամովի հրամանատարությամբ: Նշվածներից բացի Աղդամում էին կենտրոնացվել ՆԳՆ պարեկա-պահակային ծառայության գունդը, Խուդու Խուդիեւի հրամանատարությամբ մոտոհրաձգային գումարտակը (ՊՆ ենթակայության), ինչպես նաև «տարածքային ինքնապաշտպանության» երեք գումարտակ՝ Ալլահվերդի Բաղիրովի, Շիրին Սիրգուեւի եւ Յաղուբ Ռզաեւի հրամանատարությամբ: Աղդամ էր հասցվել նաև հատուկ զրահագնացք:

Փետրվարի 24-ին Մութալիբովը ձեռնարկում է եւս մի քայլ: Նրա անմիջական ցուցումով Գյանջա եւ ուղեւորվում «Ազերիթիֆազ»-ի (սպառողական կոոպերացիայի հանրապետական միավորման) նախագահ Բաբաեւը եւ «Ղարաբաղում Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցչի» տեղակալ Վելիմամեդովը: Նրանք բանակցություններ են վարում Գյանջայի ռուսական զորամիավորման հրամանատարության հետ՝ խնդրելով «օդից ապահովել Ասկերանի ուղղությամբ դեպի Խոջալու միջանցքի բացման ռազմագործողության հաջողությունը»: Բանագնացները մերժում են ստանում: Ըստ Թահիր Ալիեւի, ռուս զեներալներից մեկն ուղղակի ասում է. «Դուք անկախ երկիր եք, ի՞նչ եք ուզում մեզնից»:

Նույն օրը Բաքվի մերձակա «Ջաբրաթ» ռազմական օդանավակայանում փորձ է արվում օդ բարձրացնել «Կրոկոդիլ» կոչվող երեք մարտական ուղղաթիռներ, սակայն պարզվում է, որ դրանց «զեներատորները հանված են, հնարավոր չէ շարժիչները գործարկել»: Այդուհանդերձ, Աղդամում փետրվարի 24-ին Ֆահմին Չաջիեւի մոտ գումարվում է «ռազմական խորհրդի նիստ՝ բոլոր ստորաբաժանումների հրամանատարների մասնակցությամբ»: Մի վերջին անգամ քննարկվում են «դեպի Խոջալու միջանցքի բացման» ռազմագործողության մանրամասնությունները: Հաջորդ օրվա ժամը 10:00-ն սահմանվում է «հավաքի եւ մարտական թիվ մեկ պատրաստության նախապատրաստման», իսկ 14:30-ը՝ «ընդհանուր գործողության սկզբի» ժամ:

Փետրվարի 25-ի ժամը 10:00-ին զորակայան է ներկայանում միայն Ասիֆ Մահեռահամովը, իսկ Ֆահմին Չաջիեւը հայտարարում է, որ «չունի հարձակման հրաման ստորագրելու լիազորություն»: Ռազմագործողությունը չի սկսվում: Ավելին, զորախմբերը, մանավանդ՝ «տարածքային ինքնապաշտպանության» գումարտակները «ցրվում են մի-

այն հրամանատարներին հայտնի ուղղություններով»: Արժե նկատել, որ Յաղուբ Ռզաելի գումարտակը դիրքավորվում է Խրամորթի մատույցներում, Ալլահվերդի Բաղիրովի մարտիկները հեռանում են դեպի Ալիաղալու, իսկ Շիրին Միրզոբեյևն իր ենթականերին տանում է Շելլու:

Եւս մեկ անգամ հիշեցնենք, որ Ալիաղալուն եւ Շելլուն Աղդամի շրջանի այն բնակավայրերն էին, որ Ադրբեջանի ԱԱ նախարարության կողմից մշակված` «Խոջալուի խաղաղ բնակչության տարահանման մասին» տեղեկանքում նշված են որպես «մարդկանց ընդունման եւ Աղդամ տեղափոխման կետեր»: Ինչ վերաբերում է Խրամորթի ուղղությամբ, ապա այստեղ` Խըղըրլու գյուղի մոտ, փետրվարի 26-ի գիշերը մի խումբ խոջալուցիներ դարձել են հրետանային կրակի զոհ: Խոջալուի դեպքերը հետաքննող խորհրդարանական հանձնաժողովին գնդապետ Նիչեպուրենկոն ասել է, որ «հրետանու կրակը ուղղորդել է Ֆահմին Յաջիելը` հաճախ տալով միմյանց հակասող հրամաններ»:

Փետրվարի 25-ին Մութալիբովը վերջին փորձն է անում` հոգուտ Ադրբեջանի փոխելու կացությունը: Նրա կողմից տրված մանդատով Մոսկվա է թռչում Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջնորդ, ԳԽ պատգամավոր Արազ Ալիզադեյն: Նույն օրվա ժամը 18:00-ին Ալիզադեյն ընդունում է ՌԴ նախագահ Ելցինը: Ալիզադեյն խնդրում է Ստեփանակերտից դուրս բերել 366-րդ գունդը, որի «սպաները եւ զինվորները ԼԴ-ում հրկիզում են ադրբեջանական գյուղերը, սպանում խաղաղ մարդկանց»: Ելցինը Ալիզադեյն ուղարկում է ԱՊԳ ՄԶՈՒ (միացյալ զինված ուժեր) հրամանատար Շապոշնիկովի մոտ` խոստանալով, որ «կկարգադրի Ստեփանակերտից դուրս բերել գունդը»:

Մարշալ Շապոշնիկովը պահանջում է, որպեսզի իրեն զանգի Մութալիբովը: Ալիզադեյն կառավարական հեռախոսով զանգում է Մութալիբովին: Վերջինս «կես թույն անց կապվում է Շապոշնիկովի հետ»: Մարշալը հարցնում է` «ինչպիսի՞ն է Ադրբեջանի պատասխանը ԱՊԳ ՄԶՈՒ-ին միանալու հարցում»: Մութալիբովը պատասխանում է` «բացասական»:

-Դեհ, ի՞նչ, ինձ մնում է կատարել նախագահ Ելցինի հրամանը, հենց այսօր իսկ կկարգադրեն, որ գունդը դուրս բերվի Ստեփանակերտից, - ասում է Շապոշնիկովը: Արդեն օդանավակայանից Ալիզադեյն զանգում է Բաքու եւ ասում մի բառ` «հաղթանակ»: Այսպես է իրավիճակը ներկայացնում Ջարդուշտ Ալիզադեյն «Երկրորդ հանրապետության վախճանը» գրքում: Խնդրի վերաբերյալ այլ տեղեկատվության մենք չենք տիրապետում, բացի` որ փետրվարի 23-ից Բաքվում է գտնվել ոչ ան-

հայտ գեներալ Բորիս Գրոմովը:

Նա, խորհրդային զորքերն Աֆղանստանից դուրս բերելուց հետո, նշանակվել էր ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի հրամանատար եւ զգալի դերակատարություն ունեցել ԼՂ-ում հայ բնակչության դեմ իրականացված պատժիչ գործողություններում: Ըստ որոշ աղբյուրների, 92-ի փետրվարին Գրոմովը Բաքու էր գործուղվել Ելցինի կողմից, որպեսզի Մութալիբովի հետ քննարկի Ադրբեջանի տարածքում նախկին խորհրդային ՋՈՒ գույքի, տեխնիկայի եւ զինամթերքի «արդարացի բաժանման հետ կապված հարցերը»: Բացառված չէ, որ հենց նա էլ միջնորդած լինի, որպեսզի Ելցինն ընդունի Մութալիբովի հատուկ բանազնաց Արագ Ալիզադեի:

Ամեն դեպքում հավատ չի ներշնչում, որ նույն օրը մեկնելով Բաքվից, Ալիզադեն առանց «նախապատրաստական աշխատանքների» արժանանար նման բարձր մակարդակի ընդունելության, եւ կողմերն արագ համաձայնության գային Ստեփանակերտից 366-րդ գնդի դուրսբերման խնդրում: Մանավանդ, որ ԱՊՀ ՄՁՈՒ-ին միանալու մասին Շապոշնիկովի առաջարկությունը, որ ակնհայտորեն Ելցինից էր նախաձեռնվել, Մութալիբովը մերժել է: Այնուամենայնիվ, փետրվարի 25-ին Աղդամում տապալվել-նենգադուլի է ենթարկվել «Ասկերանի ուղղությամբ դեպի Խոջալու միջանցքի բացման» ռազմագործողությունը: Նույն օրվա վերջին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը սկսել են «Խոջալու» ռազմագործողությունը:

Ըստ Աղդամում մշակված օպերատիվ ծրագրի, Ասկերանի ուղղությամբ գրոհի հաջողության երաշխիքներից մեկն էլ պիտի լիներ Շուշիից Ստեփանակերտի զանգվածային հրթիռահրետակոծումը, ինչը պիտի խուճապ առաջացներ, սահմանափակեր ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի հնարավոր գործողությունները Խոջալուի ուղղությամբ: Ավելի վաղ, փետրվարի կեսերին Բաքվում մշակված մեկ այլ օպերատիվ ծրագրի համաձայն, նախատեսվում էր, որ ադրբեջանական ուժերն Ասկերանը պիտի գրոհեն երկու` Խոջալուի եւ Աղդամի ուղղությունից, այսպես կոչված «հանդիպակա մերձենալու» սկզբունքով: Այդ դեպքում եւս Շուշիին վերապահված էր Ստեփանակերտը հրթիռահրետակոծելու դերակատարություն:

Փետրվարի 25-ին Շուշիից արձանագրվե՞լ է Խոջալուի գրոհի փաստը: Անշուշտ: Խոջալուի մասին առաջին տեղեկությունը Բաքվում ստացել է ՆԳՆ հերթապահ բաժինը` Շուշիից, հեռախոսագրով: Այդուհանդերձ, ոչ Խոջալուն գրոհող հայկական ուժերի, ոչ Ստեփանակերտի ուղղությամբ Շուշիից մեկ հրթիռ իսկ չի արձակվել, թեեւ տեղի զին-

վորական պատասխանատուներն իրենց տրամադրության տակ նման միջոցներ, այդ թվում՝ համազարկային կրակի «Գրադ» կայանքներ, ունեցել են եւ կարող էին զանգվածային հրետակոծության ենթարկել նույնիսկ Ասկերանը, Խոջալուի հարեւանությամբ գտնվող հայկական գյուղերը:

«Գրադ» կայանքներ, ինչպես վերելում ասվեց, եղել են նաեւ Աղդամում, որտեղից նույնպես կարող էին «դժոխքի վերածել» ոչ միայն Ասկերանը, այլեւ Ստեփանակերտը: Նման փաստի ոչ ոք տեղյակ չէ: Տվյալ դեպքում մենք վերացարկվում ենք Խոջալուի ռազմագործողության մասին մեր պատկերացումներից եւ դատում տրամաբանորեն. եթե Աղդամի եւ Շուշիի զինվորականությունը սառնասիրտ դիտորդ չէր, ապա ինչո՞ւ չձեռնարկեց հայկական ուժերի ուշադրությունը շեղող, որեւէ քայլ:

Ոչ ոք ոչինչ չի ձեռնարկել: Բոլորն ակնհայտորեն սպասել են «ինչ-որ բանի»: Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդովը վկայել է, որ գրոհից ընդհանրապես անց «Ադրբեջանի բոլոր ռադիոկայաններին (հավանաբար նկատի է ունեցել զինվորական կապի հանգույցները) տեղեկացրել է այդ մասին, հնչեցրել պայմանավորված ազդանշանը»: Նրան չե՞ն լսել: Բացառված է: Խոջալուի «դատախազ»-ը փետրվարի 25-ին Աղդամից երկրորդ «սպառնալի» հեռագիրն է հղել Մութալիբովին: Ավելի վաղ Խոջալուից հեռացել էր «ՆԳ շրջբաժնի պետը»: Փետրվարի 24-ին Էլման Մամեդովը հեռախոսազրույց է ունեցել Աղդամում գտնված՝ Ադրբեջանի ԳԽ փոխնախագահ Թամեռլան Գարաբեյի հետ: «Ամուր մնացեք, վաղն Ասկերանով միջանցքը կբացվի», - վստահեցրել է Գարաբեյը:

Բայց ամենաարտառոցն այն է, որ փետրվարի 16-ին Խոջալու-Քյաթուկ-Շելլու ճանապարհով Աղդամ են հասել Խոջալուի բնակիչներ Օրուջեւը եւ Մուսաեւը: Սա Ադրբեջանի ԱԱ նախարարության մշակած՝ Խոջալուի խաղաղ բնակչության տարհանման առաջին երթուղին է: Աղդամում նրանք ընդունելության են եղել ՊՆ-ում ԱԺՃ ներկայացուցիչ Ֆահմին Չաջիեւի մոտ: Մուսաեւը խոստացել է նույն երթուղով՝ հակառակ ուղղությամբ առաջնորդել «Խոջալուի օգնության խմբին»: Երկօրյա քննարկումներից հետո նման խումբ չի ձեւավորվել: Օրուջեւին եւ Մուսաեւին միացել է եւս երեք «խոջալուեցի», եւ նրանք փետրվարի 18-ին վերադարձել են Խոջալու՝ «իրենց հետ ունենալով մթերք եւ 3 000 փամփուշտ»:

Օրուջեւի եւ Մուսաեւի երթուղարձը չի՞ ունեցել, արդյոք, զուտ հետախուզական նպատակ՝ ստուգելու խաղաղ բնակչության տարհան-

ման երթուղու հուսալիությունը: Եւս մեկ անգամ հիշեցնենք, որ Խոջալուի բնակչության ամենազանգվածային սպանությունները կատարվել են Օրուջեւի եւ Մուսաեւի անցած ճանապարհի՝ Շելլու գյուղի մերձակա հատվածում: Այդ երկուսի «բացած արահետը», այսպիսով, չի՞ դարձել ծուղակ փետրվարի 26-ի վաղ լուսաբացին «Քարա-գայա» հասած խոջալուցիների համար: Ո՞վ կարող էր իմանալ, որ հենց այդ՝ հայկական Նախիջեւանիկ գյուղից անտեսանելի գոգահովտով են անցնելու Խոջալուից դուրս եկած մարդիկ: Անշուշտ՝ նրանք, ովքեր մի շաբաթ առաջ Աղդամում հանդիպել էին Օրուջեւին եւ Մուսաեւին, վստահեցրել, որ Խոջալու-Քյաթուկ-Շելլու երթուղին օգտագործելի է:

Ի՞նչ է կատարվել փետրվարի 26-ից հետո: Փետրվարի 28-ին Այազ Մութալիբովի խնդրանքով Անդրկովկասի ԶՕ հրամանատարությունը զինվորական ուղղաթիռներ է տրամադրել ադրբեջանական կողմին: Աղետի տեսարանները նկարահանել է Չինգիզ Մուստաֆաեւը: Նախ՝ ուղղաթիռի լուսանցույցից, ապա՝ տեղում: Այդ մասին նույն օրը նա տեղեկացրել է Մութալիբովին: «Ոչ ոքի ոչ մի բան չասես, Չինգիզ, քեզ կսպանեն», - եղել է Մութալիբովի արձագանքը: Նույն օրերին ԱԺԾ մամուլ կենտրոնը տարածում է Մութալիբովին դավաճանության մեջ մեղադրող հաղորդագրություններ: Փորձ է արվում կազմակերպելու բողոքի զանգվածային ցույցեր:

Մարտի 2-ին մոսկովյան մամուլում տպագրվում է Մութալիբովի հարցազրույցը, որտեղ նա, վկայակոչելով իր հեռախոսազրույցը ԼՂՀ ԳԽ նախագահ Արթուր Մկրտչյանի եւ ՆԳ նախարար Արմեն Իսազուլովի հետ, ասում է, որ «հայերն ամենայն հավանականությամբ միջանցք թողել են» եւ որ «դա (խաղաղ բնակչության սպանությունները) կազմակերպել են» իր քաղաքական հակառակորդները, որպեսզի «Ադրբեջանում անկայունություն ստեղծելու միջոցով տիրանան իշխանությանը»: ԱԺԾ-ն խորհրդարանի՝ Միլլի մեջլիսի, արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջ է դնում: Մութալիբովն իրեն հավատարիմ մեծամասնության միջոցով առժամանակ կարողանում է չեզոքացնել սպառնալիքը:

Մարտի 5-ին, սակայն, հակազդելու բոլոր օրինական հնարավորություններն սպառվում են, երբ Միլլի մեջլիսի նախագահի պաշտոնից հրաժարականի մասին դիմում է ներկայացնում էլմիրա Գաֆարովան՝ պատճառ բերելով «առողջական ծանր վիճակը»: Արտահերթ նստաշրջանին ներկա գտնված՝ ամերիկացի լրագրող Թոմաս Գոլցը վկայում է, որ «Գաֆարովան նման չէր հիվանդի, ընդմիջումներին աշխույժ կատակում էր պատգամավորների հետ»: Ակնարկը հասկանալի է. ինչ-որ

մեկը նրան համոզել էր, որ արտահերթ նստաշրջան հրավիրելու միակ հնարավորությունը հրաժարականի մասին դիմում տալն է, եւ նա ընդառաջել էր:

Էլմիրա Գաֆարովան Յեյդար Ալիեւի կոմունիստական «գահակալության» շրջանի քաղաքական դեմքերից էր: Այդ շրջանում է, որ նա՝ Ադրբեջանի կոմերիտմիության ԿԿ 1-ին քարտուղարի պաշտոնից առաջ է քաշվել Ադրկոմկուսի ԿԿ մշակույթի բաժնի վարիչի (1970թ.), Բաքվի քաղկոմի 1-ին քարտուղարի (1971թ.), ԱդրեսՄՅ լուսավորության նախարարի (1980թ.), իսկ հետագայում՝ արտաքին գործերի նախարարի (1983թ.), Նախարարների խորհրդի նախագահի տեղակալի (1987թ.), Գերագույն խորհրդի նախագահության նախագահի (1989թ.) պաշտոնների, իսկ Ադրբեջանի երրորդ հանրապետության օրոք ընտրվել Միլլի մեջլիսի նախագահ (1991թ.): 1990-ի հունվարյան դեպքերից հետո Գաֆարովան կտրուկ բողոք էր հայտնել Բաքու խորհրդային զորքեր մտցնելու եւ արտակարգ դրություն հայտարարելու դեմ: Այդ կերպ նա «վաստակել» էր բարձրագույն իշխանության մեջ մնալու իրավունք Մութալիբովի օրոք եւս: Դիտել տամք, որ Գաֆարովայի կողմից Գորբաչովին դատապարտող հայտարարություն արվել էր Մոսկվայում Ադրբեջանի մշտական ներկայացուցչությունում Յեյդար Ալիեւի նույն բովանդակությամբ անցկացված մամուլի ասուլիսից հետո: Այս իրողությունը, գուցե, լույս սփռի Միլլի մեջլիսի նախագահի պաշտոնից հրաժարվելու նրա քայլի քաղաքական շարժառիթների վրա:

Այսպես, թե այնպես, արտահերթ նստաշրջանը հրավիրվում է: Գաֆարովայի հրաժարականն ընդունվում է գրեթե առանց քննարկման: Նստաշրջանն ընտրում է Միլլի մեջլիսի նոր նախագահ: Այդ պաշտոնն ստանձնում է բժշկական ինստիտուտի ռեկտոր Յադուբ Մամեդովը, որը Բաքվում «դոլար Յադուբ» անունով էր հայտնի: Նրա թեկնածությունն առաջարկում է... Մութալիբովը: Կարծես թե ամեն ինչ պիտի ընթանար ըստ կանխածրագրվածի: Սակայն Յադուբ Մամեդովն անսպասելի քննարկման է դնում Խոջալուի իրադարձությունների հարցը: Աժճ-ն ներկայացնող պատգամավորների խումբը պահանջում է «ցուցադրել ֆիլմը»:

Սուր բանավեճերից հետո Յադուբ Մամեդովը Միլլի մեջլիսի նախագահի իրավունքով միանձնյա որոշում է, որ ֆիլմը ցուցադրվի: Ըստ Գոլցի, «նստաշրջանի դահլիճը մթնեցվել է, եւ չորս մոնիտորներ, որ տեղադրված էին քվեարկությունների արդյունքները ցուցադրելու համար, միաժամանակ սկսել են ներկայացնել սարսափելի պատկերները»: Երբ լույսերը վառվել են, դեպի ամբիոն են նետվել Աժճ-ն ներկա-

յացնող պատգամավորները: Յնչել է Մութալիբովի հրաժարականի պահանջը:

Որ այս ամենը թատերականացված ներկայացում էր, վկայում է փաստը. «Ֆիլմի» ավարտից ընդամենը անց խորհրդարանի շենքի մոտ հավաքվում է մի քանի հարյուր հոգանոց ամբոխ, հիմնականում՝ կանայք, որոնց առաջնորդում էր ԱԺԾ-ական եւ Աբուլֆազ Էլչիբեյի մտերմուհի Խանում Խալիլովան (ի դեպ, ներկայումս մշտապես բնակվում է Թուրքիայում, հասել է Անկարայի համալսարանի պրոֆեսորի կոչման): Ամբոխը միայն մի բառ է վանկարկում՝ «իս-տե-ֆա»՝ հրաժարական:

Կարճ ժամանակ անց խորհրդարանի շենք են մտնում «երկու ժողովրդական գրող»: Մութալիբովի հետ առանձնազրույցում նրանք վերջինիս «համոզում են խուսափել նոր արյունահեղությունից եւ կանավոր հեռանալ»: Քիչ հետո նրանց է միանում մաեւ Ադրբեյջանի հոգեւոր առաջնորդ Շեյխ ուլ Իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն՝ դարձյալ նույն հորդորով: Ժամեր անց «մահու չափ գունատ Մութալիբովը, ամբիոնի մոտ սայթաքելով», մոտենում է խոսափողին եւ հայտարարում, որ հրաժարվում է նախագահի պաշտոնից: Ըստ օրենքի հայտարարվում են հանրապետության նախագահի արտահերթ ընտրություններ:

«Մութալիբովի հրաժարականից կարճ ժամանակ անց ինձ զանգահարեց Յեյդար Ալիեւը եւ ասաց, որ իր տեղեկություններով Էլչիբեյը պատրաստվում է նախագահի թեկնածու առաջադրվել: Ես շտապ թռա Բաքու, ինձ մոտ կանչեցի Էլչիբեյին եւ հետաքրքրվեցի՝ ճիշտ է դա: Նա երդվեց, որ երբեք չի առաջադրվի, որ այդ տեղը պատկանում է Յեյդար Ալիեւին: Երբ այդ մասին ասացի Յեյդար Ալիեւին, նա առարկեց, թե ԱԺԾ-ից իր տեղեկատու անձը կատարյալ վստահություն է վայելում», - հետագայում վկայել է Լալա-Շովքեթ Յաջիեւան:

Պարզապես մեկնաբանություն են հայցում «ինձ զանգահարեց Յեյդար Ալիեւը», «ես շտապ թռա Բաքու», մանավանդ՝ «ինձ մոտ կանչեցի Էլչիբեյին», «նա երդվեց, որ երբեք չի առաջադրվի, որ այդ տեղը պատկանում է Յեյդար Ալիեւին» ձեւակերպումները: Ո՞վ է Լալա Շովքեթ Յաջիեւան: Մասնագիտությամբ՝ բժշկուհի, որ երկար տարիներ ապրել է աշխատել է Մոսկվայում: Բավական լուրջ կապեր է ունեցել Ռուսաստանի այսպես կոչված «դեմոկրատական ուժերի» եւ Բորիս Էլցինի մերձավոր շրջապատի հետ:

1990թ. հունվարի 21-ին նա է Մոսկվայում Ադրբեյջանի մշտական ներկայացուցչությունում գերագանցապես արտասահմանյան լրագրողների հետ կազմակերպել Յեյդար Ալիեւի մամուլի ասուլիսը, այն բացել Գորբաչովի հասցեին չափազանց սուր գնահատականներ պա-

րունակող ներածականով: Չարկ է հիշեցնել, որ արդեն լինելով Ադրբեյջանի նախագահ, Չեյդար Ալիևը «ճշմարտության պահ» հաղորդաշարի հեղինակ Կարաուլովի հարցին, թե «ճիշտ է արդյոք, որ ձեզ զանգահարել է Միխայիլ Գորբաչովը», խորհրդավոր ժպիտով պատասխանել է՝ «այո» եւ որոշ մանրամասնություններ ներկայացրել:

Ըստ այդմ, զանգը եղել է 1990-ի հունվարի 19-ին, եւ Գորբաչովն ասել է. «Չեռացրեք Բաքվի կենտրոնից ձեր մարդկանց»: Ալիևը պատասխանել է. «Իսկ դրա համար ես լիազորություններ չունեմ»: Ջարդուշտ Ալիզադեն համարում է, որ դրանով Ալիևն առաջարկել է իրեն նշանակել Ադրկոմկուսի ԿԿ առաջին քարտուղար, ինչին Գորբաչովը, բնականաբար, չի արձագանքել: Չայտնի է, որ Գորբաչովի զանգի օրը Բաքվի կենտրոնը գրավել էին ԱԺճ պարագլուխները եւ պահանջում Ադրկոմկուսի ԿԿ առաջին քարտուղար Աբդուռահման Վեզիրովի հրաժարականը: Չպե՞տք է ենթադրել, որ ցուցարարները դա արել են հանուն Չեյդար Ալիևի կամ ուղղորդված էին նրա կողմից:

Ալիևի մամուլի ասուլիսի կազմակերպումը Լալա-Շոյքեթ Չաջիեայի կողմից, իսկ արդեն 1992-ին Ալիևի զանգը նրան եւ դժգոհությունն էլչիբեյից, հատկապես Չաջիեայի կոշտ արտահայտությունը ԱԺճ առաջնորդի հասցեին՝ «ինձ մոտ կանչեցի էլչիբեյին» եւ այլն, չե՞ն վկայում, որ նա է եղել Չեյդար Ալիևի եւ ԱԺճ առաջնորդի միջեւ բանազնացը: Բայց դա դեռ ամբողջը չէ. Չեյդար Ալիևի անհանգստությունը, որ «էլչիբեյը նախագահի թեկնածու է առաջադրվում», վերջինիս խոսքը, որ «այդ տեղը (նախագահի պաշտոնը) պատկանում է Չեյդար Ալիևին» վկայություն չեն, որ Մութալիբովի պաշտոնանկությունը կազմակերպելով՝ ԱԺճ-ն եւս մի փորձ է արել՝ Չեյդար Ալիևի առաջ բացելու բարձրագույն իշխանության վերադարձի ճանապարհը: Իսկ Մութալիբովի հրաժարականի համար, ինչպես փետրվարի 18-ին գրել էր «Ազադլըդ»-ը, եթե դա կամավոր տեղի չունենա, «ԱԺճ-ն պատրաստ էր չխուսափել արյունահեղությունից»: Խոջալուի խաղաղ բնակչությունից 181 հոգու դաժան սպանությունն արդյոք խոստացած արյունահեղությունը չէր:

Կարծիքներ կան, որ էլչիբեյն իրոք չի ցանկացել առաջադրվել: Նույնիսկ ասել է. «ճովոդյունով նախագահ կդարձնեք, կռկոռցով կտապալեք», բայց նրան «ընտրության հնարավորություն չեն տվել»: Խանգարել է, թերեւս, նաեւ այն, որ Մութալիբովից հետո Յադուբ Մամեդովի հեղինակությունը ճանաչած՝ Միլլի մեջլիսի մեծամասնությունը մերժել է նախագահի տարիքային ցենզի մասին դրույթն ուժը կորցրած ճանաչելու գաղափարը: Իսկ Չեյդար Ալիևը թեկնածու կարող էր առաջադր-

վել միայն համապատասխան օրենսդրական փոփոխությունից հետո. ժամանակին Մութալիբովը հոգացել էր, որպեսզի 65 տարին լրացած անձը չունենա նախագահի թեկնածու առաջադրվելու իրավունք: Իսկ 1992- ին Յեյդար Ալիևը 69 տարեկան էր:

Մայիսի 9-ին ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը գրավեցին Շուշի: Արդեն մայիսի 14-ին Ադրբեջանի Միլլի մեջլիսը պաշտոնում վերականգնեց Այազ Մութալիբովին: Յաջորդ օրը ԱժԾ կենտրոնակայանի մոտ բողոքի ցույց կազմակերպվեց: ՆԳՆ հատուկջոկատայինների հրամանատար Ռովշան Ջավադովը, նույն ինքը, որ փետրվարի 25- ի ժամը 10:00-ին չէր ներկայացել Ադդամի զորակայան, հայտարարեց, որ «չի կատարի Այազ Մութալիբովի եւ ոչ մի հրաման»: ԱժԾ պատասխանատուները հենց իրենց գրասենյակից հեռախոսազրույց կազմակերպեցին Յեյդար Ալիևի հետ: Խոսակցությունը բարձրախոսների միջոցով լսելի դարձավ բոլորին.

-Յեյդար բեյ, ժողովուրդը հավաքվել է մտադիր է գրոհել Միլլի մեջլիսն ու նախագահի նստավայրը` ի նշան բողոքի Մութալիբովի ապօրինի վերադարձի դեմ: Ինչպե՞ս եք դրան վերաբերվում:

-Ես համերաշխ եմ ժողովրդի հետ եւ ողջունում եմ ԱժԾ քայլերը:

-Յեյդար բեյ, ժողովուրդը զգուշանում է երկու բանից` կմիջամտե՞ն ռուսական զորքերը, Մութալիբովը ուժ կկիրառի՞:

- Ադրբեջանն ինքնիշխան պետություն է, ռուսական զորքերն իրավունք չունեն խառնվելու մեր պետության ներքին գործերին: Ինչ վերաբերում է Մութալիբովին, ապա նա վախկոտ է եւ կփախչի` հենց որ սկսեք ձեր երթը:

Ստանալով Ադրբեջանի «նահապետի» օրհնությունը, ամբոխը շարժվում է դեպի խորհրդարան եւ նախագահի նստավայր: Ցուցարարների շարքերում զինվորականները մեծամասնություն էին: Շատերն օդ էին կրակում: Առջեւից շարժվում էր մի զրահամեքենա` աշտարակին խոշոր տրամաչափի գնդացիր: Նույն օրվա վերջին Այազ Մութալիբովը ռուսական ռազմական օդանավով հեռանում է Ադրբեջանից: Նա վերադարձավ 20 տարի անց: Նախ` որդու հուղարկավորության առիթով, ապա` նշտապես: Մութալիբովը հայտարարեց, որ երբեք չի զբաղվի քաղաքականությամբ եւ հրաժարվեց Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահի պաշտոնից: Նրան տրվեց առանձնատուն, նախագահական թոշակ, սպասարկող ավտոմեքենա:

Ադդամի զորակայան չներկայացած զինվորականներից Ալլահվերդի Բադիրովը եւ Շիրին Միրզոեւը զոհվել են 1992-ի հունիսին: Երկուսն

էլ՝ աղբբեջանական կողմի վերահսկողության տարածքում, ականի պայթյունից: Նրանք հետմահու արժանացել են Աղբբեջանի ազգային հերոսի կոչման: Նույն կոչմանը, դարձյալ հետմահու, արժանացել է նաեւ Չիմզիգ Մուստաֆաեւը, որն սպանվել է գրեթէ այն տեղում, ուր կատարել է Խոջալուի զոհված բնակիչների դիակների նկարահանումը: Յաղուբ Ռզաեւը ձերբակալվել է Խոջալուի դէպքերից մեկ տարի անց եւ «հանկարծամահ եղել» Աղբբեջանի ԱՄ նախարարության քննչական մեկուսարանում:

Իշխանության վերադառնալով, Յեյդար Ալիեւը Թահիր Ալիեւին նշանակել է Աղբբեջանի մաքսային ծառայության պետ: Թահիր Ալիեւը ներկայումս Աղբբեջանի ՁՈՒ գեներալ է: Յեյդար Ալիեւը գեներալ-մայորի կոչման է արժանացրել նաեւ Շուշիի պարետ Էլբրուս Օրուջեւին, որի դեմ նախկինում քրեական գործ էր հարուցվել «Շուշին հանձնելու մեղադրանքով»: Ռովշան Ջավադովը Յեյդար Ալիեւի դեմ «կազմակերպած պետական հեղաշրջման» մեղադրանքով 1995-ի մարտին արգելափակվեց ոստիկանության հատուկ ջոկատայինների զորանոցում, իսկ երբ արդեն դուրս էր գալիս, որպեսզի հանձնվի, վիրավորվեց դիմահար կրակոցով:

Ըստ որոշ աղբբուրների, «կրակողը Սաֆար Աբիեւն է եղել՝ Աղբբեջանի 18 տարվա պաշտպանության անփոփոխ նախարարը: Բժիշկներին «չհաջողվեց փրկել Ջավադովի կյանքը», նա ՆԳՆ կենտրոնական հոսպիտալում մահացավ «ծանր արյունահոսությունից», թեւ վիրավորվել էր ոտքից: 18 տարի անընդմեջ Աղբբեջանի խորհրդարանի պատգամավոր է «Խոջալուի գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդովը: Պատմության հեզմանքը չէ՞, որ այսօր աշխարհում «Խոջալուին՝ արդարություն» շարժումը կազմակերպում եւ ուղղորդում է Յեյդար Ալիեւի թոռնուհին՝ Իլիամ Ալիեւի դուստր Լեյլա Ալիեւան, որ նաեւ բանաստեղծություններ է գրում «սիրելի պապիկի զգայուն սրտի եւ նուրբ զգացմունքների» մասին:

Թոմաս Գոլց. Խոջալուի «ցեղասպանության» կնքահա՞յր

Խոջալուի դեպքերի մասին միջազգային մամուլի առաջին նյութը նա է հեղինակել: Նրա ստորագրությամբ հոդված «Վաշինգտոն պոստը» տպագրել է 1992 թ. փետրվարի 27-ին: Ահա. «Ձավթված անկլավի՝ Լեռնային Ղարաբաղի, արեւելքում գտնվող այդ քաղաքի, գլխավոր մզկիթի սպասավորն ասում է, որ այսօր (փետրվարի 27-ի՞նչ – Վ. Ա.) հողին է հանձնվել 17 դիակ, որ դուրս են բերվել չորեքշաբթի հայ զինվորների կողմից գրավված քաղաքից: Ստեփանակերտից՝ անկլավի (ԼՂ-Վ.Ա.) մայրաքաղաքից, հյուսիս գտնվող 6 000 բնակչությամբ Խոջալու քաղաքից փախստականները հայտնել են, որ հարձակման ժամանակ սպանվել է 500 մարդ՝ ներառյալ կանայք եւ երեխաներ:

Անհնար է եղել մոտավորապես հաշվել զոհերի թիվը (°- Վ. Ա.): Աղղամի մզկիթի առաջնորդ սեիդ Սադիխովն ասում է, որ Խոջալուից փախստականները կազմել են 477 զոհի ցուցակ: Ադրբեջանի պաշտոնական ներկայացուցիչները (ովքե՞ր. - Վ. Ա.) հայտնել են Խոջալուում 100 սպանվածի մասին այն դեպքում, երբ Երեւանում խոսում են (ովքե՞ր. - Վ. Ա.) հարձակման ժամանակ սպանված ընդամենը 2 ադրբեջանցու մասին: Իրազեկ (ո՞ր. – Վ. Ա.) աղբյուրներից հայտնի է դարձել, որ կառավարությունը (Ադրբեջանի. – Վ. Ա.) վախենում է, որ ժողովուրդը, իմանալով զոհերի իրական թվի մասին, կշրջվի իր (կառավարության. – Վ. Ա.) դեմ:

Այսօր (փետրվարի 27-ի՞նչ. - Վ. Ա.) այստեղ տեսած 7 սպանվածից երկուսը երեխայի, երեքը կնոջ դիակ էր, որոնցից մեկն սպանվել է մոտ տարածությունից կրճքին արձակված կրակոցից: Աղղամ քաղաքի հիվանդանոցում բուժվող այլ 120 փախստականների մոտ հայտնաբերվել են դանակահարության (?- Վ. Ա.) բազմաթիվ վերքեր: Ռախսա Ասլանովան (մենք այս անվանը դեռ կանդրադառնանք. – Վ. Ա.), որ կարողացել է Աղղամ հասնել չորեքշաբթի երեկոյան, պատմեց, որ Խոջալուում երեքշաբթի գրոհած հայերը «կրակում էին, կրակում էին, կրակում էին»: Նրա ամուսինը եւ փեսան սպանվել են, աղջիկը՝ անհայտ կորել: Լեռնային Ղարաբաղի լեռներով (°- Վ. Ա.) այստեղ (Աղղամ. - Վ. Ա.) հասած փախստականների հետ էին նախկին Խորհրդային Միության ՆԳՆ երկու թուրքմեն զինվորներ: Նրանք հայ սպաների կողմից ծեծվել են այն բանի համար, որ մուսուլման են եւ ստիպված են եղել փախչել Խոջալու՝ անցած ուրբաթ:

Այդ երկու դասալիքները պնդում են, որ իրենց նախկին զորամասը՝

366-րդ դիվիզիան (° Վ. Ա.), աջակցել է հայ զինվորներին: Նրանք պատմել են, որ փորձել են կանանց եւ երեխաներին (խոջալուեցի. - Վ. Ա.) օգնել. «Մենք մի խմբի ուղեկցում էինք սարերով, երբ հայերը հայտնաբերեցին մեզ եւ կրակ բացեցին», - ասել է Աղամեհմեթ Մուֆիֆը՝ դասալիքներից մեկը, եւ ավելացրել, որ «12 մարդ (այդ խմբի՞ց. - Վ. Ա.) սպանվել է»: (*տես՝ <http://www.erevangala500.com/booke/>*)

Սկսենք վերջից. Թոմաս Գոլցը «վկայում է», որ խոջալուից Աղդամ են հասել երկու թուրքմեն դասալիքներ: Նա, սակայն, վերջիններիս համարում է «նախկին Խորհրդային Միության ՆԳՆ զինվորներ»: Մինչդեռ հայտնի է, որ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գործերը ԼՂ-ից դուրս են բերվել 1991-ի աշնանը: Ամերիկա-կանադացի «լրագրողը» 366-րդ զորամասն անվանում է «դիվիզիա», թեեւ այն ոչ լրիվ կոմպլեկտավորված գունդ էր: Նա ասում է, որ երկու թուրքմեն զինվորները «խոջալու են փախել անցած ուրբաթ»: Եթե ճիշտ է, որ 1992-ի փետրվարի 26-ը եղել է չորեքշաբթի, ապա դրան նախորդած ուրբաթը կլինեի փետրվարի 21-ը: Կարող էին այդ օրը Ստեփանակերտի 366-րդ գնդի երկու թուրքմեն զինվորներ դասալքել եւ մուտք գործել խոջալու: Իհարկե՝ ոչ: Այն պարզ պատճառով, որ, ինչպես ասված է Ադրբեջանի ԱԱ նախարարության «Տեղեկանքում» (*տես՝ www.erevangala500.com*) «խոջալուի ամբողջ շրջակայքում, բացառությամբ Ասկերանի ուղղության, տեղակայված են հայկական պահակակետեր»: Սույն փաստաթուղթը կազմվել է փետրվարի 11-ին:

Բացի այդ, նույն հղումով կարելի է ծանոթանալ երկու դասալիք զինվորների, որոնցից մեկն ազգությամբ ղազախ է, մյուսը՝ ռուս, «ցուցմունքներին», որ «դասալքելով զորամասից, իրենք հասել են Շուշի, որտեղից Լաչին-Ղուբաթլու ճանապարհով տեղափոխվել են Բաքու»: Մենք, իհարկե, հավատ չենք ընծայում նաեւ այդ «ցուցմունքներին», քանի որ բացարձակապես անհնար էր, որպեսզի Ստեփանակերտում տեղակայված գնդի զրահատեխնիկան շահագործելու համար «հրամանատարությունը մեխանիկ-վարորդներ հավաքագրեր Նախիջեւանի զորամասից եւ նրանց Ստեփանակերտ հասցներ Գյանջայից»: Բայց Թոմաս Գոլցի «վկայակոչած երկու թուրքմեն դասալիքների» եւ հիշյալ «ադրբեջանական կողմն անցած զինվորների ցուցմունքների» պատմությունը գալիս է հուշելու, որ խոջալուի ռազմագործողությանը 366-րդ գնդի «մասնակցության» առասպելը ընդհանուր «կոնցեպցիայի» բաղադրիչներից է, որը շրջանառության մեջ է դրվել անմիջապես՝ 1992-ի փետրվարի 27-ին: Իսկ դա վկայում է, որ գաղափարը մշակված է եղել նախապես: Ըստ երեւույթին՝ ԱԺՆ տեղեկատ-

վա-վերլուծական կենտրոնում:

Այդ է հուշում նաև Գոլցի հողվածի օպերատիվությունը: Որպեսզի փետրվարի 27-ին «Վաշինգտոն պոստը» տեղեկացված լիներ Խոջալուի դեպքերի մասին, հարկ կլիներ գործի դնել կապի հուսալի միջոցներ՝ նկատի ունենալով, որ 1992-ին Ադրբեջանում դեռևս չկար էլեկտրոնային հաղորդակցություն: Բացառված պիտի համարել նաև, որ Թոմաս Գոլցը կարող էր Ադրամից Վաշինգտոն հեռախոսակապ ստեղծել: Պետք է ենթադրել, որ նա նյութը Վաշինգտոն է ուղարկել Բաքվից, որտեղ այդ պահի դրությամբ դիվանագիտական ներկայացուցչություն երկու երկիր ուներ՝ Իրանը եւ Թուրքիան: Հավանական է, որ հենց Թուրքիայի դեսպանության կապի միջոցներով էլ Թոմաս Գոլցը Վաշինգտոն է հաղորդել առաջին «տաք» լուրերը:

Ամենաարտառոցն այն է, որ մշված օրվա դրությամբ Ադրամում չէր կարող լինել խոջալուցիների եւ ոչ մի դիակ: Փաստ է, որ առաջին անգամ Ադրամ դիակ հասցվել է ուղղաթիռով՝ փետրվարի 28-ին: Հետեւաբար, «յոթ դիակի, որից երկուսը՝ երեխայի, երեքը՝ կնոջ, որոնցից մեկն սպանվել է մոտ տարածությունից կրծքին արձակված կրակոցից» պատմությունը բացարձակ հերյուրանք է: Կրկնում ենք. սպանվածների դիակներն Ադրամ են տեղափոխվել ավելի ուշ, քան «Վաշինգտոն պոստ»-ում նրանց մասին «ականատեսի հավաստմամբ» գրել է Թոմաս Գոլցը:

Փետրվարի 27-ի նյութում չափազանց ակնառու է Ադրբեջանի կառավարության հասցեին «լրագրողի» հնչեցրած մեղադրանքը՝ որ «վախենում է, թե ժողովուրդը, իմանալով զոհերի իրական թիվը, կշրջվի իր դեմ»: Եթե նրա խնդիրն էր միայն ամերիկյան հանրությանը ծանուցել Խոջալուի դեպքերի մասին, ապա ի՞նչ կարիք կար խորանալու կառավարություն-ժողովուրդ հնարավոր դիմակայության հարցում: Մանավանդ որ նա վկայակոչում է անանուն «իրագեկ աղբյուրների»:

Արդեն մարտի 1-ին «Սանդի թայմսը» Թոմաս Գոլցի հեղինակությամբ տպագրել է հետեւյալը. «Հայ զինվորները սպանել են հարյուրավոր ընտանիքներ, որ փորձում էին փախչել: Նրանք, ում հաջողվել է փրկվել, հայտնել են, որ հայ զինվորներն սպանել են ավելի քան 450 ադրբեջանցու: Հարյուրավորներ, իսկ գուցե՝ հազարավորներ, անհայտ կորել կամ սպանվել են: Հարձակվողները սպանել են կամավորականների եւ զինվորների մեծ մասին, որոնք պաշտպանում էին կանանց եւ երեխաներին (?- Վ. Ա.): Հետո նրանք իրենց զենքն ուղղել են վախեցած, փախչել փորձող մարդկանց վրա»:

Մի քանի փրկվածներ հետո այսպես են ներկայացրել. «Ահա այդ

ժամանակ սկսվեց իսկական կոտորածը»,- ասաց երեք փրկված զինվորներից Ազեր Չաջիելը: «Չայերը կրակում եւ կրակում էին: Նրանք եկան եւ սկսեցին մարդկանց մորթել դանակներով եւ սվիններով: Նրանք կրակում, կրակում, կրակում էին»,- կրկնում է Ռազիա Ասլանովան (առաջին նյութում՝ Ռախսա անվանվածը. – Վ. Ա.), որ այլ կանանց եւ երեխաների հետ, որոնց հաջողվել է հատել հայկական սահմանը (°-Վ. Ա.) Աղդամ է հասել: Նա ասաց, որ ամուսինը՝ Կայունը (°-Վ. Ա.) եւ փեսան մորթվել են իր աչքի առաջ, իսկ աղջկան դեռեւս չեն գտել:

Երեկ ուշ երեկոյան (փետրվարի 28-ի^օն. - Վ. Ա.) Աղդամի դիահերձարանում կար 479 դիակ: 29 մարդ թաղվել է գերեզմանոցում: Թաղման ենթակա յոթ դիակներից ես տեսել եմ երկու երեխայի եւ երեք կնոջ դիակ, որոնցից մեկը սպանվել է կրծքին արծակված դիմահար կրակոցից: Աղդամի հիվանդանոցում կարելի է տեսնել կոտորածի եւ ահաբեկչության հետեւանքները: Բժիշկներն ասում են, որ իրենց մոտ 140 հոգի կա: Նրանց մեծ մասն ունի հրազենային եւ դանակահարության վերքեր: Բայց նույնիսկ Աղդամում նրանք անվտանգության մեջ չեն: Ուրբաթ գիշերը 150 000 (°-Վ. Ա.) բնակիչ ունեցող քաղաքին հասցվեց հրթիռային հարված, ինչի հետեւանքով ավերվեց մի քանի շենք եւ սպանվեց մեկ մարդ»: (տես՝ նույն տեղում)

Ինչպես տեսնում ենք, «լրագրողը շարունակաբար խտացրել է պատկերը»: Եւ դա էլ նրա ճակատագրական սխալն է: Սպանվածների մասին թոմաս Գոլցը գրել է այնպես, կարծես ամեն ինչ տեղի է ունեցել Խոջալուում: «Նրանք եկան եւ սկսեցին մարդկանց մորթել դանակներով եւ սվիններով»,- նրան «պատմել է Ռախսա-Ռազիա Ասլանովան, որի աչքի առաջ մորթել են ամուսնուն եւ փեսային»: Մարտի 1-ին արդեն հայտնի էր, որ մարդիկ սպանվել են Խոջալուից մեկուկես տասնյակ կիլոմետր հեռավորության վրա: Մինչդեռ թոմաս Գոլցը Խոջալուում «իրականացված սպանդի» տեսարաններ է գծել: Այնուհետեւ, նա Աղդամի դիահերձարանում չէր կարող տեսնել 479 դիակ: Պատճառն այն է, որ Աղդամում դատաբժշկական փորձաքննության է ենթարկվել 181 դիակ:

Իրականությանը չի համապատասխանում նաեւ այն, որ իբր սպանվածներն ունեցել են դանակահարության վերքեր: Դատաբժկական փորձաքննության պաշտոնական եզրակացության մեջ նշված է երեք բնույթի վերք՝ հրազենային, բեկորային եւ բուք գործիքի հարվածի: Իսկ այն, որ թոմաս Գոլցը հագիվ 20 000 բնակիչ ունեցող Աղդամը ներկայացնում է «150 000-անոց քաղաք», ինքնին վկայում է, որ նա իր հողվածները հեղինակել է Բաքվում: Այլապես ինչ^օւ պիտի տրվեր հի-

մար չափազանցության:

Ո՞րն է եղել Թոմաս Գոլցի դերակատարությունը: Այս հարցի պատասխանը տալիս է նրա «Ադրբեջանական օրագիրը»: Մարտի 5-ին մենք նրան «տեսնում ենք» Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջանի դահլիճում: Բնութագրական է Գոլցի եւ Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» էլման Մամեդովի երկխոսությունը, երբ «լրագրողը» հետաքրքրվում է, թե ինչո՞ւ է մտահոգ, Մամեդովը պատասխանում է.

- Ֆիլմը, նրանք չեն ուզում ցուցադրել ֆիլմը:

Խոսքը Չինգիզ Մուստաֆաեւին վերագրվող տեսահոլովակի մասին է, որը պիտի Մութալիբովի հրաժարականի «իրեղեն ապացույց» ներկայացվեր: Եւ ներկայացվել է նույն օրը՝ 1992-ի մարտի 5-ին: Այնուհետեւ Թոմաս Գոլցին կարելի է «հանդիպել» նույն տարվա մայիսի 14-ին Մութալիբովի նստավայրը գրոհող՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատի զինառայանների շարքերում՝ Բաքվում Թուրքիայի դեսպանատան «մամուլի կցորդի» հետ: Փետրվարի 27-ի ակնարկը, որ «զոհերի իրական թիվն իմանալով՝ ժողովուրդը կշրջվի կառավարության դեմ», այդ իշխանափոխության նախերգանքը չէ՞ր, արդյոք: Եւ Թոմաս Գոլցին չէ՞ր վերապահված «միջազգային պատգամախոսի» դերակատարություն:

Թուրքական հե՞տք

2013թ. փետրվարի 27-ին Անկարայում Խոջալուի «ցեղասպանության» 21-րդ տարելիցի միջոցառմանը ելույթ է ունեցել Թուրքիայի Խորհրդարանի պատգամավոր Աթիլա Քայան: Day.az-ի այդ օրվա հաղորդագրության մեջ հատուկ շեշտված է, որ «Աթիլա Քայան Իզդիրում ծնված էթնիկ ադրբեջանցի է»: Պատգամավորը ներկայացնում է ընդդիմադիր Ազգայնական կուսակցությունը: Փաստն ինքնին քիչ բան է ասում. Թուրքիայում Խոջալուի մասին պաշտոնական տեսակետն էլ նույնն է:

Բայց Աթիլա Քայանի անունը կապված է դարաբաղյան պատերազմի հետ: Նա ադրբեջանական կողմից մասնակցել է մարտական գործողություններին: Որոշ աղբյուրներ նույնիսկ նշում են, որ Քայան «Ղուբաթլուի մարտերում վիրավորվել եւ գերի է ընկել, ազատվելուց հետո երկարատեւ բուժում ստացել»: Ոմանք համարում են, որ գերվածն այլ անձնավորություն է եղել, բայց եւ չեն ժխտում, որ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավորն իրոք ժամանակին «մարտնչել է հանուն Ղարաբաղի»: (տես՝ <http://www.disput.az/index.php?showtopic=143872&st=45>)

2005թ. Ստամբուլում լույս է տեսել “Kan firtinasi”, քարգմանաբար՝ «Արյան փոթորիկ», վերտառությամբ մի գիրք (տես՝ ilterisyayinlari.com): Հեղինակը Յուսիֆ Ջիա Արփաջիքն է: Նախաբանում Արփաջիքը «գեղարվեստական տեսարան» է նկարագրում, որ ձմեռային մի երեկո Ստամբուլի իր բնակարանում հեռուստացույց էր դիտում, երբ հանկարծ տեսնում է «Խոջալուի կոտորածի ցնցող պատկերները» եւ նույն պահին էլ որոշում «անպայման հասնել Ադրբեջան, օգնել թուրք եղբայրներին»:

Այս անձնավորության մասին գիտենք, որ «Ղարաբաղյան պատերազմի տարիներին որպես «ՍԻԿՄՍԵՐ» («Իդեալիստներ») ստորաբաժանման հրամանատար Ադրբեջանի կողմից մասնակցել է մարտական գործողություններին» (տես՝ <http://ru.wikipedia.org>): Ինչ վերաբերում է ստորաբաժանմանը, ապա այն «իր գործողությունները համաձայնեցնում է Թուրքիայի զինվորական հրամանատարության հետ, բայց երկրի զինված ուժերի կառուցվածքի մեջ չի մտնում, լիովին կազմավորված է ազգայնական երիտասարդներից, որոնք նախկինում եղել են հատուկ նշանակության մարտիկներ» (նույն տեղում):

Նույն ստորաբաժանման հրամանատարներից մեկն էլ եղել է վերոհիշյալ Աթիլա Քայան: Արփաջիքի գրքի մասին տեսակետ արտահայ-

տելով, նա հետեւյալն է ասում. «1992-ի աշնանը նրանք (Արփաջիքն ու մյուսները. - Վ.Ա.) 40 հոգով եկան Ադրբեջան» (*intu`http://www.disput.az/index.php?showtopic=143872&st=45*): Ինչպես տեսնում ենք, այստեղ ժամանակագրական հակասություն կա. Արփաջիքն ասում է, որ Ադրբեջան է գնացել 1992-ի «ծմռանը», մինչդեռ Քայան նույն տարվա «աշունն» է նշում որպես Արփաջիքի Բաքու հասնելու ժամանակ: Ղարաբաղյան պատերազմին ադրբեջանական կողմից նման ստորաբաժանման մասնակցությունը, հարկավ, թուրքական աղբյուրները պետք է փորձեն չգաղտնագերծել: Կարծում ենք, այդ է պատճառը, որ Արփաջիքն իր Ադրբեջան հասնելու ժամանակ է նշում 1992-ի ձմեռը, իսկ Քայան՝ նույն տարվա աշունը:

Մեզ շատ հավանական է թվում, որ երկուսն էլ կեղծում են: Ի՞նչ հիմքեր ունենք այսպես ենթադրելու: Արփաջիքն ասում է, որ Ադրբեջան ուղևորվելուց առաջ վերցրել է ռուսերենի ինքնուսույցը: Դա չի՞ նշանակում, որ այդ ժամանակ Ադրբեջանը դեռևս անկախ չէր, եւ Թուրքիայի հետ ուղղակի հաղորդակցություն չուներ: Հակառակ դեպքում նրա ինչի՞ն էր պետք լինելու ռուսերենի ինքնուսույցը: Այնուհետև, նկարագրելով վայրէջքը Բաքվի օդանավակայանում, Արփաջիքը խոսում է «ռուս սահմանապահ զինվորների» մասին, որ «նայում էին կասկածանքով»: 1992-ի ձմռանը, բայց հատկապես՝ աշնանը, Բաքվի օդանավակայանում «ռուս սահմանապահ զինվորներ» հազիվ թե լինեին, քանի որ ի սկզբանե Ադրբեջանը մերժել էր ԱՊՀ մտնել, իր զինված ուժերը ենթարկել Միացյալ հրամանատարությանը:

Թուրքիան Ադրբեջանի անկախությունը ճանաչել է 1991թ. հոկտեմբերին, երբ ԽՍՀՄ-ը իրավաբանորեն դեռևս չէր փլուզվել: Կարծում ենք, որ Արփաջիքն իր խմբով Ադրբեջան է հասել նույն 1991-ի տարեվերջին: Ամեն դեպքում, նա Բաքու է հասել Խոջալուի դեպքերից առաջ: Այդ է վկայում այն հանգամանքը, որ, պատմելով իր եւ ԱԺճ ղեկավար ներկայացուցիչների առաջին հանդիպման մասին, նա չի ներկայացնում Խոջալուին վերաբերող եւ ոչ մի մտահոգություն կամ զոհն անդրադարձ: Անհավանական է, որ Խոջալուի «կոտորածի մասին պատմող հեռուստահաղորդումից հոգեկան ցնցում ապրած» Արփաջիքին հետաքրքրած չլինի, թե ինչպես է դա տեղի ունեցել:

Փոխարենը նա մեծ ոգեւորությամբ է պատմում Բաքվի «Ինտուրիստ» հյուրանոցում իրեն հանդիպած պակիստանցի զինվորականների, Աֆղանստանից «օգնության եկած ուզբեկ եղբայրների» եւ այն մասին, թե ինչ են պատմել ԱԺճ ղեկավարները «Ղարաբաղում մի հայտնի չեչեն պատերազմողի քաջագործություններից»: Արտառոց է նաեւ, որ

Արփաջիքի հրամանատարությանը ժամանած խուները ներկայացել է ոչ թե Ադրբեջանի պաշտպանության նախարարությանը, ոչ թե պատրաստակամություն է հայտնել անմիջապես հանելու ռազմաճակատ, այլ, մի քանի օր Բաքվում մնալուց հետո տեղափոխվել է Թուրքիա շրջան:

Այդ առթիվ Աթիլա Քայան վերհիշում է, որ նրանց «հատկացվել էր նախկին պիոներական ճամբարը, որտեղ Ադրբեջան եկած կամավորականներից (Թուրքիայից եւ Չարավային Ադրբեջանից) պետք է կազմավորվեր «Թուրան» գունդը» (տես՝ <http://www.disput.az/index.php?showtopic=143872&st=45>): Կազմավորվել է նման գունդ: Աթիլա Քայան ասում է, որ «կամավորականների քիչ լինելու պատճառով որոշվել է գնդի փոխարեն ստեղծել գումարտակ» (տես՝ նույն տեղում): Յուսիֆ Ջիա Արփաջիքը ոչինչ չի ասում իր հրամանատարությանը ստեղծված ստորաբաժանման կառուցվածքի մասին: Միայն խոսում է «անցկացված մարզումներից»:

Ամենահետաքրքրականն այն է, որ Արփաջիքի գրքում իսպառ բացակայում են ստորաբաժանման «մարտական ուղու» հիշատակումները: Հնարավոր է, որ ադրբեջանական կողմից ղարաբաղյան պատերազմում մարտեր մղած ստորաբաժանման հրամանատարը մեկ տասնամյակ անց չհիշի, թե որ ուղղությամբ է ինքը կռվել, չպատմի որեւէ դեպք: Բացառված է: Ուստի մնում է եզրակացնել, որ այդ ստորաբաժանումը, իրոք, կազմավորվել է որպես «հատուկ նշանակության»: Գրքում Արփաջիքը տեղադրել է ԱԺՆ վարչության կողմից իրեն տրված վկայագրի լուսապատճենը: Ըստ այդմ, նա «նշանակվել է ԱԺՆ ենթակայության ոստիականական հատուկ գումարտակի հրամանատար»:

Դա փաստորեն Աբուլֆազ Էլչիբեյի «անձնական գվարդիայի» նախատիպն էր: Հազիվ թե Ադրբեջանի նախագահի պաշտոնում Էլչիբեյը նման «թիկնազորի» կարիք ունենար: Հետեւաբար, Արփաջիքը «ոստիականական հատուկ գումարտակի» հրամանատար է նշանակվել, երբ Ադրբեջանում իշխանությունը դեռեւս գտնվում էր Մութալիբովի ձեռքին: Իսկ դա նշանակում է, որ Արփաջիքի ստորաբաժանումը Թուրքիայից Ադրբեջան էր հասել, որպեսզի իշխանությունը վերցնելու հարցում օգնի Էլչիբեյին:

Այս իմաստով չափազանց ուշագրավ է Արփաջիքի վկայությունը, որ արդեն 1993-ի ապրիլի 4-ին ինքը շտապ հետ է կանչվել Բաքու: ԱԺՆ գրասենյակում իրեն ասել են, որ «Ադրբեջանում քաղաքական իրավիճակը խիստ սրվել է» եւ նշանակել «Շիխովի» գումարտակի հրամանատար: Բայց նույնիսկ Քելբաջարի անկմամբ ռազմաճակատում ստեղծված աղետալի վիճակի պարագայում էլ նրան ոչ թե մարտական գոր-

ծողությունների թատերաբեմ են ուղարկել, այլ «Ինտուրիստ» հյուրանոցում հարկաբաժին են տրամադրել, որպեսզի «մշտապես մոտ գտնվի ԱԺԳ գրասենյակին»:

Արփաջիքն այնուհետև պատմում է նույն տարվա հունիսին Գյանջայում գտնվելու մասին: Դա այն ժամանակահատվածն էր, երբ ապստամբ գնդապետ Սուրեթ Յուսեյնովը կենտրոնացել էր Գյանջայում եւ անհապաղ հրաժարականի պահանջ ներկայացրել էլչիբեյին: Յայտնի է, որ Սուրեթ Յուսեյնովին ձերբակալելու, ապստամբական ստորաբաժանումները կազմալուծելու նպատակով Բաքվից Գյանջա էր ուղարկվել «նախագահական գվարդիան», Ռովշան Ջավադովի հրամանատարությամբ գործող ՕՄՕՆ-ը: Արփաջիքը, ամենայն հավանականությամբ, ապստամբական ուժերի ճամբարը գրոհածներից մեկն է եղել: Ինչպես գիտենք, կառավարական ուժերը խայտառակ պարտություն են կրել եւ ամոթահար նահանջել Բաքու՝ ապստամբների մոտ պատանդ թողնելով գլխավոր դատախազ Իխտիար Շիրինովին: Իսկ Սուրեթ Յուսեյնովը վերջինիս ստիպել է, որպեսզի ստորագրի նախագահ էլչիբեյի ձերբակալման օրդերը:

Ըստ էության, Գյանջայի խայտառակության հպանցիկ նկարագրությամբ էլ ավարտվում է Արփաջիքի գիրքը: Նա ամոթահար վերադառնում է Թուրքիա: Դիտարժան է, որ նա հայրենիք է գնում որպես... Ադրբեջանի Թովուզի շրջանի բնակիչ. ժամանակին այդ մասին ադրբեջանական իշխանությունները հոգացել էին: Գրքի եզրափակիչ գլուխը պատմում է Թուրքիա Ռովշան Ջավադովի գաղտնի այցելության մասին, երբ Ադրբեջանում արդեն իշխում էր Յեյդար Ալիեւը: Սա առանձին խոսակցության թեմա է: Մեզ այս պահին հետաքրքրում է փաստը. Ստամբուլի օդանավակայանում այլ անձի անվան տակ Թուրքիա հասած Ռովշան Ջավադովին դիմավորել է երկու հոգի, նրանցից մեկը Յուսիֆ Ջիա Արփաջիքն էր:

Այստեղ հարկ է կանգ առնել: Գրքում Արփաջիքը որեւէ անգամ չի անդրադառնում Ռովշան Ջավադովի հետ համատեղ գործունեությանը: Եւ հանկարծ նա Ստամբուլի օդանավակայանում դիմավորում է Թուրքիա ինկոգնիտո ժամանած Ջավադովին: Պետք է ենթադրել, որ դա տեղի է ունեցել, երբ վերջինս հակասությունների մեջ էր Յեյդար Ալիեւի հետ, նախապատրաստական աշխատանքներ էր տանում, որպեսզի «Բաքվում զինված խռովություն կազմակերպի»: Ըստ Արփաջիքի, Ջավադովը դեմ է եղել զինադադարի համաձայնագրին եւ մտադիր, որպեսզի «պատերազմը շարունակի»: Սա, անշուշտ, կատարյալ հիմնարկություն է: Ավելի շուտ՝ միամիտների համար ասված գեղեցկախոսություն:

Բայց վերադառնանք հարցադրմանը. ինչո՞ւ Ստամբուլում Ջավադովին դիմավորել է հատկապես Յուսուֆ Ջիա Արփաջիքը: Ղա չի՞ նշանակում, որ նրանք ոչ միայն ծանոթներ էին, այլև լիովին վստահում էին միմյանց: Երրորդենք՝ Ջավադովը Թուրքիա էր մեկնել ծպտյալ: Ուստի սեփական անվտանգությունը կվստահեր միայն եւ միայն չափազանց հավատարիմ շրջանակի եւ մարդկանց: Տվյալ դեպքում՝ «Գորշ գայլեր» ազգայնական շարժմանը եւ Արփաջիքին, որը մինչ այդ եղել էր Ադրբեջանում՝ որպես թուրքական հատուկ նշանակության ստորաբաժանման հրամանատար:

Իսկ սկսած 1991-ից Ռովշան Ջավադովը գործել է Լեռնային Ղարաբաղում: Նախ՝ իբրեւ դեռեւս խորհրդային համարվող Ադրբեջանի ՆԳՆ ՕՍՕՆ-ի հրամանատար՝ համագործակցելով խորհրդային պատժիչ զորքերի հետ ընդդեմ ԼՂ հայ խաղաղ բնակչության, ապա դարձել անկախ Ադրբեջանի ամենահայտնի զինվորական դեմքերից մեկը: Խոջալուի դեպքերի մասին ադրբեջանական կողմի հրապարակած նյութերում Ջավադովն առանձնացված է որպես 1992 թ. փետրվարի 24-25-ին ծրագրված՝ «Խոջալուի ապաշրջափակման ռազմագործողության» գլխավոր դեմքերից մեկը:

1992թ. սեպտեմբերի 14-ին Ադրբեջանի դատախազությունում որպես Խոջալուի դեպքերի վկա հարցաքննվել է Գերագույն խորհրդի նախագահի առաջին տեղակալ Թամեռլան Գարաբեյը: Խոսելով փետրվարի 25-ի մասին, Գարաբեյը վկայել է, որ Ռովշան Ջավադովը եւ Ֆայիկ Բախշալիեւն իրեն ասել են, որ «Ֆահմինի (Խոջալուի «ապաշրջափակման» ռազմագործողության պատասխանատու Ֆահմին Յաջիեւի) օպերացիայից բան դուրս չեկավ»: Նրանք ավելացրել են, որ իրենք «օպերացիա են համաձայնեցրել, որպեսզի զոնե ճանապարհ բացվի (դեպի Խոջալու) եւ օգնություն հասցվի»: Գարաբեյի վկայությամբ, նրանք «դուրս են եկել (Ադղամից) նույն օրվա երեկոյան կողմ, առավոտյան նրանցից տեղեկություն է ստացվել, որ ոչինչ անել չի հաջողվել, միայն գրավել են «Գարա-գայա» կոչվող տեղանքը եւ ապահովել, որպեսզի խոջալուցիները հասնեն Ադղամ»:

Գարա-գայա էր կոչվում Ադղամի արվարձան Շելլու գյուղի բարձունքը: Հենց այստեղ էլ զոհվել է խոջալուցիների մեծ մասը: Հետեւաբար, Ռովշան Ջավադովը եւ Ֆայիկ Բախշալիեւը «գրավել են» մի տեղանք, որտեղ ժամեր անց խոջալուցիներին դիմավորել են փոթորկալի հրաձգությամբ: «Արյան փոթորիկ»-ում Յուսուֆ Ջիա Արփաջիքը Խոջալվում սպանությունների եւ խոշտանգումների սահմնելի պատկերներ է ներկայացնում:

Համարձակվում ենք ենթադրել, որ Արփանջիքի հրամանատարությանը գործող թուրքական հատուկ ստորաբաժանումը 1992թ. փետրվարի 25-26-ին գտնվել է Աղղամում: Չէ՞ որ այն պահին դա ամենակարեւոր ուղղությունն էր: Այնտեղ էին կենտրոնացվել թե կառավարական, թե ԱԺԾ ենթակայության գրեթե բոլոր զորքերը, ինչպես նաև՝ «տարածքային ինքնապաշտպանության» գումարտակները: Իշխանությունը փորձում էր խնդիրը լուծել դեռևս Ադրբեջանի տարածքում գտնվող՝ նախկին խորհրդային զորքերի միջոցով: Իսկ ԱԺԾ-ն ամեն գնով խոչընդոտում էր: Քանի որ եթե Մութալիբովին հաջողվեր «ապաշրջափակել» Խոջալուն, ապա նրա իշխանությունը կամրապնդվեր, Ադրբեջանը կմիանար ԱՊՀ զինված ուժերին՝ դրանից բխող հետեւանքներով հանդերձ:

Թուրքիան Ադրբեջան էր ուղարկել հատուկ ստորաբաժանում՝ որպես քաղաքական մրցակցության մեջ ԱԺԾ հենարան, կռվան, հաղթաթուղթ: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ԱԺԾ առաջնորդ էլ ապագա նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը համաթուրքականության մոլեռանդ ջատագով էր եւ երդվյալ ռուսատյաց, ռուսական կայսրապետության կատարյալ հակառակորդ:

Խոջալուի դեպքերում թուրքական կողմի շահագրգռվածության գուցե ոչ ուղղակի, բայց բավական խոսուն վկայություն է ժամանակին Չեյդար Ալիեւի մամլո քարտուղարի պաշտոնն զբաղեցրած, ներկայումս “New Baku post” թերթի խմբագիր Թոֆիկ Աբբասովի հետեւյալ դիտարկումը. «Խոջալուն հայոց ցեղասպանության ճանաչման արշավի դեմ հզոր հակափաստարկ է»: (*տես՝ <http://www.1news.az/authors/140/20130329043109287/>*): Իսկ ինչո՞ւ պիտի Թուրքիան անմասն մնար այդ «հզոր հակափաստարկի» ստեղծման գործողություններից:

Ընդ որում՝ թե քաղաքական, թե ռազմական մասնակցության առումով: Ինչո՞ւ դիտել չտալ ակնհայտ փաստը, որ Խոջալուի «ցեղասպանության» մասին միջազգային մամուլի առաջին հրապարակման հեղինակ Թոմաս Գոլցը երկար տարիներ «մասնագիտական աշխատանք է կատարել» Թուրքիայում եւ այնտեղից 1991-ի աշնանն անցել Ադրբեջան: «Ադրբեջանական օրագրում» նա վկայում է, որ 1992-ի հունվարին եղել է Խոջալուում, բայց լռում, թե ինչո՞ւ «տիրող աղետալի իրավիճակը» չի ներկայացրել ամերիկյան մամուլում, չի ահազանգել, չի զգուշացրել...

366-րդ գնդի «մասնակցությունը»

Այս հարցը Խոջալուի շուրջ ադրբեջանական քարոզչության «հիմնական հաղթաթուղթն» է: Դրանով նախ փորձ է արվում «բացատրելու», թե ինչու հնարավոր չէր պահել «քաղաքը», ապա՝ որ «խաղաղ բնակչության կոտորածին մասնակցել է նաև ռուս զինվորականությունը»: Ադրբեջանում այսօր իշխող վարչախումբը, սակայն, այնքան անձեռնհաս է, որ միաժամանակ շրջանառության մեջ է դնում հակառակն ապացուցող պաշտոնական փաստաթղթեր:

Այսպես, Ադրբեջանի ԱԱ նախարարության «գաղտնի» մակագրով «Տեղեկանքում» կարդում ենք. «22.12.91-ին Ստեփանակերտի բնակիչները շրջապատել են ներքին զորքերի (նախկին ԽՍՀՄ ՆԳՆ) գունդը, որը նախապատրաստվում էր հեռանալու տեղակայման վայրից... Գնդի հրամանատարը նրանց է հանձնել 856 ավտոմատ, 10 գնդացիր, 3 ԲՄՊ (հետեւակի մարտական մեքենա): Քաղաքում իրավիճակը լարված է»: (*տես՝ www.erevangala500.com*)

Ինչպես տեսնում ենք, ադրբեջանական հատուկ ծառայությունները Խոջալուի դեպքերից 2 ամիս առաջ արդեն տեղյակ էին, որ Ստեփանակերտից հեռացող ներքին զորքերի գունդը տեղում թողել է ոչ միայն հրաձգային զենք, այլև՝ մարտական զրահատեխնիկա: Բնականաբար՝ անհրաժեշտ զինամթերքով հանդերձ:

Ստեփանակերտում տեղակայված 366-րդ մոտոհրաձգային գունդը նույնպես գտնվել է ադրբեջանական կողմի սրված ուշադրության կենտրոնում: Այդ է վկայում հաջորդ, դարձյալ «գաղտնի» մակագրով «Տեղեկանքը»: Այն կազմել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմին է ներկայացրել Գյանջա քաղաքի ՆԳ վարչության պետի տեղակալ փոխգնդապետ Ռ. Ջհանգիրովը: Ահա այն. «Օղաջունների (Գյանջայում տեղակայված ուղղաթիռային ջոկատի. - Վ.Ա.) ասելով, իրենք երբեք վայրէջք չեն կատարում ԼՂԻՄ գյուղերում (հայկական. - Վ.Ա.): Իսկ Ստեփանակերտ թռչում են, երբ 366-րդ գունդն ապահովում է շրթայական անվտանգություն: Նրանք այնտեղ են թռչում միայն 23-րդ դիվիզիայի (Գյանջայում տեղակայված. - Վ.Ա.) հրամանատարության հայտով, փոխադրում են պարեն: Այլ բեռներ ուղղաթիռներով չեն տեղափոխվում: 366-րդ գնդում առկա են վառելիքի մեծ պաշարներ, որ դեռևս չեն օգագործվում եւ գտնվում են «հայ գրոհայինների» (չակերտները մերն են. - Վ. Ա.) հսկողության տակ:

Մարտական տեխնիկան անսարք է, 17.01.92-ին գնդի հրամանատարությունը ներկայացրել է ԲՄՊ-ի 10 շարժիչի եւ 60 էլեկտրակուտակիչի (ակումուլյատորի) հայտ: Դեսանտային դիվիզիայի (Գյանջայում տեղա-

կայված) սպաների տրամադրությունն այնպիսին է, որ երդում չընդունեն (Ադրբեջանին ծառայելու. - Վ.Ա.), իսկ եթե իրավիճակը սրվի, օգտագործեն բոլոր միջոցները՝ ներառյալ զենքի գործադրում, ճեղքեն եւ հասնեն Ռուսաստան: Օդանավակայանի (ռազմական. - Վ.Ա.) եւ ուղղաթիռային ջոկատի (տեղակայման. - Վ.Ա.) ողջ պարագծով նկատվում է սպաների հերթապահություն, որոնց հրամայված է կրակել, եթե հարձակում լինի իրենց կամ պահպանվող օբյեկտների վրա»: *(Նույն տեղում)*

«Տեղեկանքից» հետեւում է, որ 366-րդ գունդն ըստ էության նույնպես գտնվել է շրջափակման մեջ: Անձնակազմի համար պարեն տեղ էր հասցվում Գյանջայից՝ ուղղաթիռներով: Ինչ վերաբերում է մարտական տեխնիկային, որը, իբր, Խոջալուի ռազմագործողության ժամանակ օգտագործվել է հայկական կողմից, ապա այն գտնվել է անսարք վիճակում: Հետաքրքրական է, որ Գյանջայի ՆԳ վարչության պետի տեղակալը մամուլում ասել է հայտնել 23-րդ դեսանտային դիվիզիայի սպաների տրամադրության, ռազմական օդանավակայանի եւ ուղղաթիռային ջոկատի մասին: Իսկ դա նշանակում է, որ նրան հանձնարարված է եղել հող նախապատրաստել, որպեսզի ռուս սպաները «համապատասխան փոխհատուցման» դիմաց ծառայության մտնեն կազմավորվող ադրբեջանական բանակում եւ կռվեն Լեռնային Ղարաբաղի դեմ:

Նույն տեղում կարդում ենք 28.01.92-ին Ադրբեջանի նախագահի մոտ խորհրդակցության սղագրությունը: Մութալիբովը խնդիր է դնում, որպեսզի նախկին խորհրդային զորքերի տեղակայման շրջանների եւ քաղաքների գործադիր իշխանության ղեկավարները «կոնտակտի մեջ մտնեն զինվորականների հետ, հսկողություն սահմանեն նրանց գործողությունների նկատմամբ, հարկ եղած դեպքում համաձայնության գան փոխհատուցման հարցում»: Մութալիբովը չի խորշել նույնիսկ «վարձկան» բառն օգտագործելուց:

Աղբյուրները փոխանցում են նաեւ մի «Անփոփազիր», որտեղ խոսք է գնում Ադրամ քաղաքում գտնվող օկրուզային զինապահեստին ադրբեջանցիների տիրանալու եւ հափշտակված զինամթերքի մասին: Դա տեղի է ունեցել 23.02.92-ին: Ադրբեջանցի ենթասպա Շուբյուրովը զինաթափել է պահակախումբը, արգելափակել մի սենյակում, որից հետո նրանց եւ օկրուզային պահեստի եւս 60 զինծառայողի «հարկադրաբար ուղարկել են Գյանջա»: Ավազակային հարձակման արդյունքում ադրբեջանական կողմին է անցել 728 վազոն հրետանային զինամթերք, 245 վազոն ռեակտիվ արկ, 131 վազոն հրաձգային զենքի զինամթերք, ինչպես նաեւ 22 ՄՄ ատրճանակ, 57 Ա Է Ի ավտոմատ: */untu` www.erevangala500.com/*

Աղբբեջանական կողմի տեղեկատվական առաջին արձագանքները

Սույն բաժնի նյութերը քաղված են լրագրող, ներկայումս Միլլի մեջլիսի պատգամավոր էլմիրա Ախունդովայի «Ходжалы. Хроника геноцида» (Աղբբեջանի պետական հրատարակչություն, Բաքու, 1993) գրքից:

Եւ այսպես. Խոջալուի դեպքերի մասին աղբբեջանական կողմի առաջին պաշտոնական արձագանքը թվագրված է 1992թ. փետրվարի 26-ին: «Ազերիմֆորմի» թղթակիցն Ադդամից հաղորդագրել է. «Խոջալուի հետ կապը խզվել է դեռեւս գիշերը, այդ իսկ պատճառով իրադարձությունների եւ տեղի ունեցած ողբերգության ծավալները դժվար է առայժմ հաղորդել»:

Ինչպես տեսնում ենք, խոսք չկա Խոջալուից դուրս «ծավալված իրադարձությունների եւ տեղի ունեցած ողբերգության» մասին: «Ազերիմֆորմի» թղթակիցը խոսել է Խոջալուից «հրաշքով փրկված եւ Ադդամ հասած մի քանի բնակչի հետ»: Նրանց ասելով, «տեղի բնակչության մեջ կան զոհեր եւ վիրավորներ, մարդիկ փախել են՝ թողնելով իրենց ողջ ունեցվածքը»:

Հաջորդ օրը, ԱԺՃ մամուլի կենտրոնին հղում անելով, ռուսաստանյան «Նեգավիսիմայա գագետա»-ն գրել է, որ Խոջալուում զոհվել է 100, վիրավորվել 200 հոգի: Այստեղ էլ առաջին անգամ խոսվում է 366-րդ գնդի՝ ռազմագործողությանը «մասնակցած լինելու» մասին: Ընդ որում, նաեւ ասված է, որ գունդը «զեմիթահրթիռային հրետանի է տեղադրել Խոջալուում, որտեղից հրետակոծվում է Շուշին»:

Թե ինչու՞ պիտի Ստեփանակերտում տեղաբաշխված՝ ԱՊՀ ՁՈՒ մտտհրաձգային գունդը Շուշին հրետակոծելու համար զեմիթահրթիռային հրետանի հասցներ Խոջալու, տեղեկատվության հեղինակներին դա չի հուզել: Կարելու է նկատվել ֆոնը, տպավորությունը: Բայց խիստ ուշագրավ է, որ նույն հաղորդագրության մեջ ասված է, որ Շուշիից Ռահիմ Գազիելը հեռախոսել է Բաքու եւ ասել, որ «Խոջալուի համար մարտերը շարունակվում են»:

Փետրվարի 29-ին ասուլիս է հրավիրել Այազ Մութալիբովի մամուլի խոսնակ, ներկայումս քաղաքագետ հանդես եկող Ռասիմ Ադաելը: Հղում անելով Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» էլման Մամեդովին, նա ասել է, որ «քաղաքի 10 000 բնակչից 1000-ը զոհվել է գրոհի ժամանակ»: Ադաելը նաեւ ասել է, որ գրոհի նախօրեին «հայկական ուղղաթիռներից թռուցիկներ են նետվել, որտեղ ասված էր՝ «թուր-

քեր, դա կլինի մեր վրեժը Սունգայիթի համար»:

Ոչ այն օրերի, ոչ էլ հետագա հարցազրույցներում, դատախազությանը որպես վկա տված ցուցմունքներում էլման Մամեդովը չի խոսել Խոջալուի ռազմագործողությանը «հայկական ուղղաթիռների մասնակցության» մասին: Ադրբեջանի նախագահի մամուլի խոսնակի կողմից թույլ տրված այս բացահայտ կեղծիքը բավական է, որպեսզի նրա ոչ մի խոսքի հավատ չընծայվի:

Մարտի 2-ին մամուլի ասուլիս է հրավիրվում դարձյալ Սուբալիբովի նստավայրում: Արդյունքում ընդունվում է «Դիմում» աշխարհի ժողովուրդներին: Այստեղ արդեն Խոջալուի զոհերի 1 432 թիվն է նշված: Ընդ որում, բնութագրված է, որ «մարդկանց սպանել են դիմահար կրակոցներով, ճզմել տանկերով»: Խոսքը, սակայն, Խոջալուի «գրոհի ժամանակ սպանվածների» մասին է:

Նույն ասուլիսում էլման Մամեդովը վերստին նշում է «զոհերի 1000» թիվը եւ հռետորական հարց տալիս. «Ո՞վ է մեղավոր կատարվածի համար, կպարզի հետաքննությունը, եւ մեղավորները կկանգնեն դատարանի առջեւ»: Մինչ այդ նա թվարկել էր Աղդամում գտնված քաղաքական եւ զինվորական մի ամբողջ շարք գործիչների, որոնք «չնայած բազմաթիվ հավաստիացումներին, այդպես էլ ոչինչ չեն արել»:

Մարտի 2-ին կատարվել են նկարահանումներ, դրանք Մոսկվայում ցուցադրվել են երկու օր անց: Այդ առթիվ ասված է, որ նկարահանումները «կատարվել են Խոջալուին հարող տեղանքում, Խոջալու գնալն անհնար է, այն վերահսկվում է հայկական զինված խմբավորումների կողմից»: Ասվածից ակնհայտ է դառնում, որ այն տեղանքը, որտեղ կատարվել են նկարահանումները, վերահսկվել են ադրբեջանական ուժերի կողմից: Հակառակ դեպքում այնտեղ գնալը նույնպես անհնար կլիներ:

Մարտի 5-ին տարածվել է Ֆահմին Հաջիեւի հայտարարությունը. վերջինս, ինչպես արդեն նշել ենք, Խոջալուի դեպքերից շաբաթներ առաջ որպես Ադրբեջանի ՊՆ ներկայացուցիչ Բաքվից ուղարկված է եղել Աղդամ՝ «համախմբելու բոլոր ուժերը»: Այլ աղբյուրներ նրան են վերապահում ՆԳՆ ներքին զորքերի հրամանատարի պաշտոնը: Ամեն դեպքում, Հաջիեւն Աղդամում առանցքային դեմք էր: Նա հայտնում է, որ «1800 Խոջալուցիներ գերի են պահվում Ասկերանի շրջանի Խնձրիստան եւ Մարտակերտի շրջանի Առաջածոր եւ Վանք գյուղերում»: Սա նույնպես բացահայտ կեղծիք է:

Մարտի 2-ին Աղդամ է հասել «Վիշկա»-ի թղթակից Թոֆիկ Նուրիեւը: Նրա հոդվածում ասված է. «Ուղղաթիռները թռչում էին դեպի Գարա

դաղ (Սեւ լեռ), եւ հրամանատարն ասաց, որ այնտեղ շատ մարդիկ են զոհվել: Տաքսի մեքենայով մենք ընդհուպ մոտեցանք, բայց լեռանը չհասած՝ 150 մետրի վրա, մեզ կանգնեցրին եւ ասացին, որ այնտեղ գնալ չի կարելի: Տեղանքում ես տեսա խոշոր տրամաչափի կրակված պարկուճներ: Տաքսու վարորդն ասաց, որ երբ մարդիկ (խոջալուեցիները) հասել են Գարա-գայա, նրանց հետապնդել են ԲՄՊ-ով եւ կրակ բացել, պարկուճները մնացել են այդ օրվանից»:

Սա եւս մի վկայություն է, որ «զանգվածային սպանության վայրը» գտնվել է ադրբեջանական ուժերի վերահսկողության տակ: Հակառակ դեպքում «Վիշկա»-ի թղթակիցը տաքսի մեքենայով Աղդամից այնտեղ չէր հասնի եւ 150 մետր հեռավորության վրա ադրբեջանցի զինվորականների կողմից չէր կանգնեցվի: Առավել ուշագորավ է «կրակված պարկուճներ»-ի հանգամանքը. եթե Թոֆիկ Նուրիեւը դրանք տեսել է Գարա-գայաից 150 մետր հեռավորության վրա՝ Աղդամի ուղղությամբ, ուրեմն մարդկանց վրա կրակ բացած ԲՄՊ-ն չէր կարող լինել «հայկական»: Թե չէ կստացվի, որ փետրվարի 26-ի գիշերը հայկական ուժերը «մի քանի ժամով գրավել են Աղդամի Շելլու արվարձանը, սպասել, մինչեւ խոջալուից մարդիկ հասել են այնտեղ, ԲՄՊ-ից կրակ են բացել, սպանել կանանց, երեխաների եւ ծերերի, հետո բարեհաջող նահանջել»: Աբսուրդ է:

Մարտի 2-ին «Օստանկինո» հեռուստաընկերության Բաքվի թղթակից Մայիս Մամեդովը հաղորդել է. «Մեզ ուղղաթիռներով հասցրին այն տարածք, որն այսօր օկուպացրել են հայկական զինված խմբավորումները»: Բավական խճճված ձեւակերպում է, բայց, նույնիսկ եթե այդ օրը հայկական ուժերն իրոք ազատագրել են տարածքը, ապա դա տեղի է ունեցել նկարահանող խմբի այնտեղ գտնվելուց հետո: Եւ, հետեւաբար, տարածքը, որտեղ կատարվել են խոշտանգված դիակների նկարահանումները, մինչեւ առնվազն այդ պահը գտնվել է ադրբեջանական կողմի վերահսկողության տակ:

Մարտի 3-ին հայտարարություն է տարածել Ադրբեջանի Միլլի մեջլիսի Ազգային խորհուրդը: Դրանում նշված է, որ փետրվարի 26-27-ին խոջալուի «գրոհի ժամանակ զոհվել են հազարավոր բնակիչներ, այդ թվում՝ կանայք, երեխաներ, ծերեր»: Փետրվարի 26-ի ժամը 7-ի դրությամբ խոջալուում մարտերը դադարած էին: Ինչու՞ է Ազգային խորհուրդը նշել երկօրյա գրոհ: Եւ, վերջապես, այստեղ էլ խոսքը գնում է «խոջալուում սպանված հազարավոր բնակիչների» մասին: Եւ՝ ոչ մի խոսք «Նախիջեւանիկի մերձակա դաշտում զանգվածաբար սպանված, խոշտանգված կանանց, երեխաների եւ ծերերի» մասին:

Պատահականություն է: Հագիվ թե: Ավելի շուտ այս ամենը վկայում է, որ Խոջալուի «ցեղասպանության» առասպելը հյուսվել է հետագայում: Իսկ դատ, չնայած էլձան Մամեդովի վստահ լինելուն, այդպես էլ չի կայացել: Իշխանությունները չեն ցանկացել: Քանի որ մեղադրվող յուրաքանչյուր զինվորական կամ քաղաքական գործիչ կարող էր «դժոխք տանել» շատերին: Փոխարենը մեղադրում են հայերին:

Այդպես հեշտ է, անվտանգ: Թե մեղավորների, թե զոհերի, թե բոլորի համար՝ առհասարակ: Բայց չէ՞ որ Խոջալուի «ցեղասպանություն» խամաճիկը կարված է փնթի, սեւի վրա՝ սպիտակ թելով: Բավական է մի փոքր «ցնցել» այն, եւ կարերը լրիվ կքանդվեն՝ բացահայտելով «կոնստրուկցիայի» բոլոր հեղինակներին: Ներառյալ՝ այսօր իշխող կլանի կնքահայր Հեյդար Ալիևի «չեկիստական պերսոնան»:

Աղբրեջանի իրավապահ մարմինների անմիջական արձագանքը

Խոջալուի դեպքերի վերաբերյալ նյութերում հանդիպում ենք թ. 64524 քրգործի մասին «Տեղեկանք»-ի: Այն կազմվել է 05.04. 92թ. «Ղարաբաղի միջշրջանային դատախազության» քննիչ Է. Ա. Միքաիլովի կողմից: Փաստաթղթում ասված է. «Թ. 64524 քրգործը հարուցվել է 1992թ. փետրվարի 27-ին, Ղարաբաղի միջշրջանային դատախազության դատախազ Շ. Գ. Ռզանեի կողմից: Գործի հետաքննությունը հանձնարարվել է իմ գլխավորությամբ 3 հոգուց բաղկացած քննչական խմբին, եւ ես 1992թ. փետրվարի 27-ին այն ընդունել եմ իմ վարույթում: 1992թ. փետրվարի 27-ին ուղղաթիռով քննիչների խումբ է ուղարկվել Խոջալու քաղաք՝ իրականացնելու դեպքի վայրի զննություն, բայց Ասկերանի շրջանում մարտական գործողությունների շարունակման եւ հայ գրոհայինների կողմից ուղղաթիռների գնդակոծման պատճառով այդ եւ հաջորդ օրերին հնարավոր չի եղել իրականացնել տեղանքի անհրաժեշտ զննություն»: (*ntu`erevacala500.com*)

Թվում է, դրանով էլ պիտի փակված համարել քննչական կարելու գործողության՝ դեպքի վայրի զննության հետ կապված հարցը: Բայց նույն տեղում առկա է «Դեպքի վայրի զննության արձանագրություն» կոչվող փաստաթուղթ: Այն, իբր, կազմվել է ք. Խոջալուում, թվագրված է 27.02.92: Ձևնություն իրականացրել է «Ղարաբաղի դատախազության» քննիչ Թ. Ա. Մանաֆովը: Ըստ այդմ, հանցագործության մասին հաղորդագրություն ստացվել է 1992թ. փետրվարի 26-ի ժամը 17:50-ին Աղբամի շրջանի ՆԳ բաժնից: Ձևնության պատճառ է ճանաչվել «Խոջալու քաղաքի բնակիչների դեմ կատարված հանցագործությունը»: Քննիչի ընթերականեր են նշանակվել Էլման Իսա օղլու Զուսեյնովը, բնակության վայրը եւ հասցեն՝ ք. Աղբամ, Զուսեյնի 20 փողոց, տ. 20 եւ Նովրուզ Իդրիս օղլու Աղանը, բնակության վայրը եւ հասցեն՝ ք. Աղբամ, Նիզամու փողոց, տ.10: Ձևնությունը կատարվել է ՄԻ-8 ուղղաթիռից: Նշված չէ՝ երբ է սկսվել եւ ավարտվել զննությունը:

Համացանցում առկա փաստաթղթի սկիզբը բացակայում է: Այն սկսվում է «...եւ միահարկ տները հրդեհի մեջ էին եւ ավերված» թերի նախադասությամբ: Այնուհետեւ կարդում ենք. «Տների բակերում եւ փողոցներում տեսանելի էին մարդկային բազմաթիվ դիակներ, հիմնականում՝ կանանց եւ երեխաների, թվով շուրջ 470-500 մարդու, ինչպես նաեւ խոշոր եւ մանր եղջերավոր անասունների, այլ ընտանի կենդանիների եւ թռչունների բազմաթիվ լեշեր, ինչպես նաեւ տարբեր մակնիշի

ջարդված եւ հրկիզված մեքենաներ՝ ավտոբուսներ, բեռնատարներ, «Ժիգուլի», «Մոսկվիչ», «Ջապորոժեց» մակնիշի մարդատար ավտոմեքենաներ:

Քաղաքի փողոցներում շրջում էին 2-5 հոգանոց մարդկանց խմբեր, որ հագած էին զինվորական համազգեստ եւ նման էին հայ գրոհայինների եւ զինված էին հրաձգային զենքերով: Տեսնելով ուղղաթիռը, նրանք կրակ բացեցին ուղղաթիռի վրա, ուղղաթիռը նաեւ հայկական խանքենդի եւ Ասկերան քաղաքներից եւ Նախիջեւանիկ, Խանաբադ գյուղերից ենթարկվեց զենիթա-հրթիռային գնդակոծման: Այդ պատճառով, նկատի ունենալով զննության մասնակիցների կյանքին սպառնացող իրական վտանգը, հնարավոր չգտնվեց վայրէջք կատարել քաղաքում եւ իրականացնել առարկայական տեղազննում, Խոջալու քաղաքի զննությունն ընդհատվեց:

Խոջալուից դեպի Աղդամի շրջանի Շելլու՝ տեղանքի ուղղաթիռից զննության ժամանակ Գար-գար գետի աջ կողմից 4-5կմ ձգվող հազվադեպ թփուտներով եւ ձյունապատ լեռնոտ տեղանքում այդ ճանապարհի ողջ երկայնքով տեսանելի էին մարդկային դիակներ, շուրջ 650-700 մարդու: Այդ դիակների մեջ հստակ երեւում էին կանանց եւ երեխաների, բազմաթիվ կրծքի երեխաների եւ հղի կանանց դիակներ: Երբ թռիչքի բարձրությունն իջեցվեց 5-7 մետրի, հայկական Նախիջեւանիկ գյուղի միջեւ, Ասկերան քաղաքից ոչ հեռու, Շելլուից 2-3 կմ. հեռավորության հարթությունում լավ տեսանելի դարձան հրազենային ազդեցությունից արյունոտված եւ ճգնված մարդկային մարմինները՝ վրաները ԲՄՊ եւ ԲՏԲ մարտական մեքենաների անիվների եւ թրթուրների թողած հետքեր: Շուրջ 85-100 դիակների մոտ տեսանելի էին արյան լճակներ, իսկ մի քանի դիակի վրա բացակայում էր հագուստը:

Սպանված կնոջ կողքին տեսանելի էին երեք սպանված երեխաներ, ինչպես նաեւ կանգնած էր 2 տարեկան կարմիր վերարկուով աղջիկ, որ ձգում էր սպանված մոր զգեստի թելքից: Նաեւ լավ երեւում էին վիրավորներ, որոնք, տեսնելով ուղղաթիռը, շարժվում-սողում էին ձյունների վրա, բայց ուղղաթիռի ուղղությամբ չընդհատվող զենիթահրթիռային գնդակոծման պատճառով հնարավոր չէր վայրէջք կատարել, օգնություն ցուցաբերել վիրավորներին եւ կատարել տեղանքի առարկայական զննություն: Դրա համար էլ այդքանով զննությունն ավարտվել է»: Փաստաթղթի տակ առկա են ընթերականների, եւս երկու ներկաների եւ քննիչի ստորագրությունները:

Փորձենք առանձնացնել դեպքի վայրի զննության փաստական մասը: Քննիչ Մանաֆովը 1992թ. փետրվարի 27-ին ուղղաթիռից Խոջալուում տեսել եւ հաշվել է 470-500, իսկ Խոջալու-Շելլու ճանապարհի

վրա՝ 650-700 մարդկային դիակներ: Հետեւաբար, Խոջալուի զոհերի ընդհանուր թիվը պիտի լիներ 1120-1200: Քրգործի մասին վերոբերյալ «Տեղեկանքում» ասված է, որ դատաբժշկական փորձաքննություն է նշանակվել 184 դիակի առկայության փաստով: Աղբբեջանի գլխավոր դատաբժշկի կողմից ստորագրված եւ քրգործին կցված փաստաթղթում էլ հստակ նշված է, որ դատաբժշկական փորձաքննության է ենթարկվել 181 դիակ:

Մենք ձեռնպահ ենք մնում վերագրումներից եւ հուզական բնութագրումներից եւ դիտարկում փաստերը. գլխավոր դատաբժշկի ստորագրած փաստաթղթում նշված է, որ փորձաքննության ենթարկված դիակներից 150-ը տղամարդու է, 31-ը՝ կանացի, իսկ ընդհանուր թվից 13-ը՝ երեխայի: Քննիչ Մանաֆովի զննությամբ, մինչդեռ, թե Խոջալուում, թե Շելլուի մոտ տեսանելի եղած դիակները հիմնականում կանացի են, այդ թվում՝ հղի, երեխայի, ընդ որում՝ նաեւ կրծքի մանուկների:

Մանաֆովի արձանագրմամբ, Խոջալուից հետդարձի ժամանակ հաջողվել է թռչքի բարձրությունն իջեցնել 5-7 մետրի: Նախ ասենք, որ դա հնարավոր կլիներ այն դեպքում, եթե օդաչուն վստահ լիներ, որ տեղանքը գտնվում է յուրայինների վերահսկողության տակ: Հակառակ դեպքում Խոջալուում զենիթա-հրթիռային զննակոծությունից հազիվ ազատված, նա չէր գնա նման արկածախնդրության: Այնուհետեւ, արժանահավատ է, որ այդքան ցածր թռչող ուղղաթիռից քննիչ Մանաֆովը տեսներ դիակների կողքին շարժվող, ձյունների մեջ սողացող վիրավորների, մանավանդ՝ կարմիր վերարկուով երկամյա աղջնակի եւ սառնասրտորեն թողներ-վերադառնար Աղբան:

Եթե՝ այո, ուրեմն հարկ էր նրան դատել յուրայիններին անօգնական դրության մեջ թողնելու, սեփական կաշին փրկելու համար: Եթե՝ ոչ, ուրեմն՝ ինչու՞ զոհե երկամյա աղջնակին չի փրկել: Կա նաեւ երրորդ տարբերակը, ամենահավանականը. նա ոչինչ էլ չի տեսել, այդ ամենը հնարածին է:

Վերջապես, տեղանքի զննության քննչական գործողություն կատարելիս քննիչներն անպայման լուսա-տեսանկարահանումներ են անում: Դա պարտադիր է: Պարտադիր պիտի լիներ հատկապես Մանաֆովի համար: Քանի որ նա ի սկզբանե գիտեր. դեպքի վայրը՝ Խոջալու, գրավված է հայկական ուժերի կողմից, վայրէջքն այնտեղ բացառված է, այլ տեղերում՝ վտանգավոր: Ուստի պիտի հոգացած լիներ իր հետ ունենալու նկարահանող օպերատոր, լուսանկարիչ: Կամ ինքը պիտի կատարած լիներ օպերատորի եւ լուսանկարչի աշխատանքը: Խոջալուի մասին աղբբեջանական կողմի տարածած քարոզչանյութերում

Մանաֆոլին վերագրվող լուսանկարներ եւ տեսագրություններ չկան: Չանգվածային սպանությունների վայրում տեսանկարահանումներ առաջին անգամ Մանաֆոլի զննությունից մեկ օր անց կատարել է Չինգիզ Մուստաֆաեւը:

Թե ինչու գտնվելով Աղդամում, իսկ դա ապացուցում է 27.02.92-ի թվագրությամբ նրա կողմից արված նկարահանումը, որտեղ իբրեւ ականատես-տուժած հանդես են գալիս Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» էլման Մամեդովը եւ դեռեւս փետրվարի 23-ին Խոջալուն լքած «դատախազ» Աթաքիշի Աթաքիշիեւը, Չինգիզ Մուստաֆաեւը չի միացել քննիչ Մանաֆոլին, սա ենթադրությունների ոլորտից է:

Ընդգծենք, որ 5-7 մետր բարձրության վրա թռչող ուղղաթիռից Մանաֆոլը չէր կարող դիակների վրա տեսնել եւ զանազանել ԲՄՊ եւ ԲՏՐ մարտական մեքենաների անիվներից եւ թրթուրներից մնացած հետքեր: Կամ կանացի դիակների մեջ տարբերակել` ով է հղի, ով` ոչ: Սույն «Դեպքի վայրի զննության արձանագրությունը», այսպիսով, ոչ թե իրավաբանական բնույթի փաստաթուղթ, այլ շահագրգիռ եւ ուղղորդված մարդու հիվանդ երեւակայության արգասիք է: Թերեւս այդ է պատճառը, որ քրգործի մասին «Տեղեկանքում» քննիչ Միքաիլովը հարկ է համարել շեշտել, որ դեպքի վայրի անհրաժեշտ զննություն չի կատարվել: Նույն տեղում նա ասում է, որ քրգործի վարույթը փոխանցվել է ուրիշի եւ 05.04.92թ.-ի դրությամբ ինքը հանդիսանում է քննչական խմբի անդամ:

1992թ. փետրվարի 27-ից ապրիլի 5-ը ժամանակահատվածում ինչու` քրգործի վարույթը Միքաիլովից անցել է ուրիշի: Գուցե պատճառն այն է, որ Միքաիլովը չի` ուղղորդվել, փորձել է համակողմանի եւ օբյեկտիվ տանել նախաքննությունը: Չենք կարող հաստատել կամ հերքել: Բայց հարկ ենք համարում, որքան էլ «ստանալական» թվա, մի նկատառում հնչեցնել. Խոջալուի բնակիչները զանգվածաբար սպանվել են փետրվարի 26-ի գիշերը: Դիակների մեծ մասը սպանության վայրում մնացել է առ մարտի 2-ը: Այդ օրը, համեմայնդեպս, Չինգիզ Մուստաֆաեւը կատարել է երկրորդ նկարահանումը:

Ոչ դատաբժշկական եզրակացության մեջ, ոչ մյուս մյուսերում խոսք չկա զազաններից դիակների հոշոտման մասին: Մինչդեռ տրամաբանական է, որ բաց տեղանքում դա գրեթե անխուսափելիորեն պիտի եղած լիներ: Մենք ներողություն ենք խնդրում զոհվածներից, նրանց հարազատներից, երբ թույլ ենք տալիս նման զգայուն թեմա շոշափել: Բայց տպավորությունն այնպիսին է, որ սպանվածների մարմիններն ինչ-որ մարդկանց կողմից պաշտպանվել են, որպեսզի դրանք վայրի զազաններից չհոշոտվեն: Այդքան խիղճ սպանդի կազմակերպիչներն ունեցել են:

«Վկան» կրկնում է «Ձննության» արձանագրությունը

Հարուցված քրգործի նյութերից մեկը վկա ճանաչված Նաթիկ Հուսեյնովի հարցաքննության արձանագրությունն է: Նախ, «վկայի» մասին: Արձանագրությունում նշված է նրա ծննդյան թվականը՝ 1959: Ծննդյան ամիսը եւ ամսաթիվը բացակայում են: Գրված է, որ բնակվում է Աղղամ քաղաքի Հունվարի 20-ի փողոցում (ուշադրություն է հայցում, որ «Ձննության» ընթերականերից մեկն էլ Աղղամ քաղաքի այդ նույն փողոցի բնակիչ է), բայց տան համարի դիմաց դրված է գծիկ: Անձնագրի փոխարեն էլ անորոշ գրված է՝ «անձը հաստատող փաստաթուղթ»):

Այժմ անցնենք բուն նյութին: Նաթիկ Հուսեյնովը վկայել է, որ «1990թ.-ից հանդիսանում է Ադրբեջանական Հանրապետության Աղղամի շրջանի ժողովրդական ճակատի ինքնապաշտպանության խմբի անդամ»: Այսինքն, հարցաքննության պահին եւ հատկապես՝ հոջալուի դեպքերի օրերին եղել է զինվորական անձ: Նրա խոսքերով. «1992թ. փետրվարի 27-ին Աղղամի շրջանի մի խումբ բնակիչներով («ինքնապաշտպանության» ջոկատը դարձավ «մի խումբ բնակիչներ»- Վ. Ա.), մոտավորապես 200 հոգի առավոտյան ժամը 9-ի սահմաններում Աղղամ քաղաքի կողմից որոշել են գնալ դեպի Շելլու գյուղը»: Այս «երթի» մասին Հուսեյնովը շարունակում է, որ Աղղամից «գնալով շուրջ 3-400 մ» հասել են Շելլու, որտեղից «ուղղություն են վերցրել դեպի Ասկերան քաղաք»:

Երբ նրանք Շելլուից «հեռացել են մոտ 2կմ, տեսել են շատ մարդկանց դիակներ, որոնց մեջ շատ էին կանանց եւ երեխաների դիակները»: Ուշադրություն դարձնենք. խումբը շարժվել է Աղղամից, մոտ 3-400մ, հետո հասել Շելլու, իսկ 2կմ անցնելով՝ «հանդիպել շատ մարդկանց դիակների»: Փաստորեն Հուսեյնովը հաստատում է, որ դիակներ տեսել է Աղղամից ոչ ավելի, քան 2 կմ հեռավորության վրա:

Այնուհետեւ նա խոսում է այն մասին, որ իրենց «ճանապարհն օդից ապահովել են ուղղաթիռները» (դա քննիչ Մանաֆովին «զննության վայր» տանող ուղղաթիռն էր- Վ. Ա.), որոնցից մեկը «վայրէջք է կատարել» եւ իրենք «սկսել են դիակները բարձել (տեքստում օգտագործված է այդ բառը- Վ. Ա.) ուղղաթիռի մեջ»: Իսկ նույն օրվա նույն ժամերին, ըստ քննիչ Մանաֆովի, «հնարավոր չէր, որ ուղղաթիռը վայրէջք կատարի»:

Նրա խոսքով, ուղղաթիռը 2 ուղերթ է կատարել, ամեն անգամ տեղափոխելով 30-35 դիակ: Ու թեեւ «հայ գրոհայինները բոլոր կողմերից ենթարկել են հուժկու զենիթա-զնդացրային (՝- Վ. Ա.) կրակի, իրենցից

ոչ որ չի տուժել»: Պատկերացնելի՞ք է, որ բաց տեղանքում, դիակ տեղափոխող 200 հոգանոց խմբի վրա «հուժկու զենիթա-զնդացրային կրակ բացվի», բայց «ոչ որ չտուժի»: Ակնհայտ է, որ «վկան» այստեղ փորձում է «հիմք» ստեղծել, թե «շատ մարդկանց դիակները գտնվել են հայկական կողմի վերահսկողության տարածքում»:

Բայց ինչ-որ բան ձեւակերպելու համար մարդ պետք է գոնե տարրական տրամաբանություն ունենա: «Հայ գրոհայինների հուժկու զենիթա-զնդացրային կրակի տակ ընկած» ջոկատը, ըստ Հուսեյնովի, ոչ թե նահանջել է Շելլու, այլ... «առաջ շարժվել դեպի Խոջալու»: Բայց մինչ այդ «վկան» հասցնում է եւս մի հիմարություն թույլ տալ. «Մենք դիակները բարձել ենք Ասկերան քաղաքի դիմաց, մոտ 800-1000մ տարածության վրա»: Ընդ որում, այդ ընթացքում արդեն նրանց վրա «կրակել են ԲՄՏ, ԲՏՌ եւ ԲՄՊ մարտական մեքենաներից, ավտոմատ զենքերից», բայց դարձյալ «իրենք կորուստ չեն ունեցել»:

Թե 200 հոգանոց մարդկային զանգվածին ինչ աղետ կարող է պատճառել ԲՄՊ մարտական մեքենայի կրակը, գիտեն ոչ միայն զինվորականները, այլեւ բոլոր բանական մարդիկ: Իսկ Ադրբեյջանի դատախազության հատուկ կարելուր գործերով քննիչ Հուսեյնովի ուղեղին չի հասել, որ ոչ թե սիրուհուն ժամադրատոմսակ, այլ իրավական փաստաթուղթ է գրում:

Նա շարունակել է արձանագրել «վկայի» բարբառանքները. «Որքան մենք մոտենում էինք ք. Խոջալուին, դիակների թիվը մեծանում էր: Իմ հաշվարկներով, կար մոտ 450-500 դիակ: Դիակների վրա կային մարտական մեքենաների անիվների եւ թրթուրների հետքեր: Կային մեծ քանակությամբ ճզմված կանացի եւ մանկական դիակներ: Ես տեսել եմ սպանված շատ հղի կանացի եւ կրծքի երեխաների», - կարդում ենք փաստաթղթում: Նկատելի է, չէ՞, ժողճակատի գործակալի միտումը՝ քննության ուշադրությունը կենտրոնացնել Խոջալուի «շրջակայքում ավելի մեծ թվով դիակների առկայության փաստի» վրա: Նա հասկանում էր, որ Շելլուի մոտ դիակների վրա սեւեռվելու դեպքում սպանությունները հայկական կողմին վերագրելու հավանականությունը գրեթե զրոյական է դառնում:

Այնուհետեւ Հուսեյնովն ասել է, որ «մոտեցել են Խոջալուին մոտավորապես մինչեւ մեկ կիլոմետր տարածության վրա», Խոջալուի եւ Ասկերանի «միջեւ տեղամասից իրենց վրա կրակել են գնդացիրներից եւ հրանոթներից, իրենց վրա է շարժվել 3 ԲՏՌ եւ 2 ԲՄՊ, ինչպես նաեւ՝ հայ գրոհայինները, ինքը նրանց հետ տեսել է ռուս զինվորների, որ դեկավարում էին (°-Վ. Ա.) գրոհը, իրենց սկսել են շրջապատել, ստիպված

են եղել նահանջել»:

Այստեղ արդեն «վկան հիշել է», որ իրենցից մի քանի հոգի «սպանվել եւ վիրավորվել է»: Այդուհանդերձ, ԱԺԾ «ինքնապաշտպանական ջոկատը փոթորկալի կրակի տակ նահանջել եւ նույն օրվա ժամը մոտավորապես 17-17:30-ին հասել է իրենց վերջին դիրքը, որ գտնվում է ադրբեջանական Շելլու գյուղի եւ Ասկերան քաղաքի սահմանի վրա»:

Վերոբերյալ «ներածականն» արձանագրելուց հետո քննիչը հարց է ուղղել. «Ասացեք, ի՞նչ նպատակով եք դուք շարժվել դեպի Խոջալու»: Միջանկյալ հիշեցնենք, որ «վկան» նախապես չի ասել, որ ժողճակատի «ինքնապաշտպանության ջոկատի» ռազմերթի նպատակը Խոջալու հասնելն է եղել: Բայց հետեւենք նրա պատասխանին. «1992թ. փետրվարի 26-ին Աղդամ քաղաք էին հասել Խոջալու քաղաքից վիրավորներ եւ պատմել, որ հայկական գրոհայինները եւ ռուս զինվորները մարտական մեքենաներով սպանում են խաղաղ մարդկանց եւ հրկիզում քաղաքը: Խոջալուի բնակիչները ռացիայով օգնություն էին խնդրում եւ ասում, որ իրենք շրջապատված են, գտնվում են կործանման եզրին»:

Ուշադրություն դարձնենք. Յուսեյնովը սկզբից ասել է, որ Աղդամից շարժվել են դեպի Շելլու փետրվարի 27-ի առավոտյան ժամը 9-ի սահմաններում: Քննիչի լրացուցիչ հարցին պատասխանելիս նշել է, որ փետրվարի 26-ին «Աղդամ քաղաք էին հասել Խոջալու քաղաքից վիրավորներ եւ պատմել, որ...»: Դրանով նա փորձ է արել «պոստ-ֆակտում բնույթ» տալ ԱԺԾ ջոկատի ռազմերթին, բայց նույն տեղում էլ խոստովանել է, որ «Խոջալուի բնակիչները ռացիայով օգնություն էին խնդրում...»:

Իսկ դա կարող էր տեղի ունենալ միայն փետրվարի 26-ի գիշերը: Ահա փաստ, որ փետրվարի 26-ի գիշերը Աղդամից Շելլուի ուղղությամբ շարժվել է ԱԺԾ 200 հոգանոց ջոկատ: Եւս մեկ անգամ շեշտենք՝ զանգվածային սպանության վայրը Շելլու գյուղին մոտ Գարագայա կոչված տեղանքն է: Այստեղ են իրենց մահը գտել Խոջալուից անվտանգ հեռացած խաղաղ մարդիկ: Եւ Լաթիկ Յուսեյնովի ցուցմունքներից պետք է մի եզրակացություն անել միայն. նաեւ այդ 200 հոգանոց ջոկատն է «գրկաբաց դիմավորել» Խոջալուեցիներին:

Իսկ որ Ադրբեջանի դատախազության հատուկ կարեւոր գործերով քննիչի կազմած արձանագրությունը ոչ մի կապ չունի իրականության հետ, կարող ենք եւս մեկ անգամ ապացուցել նրա եւ «վկայի այս երկխոսությամբ.

«Չարց». Ասացեք, ի՞նչ եք տեսել Խոջալուի սպանված բնակիչների դիակների վրա:

Պատասխան.- Շատ դիակների վրա կային մարտական մեքենաների թրթուրների եւ անիվների հետքեր, դրանք պարզապես ճզմված էին, որոշ դիակների վրա ծակոտված էին աչքերը»: - Ադրբեջանի գլխավոր դատաբժշկական փորձագետի ստորագրած եզրակացության մեջ սպանվածների մահվան պատճառ նշված են «բեկորային, հրազենային եւ բուֆ գործիքի հարվածից վնասվածքները»: Փաստաթղթում ոչ մի խոսք չկա «մարտական մեքենաների թրթուրներից եւ անիվներից ճզմված դիակների» մասին: Այդ եզրակացությունը քրգործի նյութերից մեկն է:

Եւ՝ վերջին «կաթիլը». քննիչը հարցնում է ջոկատից սպանվածների մասին, խնդրում տալ նրանց անուն-ազգանունները: «Վկան» պատասխանում է. «Սպանվածներից ես միայն անունով գիտեմ Խոսրովին, Վազիֆին եւ Սամեդին, երեքն էլ՝ երիտասարդ: Ազգանունները կճշտեմ եւ այդ մասին կտեղեկացնեմ»: 1990-ից ԱԺԾ «ինքնապաշտպանության ջոկատի անդամ հանդիսացածն» ինչպե՞ս կարող էր անուն-ազգանունով չիմանալ իր նմաններին: Ուրեմն, դա տեղական ջոկատ չի եղել: Բերվել է ինչ-որ տեղից, կատարել իր գործը, ապա շտապել Բաքու, որպեսզի շրջապատի Մութալիբովի նստավայրը եւ պահանջի նրա հրաժարականը:

Եւ օրինաչափ է, որ այս որակի «վկայի» ոչ ծննդյան ամիս-ամսաթիվն է նշված, ոչ բնակության վայրի լրիվ հասցեն, ոչ՝ անձնագրի տվյալները: Այսպես պատահում է միայն վարձկան մարդասպանների հետ: Այդ կերպ Ադրբեջանի դատախազությունը «ալիբի է ստեղծել»՝ քողարկելով «վկայի» իրավաբանական ինքնությունը: Ադրբեջանում հնարավոր է գտնել հարյուրավոր Նաթիկ Իսա օղլու Յուսեյնով, բայց նրանցից ոչ մեկը չլինի նա, որին պետք է պատասխանատվության ենթարկել ակնհայտ կեղծ ցուցմունք տալու համար: Եւ բնական է, որ Մ. Յուսեյնովի ձեռքով Ն. Յուսեյնովի բառերից «ճիշտ կազմված եւ ընթերցված» արձանագրությունը թվագրված է «... մարտ, 1992թ.»: Սրանով ամեն ինչ ասված է. «Վկան» կրկնել է քննիչ Մանաֆովի կողմից «զննությանը արձանագրված փաստերը»:

Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդով

1990թ. ապրիլին Ադրբեջանի ԳԽ որոշմամբ ԼՂԻՄ Ասկերանի շրջանի Խոջալու գյուղին տրվել է «շրջանային ենթակայության քաղաքի» կարգավիճակ: Հայտնի չէ՝ այնտեղ «քաղաքապետի» ընտրություններ անցկացվե՞լ են, թե՞ ոչ, բայց գյուղական խորհրդի գործկոմի նախագահ Էլման Մամեդովն այդ պահից համարվել է «գործադիր իշխանության ղեկավար»: Ավելի ուշ, երբ Ադրբեջանի ԳԽ-ն «լուծարել է» Ասկերանի շրջանը եւ վերանվանել «Խոջալուի», Մամեդովին վերապահվել է «Խոջալուի շրջանի գործադիր իշխանության ղեկավարի» լիազորություն: Թե ադրբեջանական, թե այլ աղբյուրներ Խոջալուի դեպքերի վերաբերյալ առավել հաճախ հենց նրան են հղումներ անում:

Խոջալուի դեպքերից հետո Մամեդովն առաջին հարցազրույցը տվել է 1992թ.-ի փետրվարի 27-ին՝ Ադդամում: Հարցազրույցը վարել է Չինգիզ Մուստաֆաեւը: (տես՝ http://www.youtube.com/results?search_query=%D0%) Տեսագրությունում Մամեդովը զինվորական համազգեստով է:

Առավել հետաքրքրական հարցերը հետեւյալն են.

- Փետրվարի 25-ի դրությամբ որքա՞ն էր Խոջալուի բնակչությունը:

-Մոտավորապես՝ 3000: Մինչ այդ, փառք աստօժ, կարողացել էինք կանանց, ծերերին եւ երեխաներին մաս-մաս դուրս բերել, մարդկանց մի մասը, որ ժամանակին գնացել էր Ադդամ եւ ուղղաթիռ չլինելու պատճառով մնացել այնտեղ:

- Ինչպե՞ս սկսվեց գրոհը:

- Փետրվարի 24-ին ես ռադիոկապով Ադդամում գտնվող ղեկավարությանը տեղեկացրել եմ, որ Սումգայիթի դեպքերի տարեդարձի առթիվ հայերը Խոջալուն գրավելու հուժկու պատրաստություն են տեսել, մտադիր են մեզ ոչնչացնել: Այդ տեղեկությունն էլ մենք ունեինք գերի վերցված հայից: (Հետագա հարցազրույցներում, որպես վկա տված ցուցմունքներում Մամեդովն այս փաստը, որ Խոջալուում ռազմագործողության նախօրեին հայ պատանդներ են եղել, այլևս չի նշել- Վ. Ա.)

- Փետրվարի 25-ի ժամը 9-ի մոտավորապես կեսին (20:30-ին- Վ. Ա.)

Խոջալուն բոլոր կողմերից սկսեցին շրջափակման մեջ առնել: Ջրահատեխնիկան՝ ԲՏՌ-ները, ԲՌԴՄ-ները, ԲՄՊ-ները, ինչպես նաեւ տանկերը մոտավորապես 1-1,5-2կմ հեռավորության վրա շրջափակեցին Խոջալուն: Ժամը մոտ 22:30-ին, գուցե մի-երկու րոպե սխալվում եմ, սկսվեց կրակը:

- Ինչու՞ մեր կողմից դրանց դեմ որեւէ քայլ չի ձեռնարկվել:

-Նախ ասեմ, որ Խոջալուում մենք զրահատեխնիկայի դեմ զենք չու՛նեմք: Երկրորդ, դա (զրահատեխնիկայի ոչնչացումը- Վ. Ա.) պիտի արվեր Ադրբեջանի կողմից՝ Աղդամից, Շուշիից: (Վկայություն չէ՞, որ Մամեդովը տեղյակ է եղել, որ Խոջալուի դեմ հայկական ուժերի հարձակման դեպքում Շուշիից եւ Աղդամից պետք է համապատասխան քայլեր ձեռնարկվեին- Վ. Ա.): Բայց մենք սկզբից մտածեցինք, որ տղամարդկություն չէ թողնել-փախչելը, հանգստացրինք բնակիչներին, որ, գուցե, սադրանք է կամ ուրիշ ինչ-որ բան են ուզում ասել (հայկական ուժերը- Վ. Ա.):

Միջանկյալ նկատեմք Մամեդովի խոսքի չափազանց կարեւոր հակասությունը. նա ասում է, որ փետրվարի 24-ին «գերի վերցված» հայից տեղեկացված էր, որ «Սումգայիթի տարեդարձի առթիվ հայերը Խոջալուում գրավելու հուժկու պատրաստություն են տեսել, մտադիր են մեզ (Խոջալուում) ոչնչացնել»: Այդ դեպքում փետրվարի 25-ի ժամը 20:30-ից մինչեւ 22:30-ը ժամանակահատվածում ինչպե՞ս կարող էր կասկածել, թե «գուցե սադրանք է կամ հայերն ուրիշ ինչ-որ բան են ուզում ասել»: Ո՞րն է տրամաբանությունը, երբ նախաօրոք գիտեր, նույնիսկ ռադիոկապով Աղդամ էր հայտնել, որ Խոջալուում գրոհի է ենթարկվելու, բայց հանգստացնում է բնակչությանը, որ «տղամարդկություն չէ թողնել-փախչելը, գուցե սադրանք է»:

Այս պահը պետք է ուշադրության առնվի իր մարդասիրական նշանակությամբ: Հայկական ուժերը, ինչպես արձանագրված է «Մեմորիալ»-ի հաշվետվության մեջ, (<http://www.memo.ru/hr/hotpoints/karabah/Hojaly/index.htm>) մի քանի օր շարունակ ռադիոբարձրախոսներով Խոջալուին իրազեկել են, որ ռազմագործողություն է նախապատրաստվում, նշել խաղաղ բնակչության համար թողնվելիք միջանցքի ուղղությունը: Այդ մասին «Մեմորիալ»-ին վկայել է Խոջալուի առնվազը մի քանի բնակիչ: Փետրվարի 25-ի ժամը 20:30-ի սահմաններում Խոջալուին մոտեցել է զրահատեխնիկա, բայց ոչ թե «բոլոր», ինչպես Մամեդովն է ասում, այլ՝ մեկ, ընդհանուր ասած՝ հարավային ուղղությունից: Երկու ժամ շարունակ զրահատեխնիկան որեւէ գործողություն չի ձեռնարկել: Դա բավարար ժամանակ էր, որպեսզի Խոջալուում այդ պահի դրությամբ մնացած խաղաղ բնակչությունը կազմակերպված դուրս բերվեր դեպի մարդասիրական միջանցք, հեռացվեր սպասվող հարձակման գոտուց:

«Գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդովը, մինչդեռ, որ ի պաշտոնե եւ համագյուղացի լինելու հանգամանքով գոնե պար-

տավոր էր ամեն ինչ անել, որպեսզի խաղաղ բնակչությունը չտուժի, ընդհակառակը, ինչպես ինքն է վկայել, ոչ միայն քայլ չի ձեռնարկել, այլև փաստորեն խոչընդոտել է մարդկանց, հայտարարել, որ «թողնել-փախչելը տղամարդկություն չէ», ապակողմնորոշել, որ «գուցե սադրանք է կամ ուրիշ ինչ-որ բան են ուզում (հայերն) ասել»:

Շարունակենք հետևել Մամեդով-Մուստաֆաեի երկխոսությանը:

- Որքան էլ ծանր լինի, այնուամենայնիվ, ի՞նչ եղավ հետո:

- Չպետք է ասել, որ մենք անմիջապես լքել ենք Խոջալուն: Ոչ, 2 ժամ մեր հերոս տղաները դիմադրել են: Նրանցից ինչքան է ընկել այնտեղ (Խոջալունում): Բայց հետո արդեն անհնար էր: Մենք դուրս եկանք եւ սառցասառը գետերով, ձյունապատ անտառներով անցանք մոտ 10կմ: Արդեն գտնվում էինք Աղդամից 2-3կմ հեռավորության վրա:

Լույսը բացվեց (փետրվարի 26-ի առավոտ.-Վ.Ա.), գտնվում էինք բլրապատ տեղանքում, անտառը վերջացել էր: Դու մի ասա, հենց այստեղ էին մեզ սպասում հայերը: Նրանք բոլոր բարձունքներում տեխնիկա էին դրել, գնդացիորներ: Նրանք ոչ ոքի չէին խնայում՝ կամանց, ծերերին, երեխաներին, հիվանդներին: Նրանք գնդացիորով կրակում էին մանուկների բերանի մեջ, գլուխներին... Դուք հավանաբար այդ կադրերը կնկարեք եւ կտեսնեք...

«Լույսը բացվել է», այսինքն՝ փետրվարի 26-ի առավոտը: Խոսքը «բարձունքների վրա դարանակալած հայերի կողմից գնդացրային կրակի համար» տեսանելիության չափով «լույսը բացվելու» մասին է: Քանի որ Մամեդովն ասում է, որ այդ ժամանակ են խոջալուեցիները «դիմահար գնդակահարվել»: Նա վկայում է, որ Խոջալուի գրոհն սկսվել է 22:30-ին, իրենք «2 ժամ դիմադրել, հետո հեռացել են»: Ուրեմն Մամեդովը Խոջալուից դուրս է եկել փետրվարի 26-ի ժամը 00:30-ի սահմաններում: Նրանք անցել են «մոտ 10կմ ճանապարհ եւ գտնվել Աղդամից 2-3կմ հեռավորության վրա, երբ լույսը բացվել է եւ ենթարկվել են հայկական ուժերի կրակին»:

10կմ ճանապարհը մարդ անցնում է 2-2,5 ժամում: Համարենք, որ «անտառներով քայլելու» դեպքում, թեև ճանապարհին անանցանելի անտառներ չեն եղել, ժամանակը մի փոքր կերկարեր, բայց ամեն դեպքում 00:30-ին Խոջալուից հեռացած մարդիկ Աղդամից 2-3 կմ հեռավորության վրա կգտնվեին ոչ ուշ, քան ժամը 5-6-ին: Իսկ այդ ժամին ձմեռային օրվա լույսը չէր բացվի, «դարանակալած հայերի» համար նրանք տեսանելի չէին լինի: Մամեդովը կամ ինչ-որ բան շփոթում, կամ պարզապես կեղծում է:

- Ի՞նչ տեղեկություններ ունեք կորուստների մասին,- հարցնում է

Մուստաֆաեւը:

- Կա 1000-ից ավելի սպանված, 200 վիրավոր գտնվում է Աղդամում, 300 հոգի մնացել է պատանդ,- պատասխանում է Մամեդովը:

Հարցազրույցը, ինչպես ասացինք, տեսագրվել է փետրվարի 27-ին, դեպքերի հաջորդ օրը: Ուստի էլ ման Մամեդովը կարող էր ստույգ տեղյակ լինել միայն Աղդամ հասածների, բայց երբեք՝ զոհվածների կամ «պատանդ մնացածների» թվաքանակին: Կարելի է ենթադրել, որ նրան ոչ այնքան մարդկանց ճակատագիրը, որքան «հայկական ֆաշիզմի» թեման է հուզել: Այս հանգամանքը խոր վերլուծության կարիք ունի: Մանավանդ, որ Մամեդովը թեման ամփոփելիս անում է քաղաքական լրջագույն եզրահանգումներ՝ նկատել տալով Ադրբեջանի համար խոջալուի ռազմավարական կարեւորությունը, այն դերը, որ ունեն «60 000-անոց Ստեփանակերտն Ասկերանից բաժանելու գործում»:

Այսքանով էլ ման Մամեդովի վկայությունները չեն սպառվում: 1992թ. մայիսի 15-19-ին նա, որպես խոջալուի դեպքերով հարուցված քրգործով անցնող վկա, հարցաքննվել է Ադրբեջանի գլխավոր դատախազին առնչված հատուկ կարեւոր գործերով քննիչի կողմից: Հարցաքննության ընթացքում նրան լրացուցիչ հարցեր չեն առաջադրվել: Արձանագրությունը ինքնագիր է, ադրբեջաներեն:

Դա հիմնականում քաղաքական «դիմանկարի» փորձ է, որ աչքի է ընկնում ճոռոմախոս ինքնագովազդումով: Այդուհանդերձ, առկա են նաեւ ուշագրավ փաստեր: Մամեդովը փաստել է, որ 1992-ի տարեսկզբի դրությամբ խոջալուի «կանանց, երեխաների եւ ծերերի ավելի քան 60-70 տոկոսը տարհանված էր»:

Այնուհետեւ Մամեդովը վկայում է, որ 1992թ. փետրվարի 10-ին «ուղղաթիռով հեռացել է» խոջալուից, հետագա օրերին գտնվել Բաքվում, որտեղ հանդիպումներ է ունեցել պաշտպանության նախարարությունում եւ կառավարությունում: Նա բավական մանրամասնորեն է պատմում, մասնավորապես, վարչապետ Հասան Հասանովի հետ հանդիպման մասին:

Որեւէ մեկը, անշուշտ, Ադրբեջանում չի հետաքրքրվել, թե ինչու՞ խոջալուի «գործադիր իշխանության ղեկավարը» չի եղել Այազ Մութալիբովի մոտ կամ չի փորձել արժանանալ նախագահի ընդունելությանը, այլ հանդիպել է վարչապետ Հասանովի հետ, մի մարդու, որ հետագա ներքաղաքական անցուղարձից հետո ոչ միայն չի շնորհագրվել, այլ, ընդհակառակը, Հեյդար Ալիևի իշխանության վերադառնալուց հետո նրա կառավարությունում նշանակվել է արտգործնախարար (պաշտոնից ազատվել է 1998-ի փետրվարի 16-ին՝ «Եվրոպա» հյուրանոցի

շինարարության և շահագործումը կազմակերպելու ժամանակ ԱԳՆ թույլ տված անօրինական գործողությունների համար), ապա «պատվավոր աքսորի» է ուղարկվել Լեհաստան՝ որպես Ադրբեջանի արտակարգ և լիազոր դեսպան:

Ինչո՞վ է ավարտվել էլման Մամեդովի առաքելությունը: Փետրվարի 13-ին նա Գյանջայից ուղղաթիռով վերադարձել է Խոջալու: Այդ օրը, ըստ նրա վկայության, Գյանջա-Խոջալու եւ հակառակ ուղղությամբ ՄԻ-24, ՄԻ-26 եւ ՄԻ-8 ուղղաթիռներով «մի քանի թռիչքներ են իրականացվել»: Արդյունքում տարհանվել են «300 -ից ավելի կին, երեխա եւ ծեր»։ Հավելենք, որ մինչ այդ նա վկայել է, որ 1992-ի տարեսկզբի դրությամբ «կանանց, երեխաների եւ ծերերի 60-70 տոկոսը էվակուացվել է»:

«Ինքնապաշտպանության» ուժերի թվաքանակի եւ ունեցած զենքի ու սպառազինությունների մասին վկայելով՝ Մամեդովը նշել է Խոջալուի գումարտակը՝ 254 «կամավորականի», ոստիկանության Խոջալուի «բաժինը»՝ 50 հոգու, ՊՆ ստորաբաժանումը՝ 30 զինվորի եւ օդանավակայանի «պարետությունը»՝ 30 «հատուկչոկատայինի» ընդգրկմամբ: Ընդհանուր թվով, հետեւաբար, Խոջալուում գտնվել է 364 զինառյալ:

Բացի այդ, Մամեդովը նշել է, որ «տեղական բնակչությունն էլ էր հերթափոխի կանգնում»: Ասվածից հետեւում է, որ նախ՝ մյուս զինառյալները տեղացի չէին, երկրորդ՝ զենքի տակ էր դրվել նաեւ Խոջալուում մնացած արական բնակչության մի զգալի մասը եւս: Ինչ վերաբերում է զենքերին եւ սպառազինությանը, ապա էլման Մամեդովը նշում է «ավտոմատ հրացաններ եւ ատրճանակներ», ձեռքի գնդացիներ եւ նռնակներ, ԱԳՍ ավտոմատ նռնակներ, երկու զրահամեքենա, ինչպես նաեւ՝ «ԿամԱԶ» մակնիշի բեռնատար ավտոմեքենաների վրա «հարմարեցված մեկ «Ալազան» եւ մեկ «Կրիստալ» հրետանային համակարգ»:

Ինչպես տեսնում ենք, Խոջալուն ոչ թե «անպաշտպան խաղաղ բնակավայր», այլ ըստ հնարավորի խիստ ամրացված ռազմական հենակետ է պատկերվում նույնիսկ ըստ նրա «գործադիր իշխանության ղեկավարի»՝ Ադրբեջանի գլխավոր դատախազությանը տված վկայությունների: Իրական պատկերը, անշուշտ, այլ է եղել, բայց մենք չենք ծավալվում՝ նպատակ ունենալով զուտ ադրբեջանական կողմի տվյալների հիման վրա բացահայտելու պաշտոնական Բաքվի կեղծիքը:

Խիստ ուշագրավ է Մամեդովի վկայության մի հատվածը, որտեղ նա պատմում է փետրվարի 24-ին Խոջալուից Ադրբեջանի հեռուստատեսության աշխատակից Յիջրան Հուսեյնովի հետ ունեցած հեռախոսագ-

րույցի մասին: Ըստ այդմ, նա հեռուստալրագրողին խնդրել է իր անու-
նից «ուղիղ եթերում դիմել ողջ ադրբեջանական ժողովրդին եւ ահա-
զանգել, որ Խոջալուն առնված է պաշարման օդակի մեջ, թող ով կա-
րող է՝ օգնության հասնի»:

Սա «անհույս մարդու հոգու ճի՞չ» է եղել, թե՞ քաղաքական սադ-
րանք: Ընդ որում, Մամեդովը նման բան ասել է, երբ Մուֆալիբովն ար-
դեն տապալված էր եւ՝ ակնհայտ, որ Ադրբեջանում իշխանության է գա-
լիս ԱժԾ-ն: «Չետագայում իմացա, որ իմ խնդրանքը չի կատարվել»,
- ադրբեջանական ժողովրդին ուղիղ եթերում կոչ անելու մասին վկայել
է Մամեդովը: Չարկ ենք համարում հիշեցնել, որ մինչ այդ նա Բաքվում
հանդիպել էր «գորշ կարդինալի»՝ միաժամանակ եւ Չեյդար Ալիեւի, եւ
ԱժԾ «մարդու» համարում ունեցող Չասան Չասանովի հետ:

Բուն ռազմագործողության մասին Մամեդովը դատախազությունում
վկայել է, որ փետրվարի 25-ի ժամը «նոտավորապես 20:30-ի սահման-
ներում մտել է տուն՝ հաց ուտելու»: Ովքե՞ր էին իր հետ տանը՝ ոչինչ
ասված չէ: Այնուհետեւ նա վկայել է, որ «վերին թաղամասից հեռախո-
սով հայտնել են, որ Խոջալուի եւ հայկական Նորագյուղ գյուղի միջեւ
ճանապարհով մի ԲՄՊ է անցել»:

Ադրբեջանցի ուսումնասիրող Յաղուբլիի «Խոջալուի կոտորածը»
վերնագրով ուսումնասիրության մեջ նույնի վերաբերյալ Մամեդովի
խոսքերը բերված են այսպես. «Ժամը նոտավորապես 9-ի (21) սահ-
մաններում ինձ տեղեկացրին, որ Խոջալուի «ֆիննական տնակներ»
թաղամասի մոտով մեկ ԲՄՊ (հետեւակի մարտական մեքենա) է անցել:
Չետո ինձ ասացին, որ Աղդամից հաղորդել են, որ 4 տանկ է գալու՝ չկ-
րակենք: Մինչեւ հիմա էլ պարզ չէ, թե ով է այդ կեղծ տեղեկությունը
տարածել»: (*տես՝ www.erevangala500.com*)

Չինգիզ Մուստաֆաեւին տված հարցազրույցում էլնան Մամեդովն
ասում է, որ «գրահատեխնիկան Խոջալուն շրջափակել է ժամը 20:30-ի
սահմաններում, բայց՝ 1-1,5-2 կմ հեռավորության վրա»: Դատախազու-
թյանը տված վկայությամբ նույն 20:30-ին «մտել է տուն՝ հաց ուտելու,
վերին թաղամասից հեռախոսով հայտնել են, որ Խոջալուի եւ հայկա-
կան Նորագյուղ գյուղի միջեւ ճանապարհով մի ԲՄՊ (հետեւակի մար-
տական մեքենա) է անցել», իսկ Յաղուբլիին էլ պատմել, որ «ժամը նո-
տավորապես 9-ի (21) սահմաններում» տեղեկացել է, որ «Խոջալուի
«ֆիննական տնակներ» թաղամասի մոտով մեկ ԲՄՊ (հետեւակի մար-
տական մեքենա) է անցել»:

Ընդ որում, նա Յաղուբլիին ասել է, որ Աղդամից «հաղորդել են, որ
4 տանկ է գալու՝ չկրակեք», մի փաստ, որ Մամեդովը դատախազու-

թյան քննիչին չի վկայել: Ինչու: Ի՞նչ նպատակադրվածությամբ է նա քննությունից թաքցրել փետրվարի 25-ի ժամը 20:30-ի սահմաններում Աղղամից Խոջալու փոխանցված «կեղծ տեղեկատվության» փաստը: Ու՞մ է այդպիսով ապահովագրել հետագա անցանկալի հարցադրումներից:

Բացի այդ, նա չի ասում՝ ո՞վ է իրեն իրազեկել Աղղամից «կեղծ տեղեկատվության» մասին, ինչը քննությանը թույլ կտար պարզելու, թե Աղղամից ո՞վ է փետրվարի 25-ի ժամը 20:30-ի սահմաններում Խոջալուի հետ ռադիո կամ հեռախոսակապ հաստատել: Արտառոց է նաեւ, որ մի դեպքում Մամեդովին ասել են «Խոջալուի եւ հայկական Նորագյուղ գյուղի միջեւ ճանապարհով», մյուսում՝ «Խոջալուի «ֆինանսական տնակներ» կոչվող թաղամասի մոտով անցած ԲՄՊ-ի (հետեւակի մարտական մեքենա)» մասին:

Այսպես ենք ասում, քանի որ առաջինը եւ երկրորդը տրամագծորեն հակառակ ուղղություններ են: Մանավանդ որ շարունակելով, Մամեդովը դատախազության քննիչին վկայել է. «Այնուհետեւ Խոջալուի բոլոր ծայրերից զանգեցին եւ ասացին, որ Բալուջայից (Ասկերանի շրջանի ներկայիս Այգեստան գյուղից.- Վ. Ա.), Դաշբուլաղից (Ներկայումս՝ Աստղաշեն.- Վ. Ա.), Մեհթիքենդից (Ներկայումս՝ Լուսածոր.- Վ. Ա.) նույնպես տեխնիկա է մոտենում» եւ դարձյալ չի անդրադարձել «ֆինանսական տնակներ» թաղամասի կողմից «անցած ԲՄՊ-ին»: Դրանից հետո Մամեդովը մտել է «կապի բաժանմունք եւ հեռախոսով ու ռացիայով (ռադիոկապով) Ադրբեջանի բոլոր ռադիոկայաններին (զինվորական) տեղեկացրել, որ Խոջալուն շրջապատված է, հետո տվել տազնապի ազդանշան»:

Վերջինս, հավանաբար, վերաբերել է գյուղում մնացած բնակիչներին, որպեսզի թողնեն տները եւ հեռանան: Մինչդեռ Չինգիզ Մուստաֆաեւին տված հարցազրույցում ասել է, որ «թողնել-փախչելը տղամարդկությունն է, մարդկանց հանգստացրել է, որ, զուցե, սադրանք է կամ ուրիշ ինչ-որ բան են ուզում (հայերն) ասել»: Դատախազությանը տված ցուցմունքներում Մամեդովը ոչ մի խոսք չի ասել խաղաղ բնակչության մասին՝ իրեն ներկայացնելով զուտ որպես զինվորականի: Մերկացնող է նրա վկայությունը, որ «տեսել է հետեւակի երեք մարտական մեքենա միայն»: Մինչդեռ այսօր նա մամուլի ասուլիս է տալիս եւ խոսում «շուրջ երեք տասնյակ տանկի եւ ԲՄՊ-ի մասին»: Մամեդովի վկայություններում բառ իսկ չկա Խոջալուն «բոլոր կողմերից հուժկու հրթիռահրետակոծության ենթարկելու», ինչպես նաեւ՝ օդանավակայանին հարող թաղամասի «տները հրկիզելու» մասին:

Նա վկայել է, որ ութ հոգով «անցել են խրամափոսը եւ իջել դեպի Կարկառի գետահուն՝ թաքնվելով մի ձորակում», որտեղ իրենց «հայտնաբերել են հայերը եւ կրակ բացել», սակայն իրենք «կարողացել են լռեցնել նրանց»: Փաստորեն նա հաստատել է, որ ինքը եւ մնացածները զինված են եղել: Ուշագրավ է, որ դատախազությանը տված ցուցմունքներում Մամեդովը հետագա իրադարձությունների մասին գրեթե ոչինչ չի պատմել: Փոխարենը Յաղուբլիին տված հարցազրույցում նա նկարագրել է, որ Աղդամից 2-3կմ հեռավորության վրա «ընկնելով հայկական ուժերի կրակի տակ», իրենք (առանց անուններ կամ գոնե թվաքանակ նշելու) «մի ձորակում մինչեւ փետրվարի 26-ի երեկոյան կողմ փոխհրաձգության մեջ են եղել իրենց շրջապատած հայերի հետ եւ միայն մթնելուց հետո, երբ սկսել է ձյուն տեղալ, կարողացել են հասնել Աղդամ»:

Ձանազան աղբյուրներում էլման Մամեդովը հիշատակվում է որպես անձ, որ «խոջալուի դեպքերի ժամանակ 30 հարազատ է կորցրել»: Ոչ Չինգիզ Մուստաֆաեւի հետ հարցազրույցում, ոչ դատախազության քննիչին տված ցուցմունքներում, ոչ էլ Յաղուբլիին հայտնած տեղեկություններում, այդուհանդերձ, նա այդ «փաստը» չի հիշատակել: Եզրակացություններ անելու իրավունքը թողնում ենք ընթերցողին:

«Դատախազ» Աթաքիչի Աթաքիչիելի առեղծվածը

Ե՞րբ է սույն անձնավորությունը խոջալուում անցել «պաշտոնական պարտականությունների կատարմանը»: Նա նշանակվել է «քաղաքի», թե՛ «խոջալուի շրջանի դատախազ»: Աղբյուրներն այդ մասին լուում են: Հայտնի է, սակայն, որ Աթաքիչիելը ծնունդով ոչ միայն խոջալուից, այլև ընդհանրապես նախկին ԼՂԻՄ-ից չէ: Հգիտենք՝ ե՞րբ, բայց նա խոջալու է տեղափոխվել Լեռնային Ղարաբաղին հարակից Աղջաբեղու շրջանից:

Խնդիր է նաեւ, թե ու՞մ է պետք եղել, որ 2-2,5 հազ. բնակիչ ունեցող գյուղում, որի հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ 1991թ. հոկտեմբերի 30-ից միայն ուղղաթիռների միջոցով էր իրականացվում, «դատախազություն» բացվի եւ «դատախազ» նշանակվի իրավիճակին կատարելապես անտեղյակ մեկը: Ըստ երեւույթին, Աղբեջանի իշխանությունները նպատակադրված են եղել Լեռնային Ղարաբաղն «ազատագրելուց» հետո իրոք կազմավորել խոջալու կենտրոնով վարչական շրջան: Այդ իսկ պատճառով հոգացել են ունենալ «գործադիր իշխանության ղեկավար», «դատախազ», ՆԳ «շրջաբժնի պետ»:

Ի՞նչ գործունեություն է խոջալուում ծավալել Աթաքիչիելը: Դարձյալ հայտնի չէ: Աղբեջանի դատախազությունում իբրեւ վկա հարցաքննության ժամանակ նա խոստովանել է, որ խոջալուի «դատախազությունը» փաստացի չի գործել: «Դատախազությունը չի ունեցել աշխատակիցներ, տրանսպորտային միջոց», - ասել է նա եւ ավելացրել, որ ինքը «նստավայր ունեցել է «գործադիր իշխանության» (չակերտները մերն են- Վ. Ա.) շենքում»: (*տես՝ www.erevangala500.com*)

Խոջալուի «ինքնապաշտպանական» ուժերի մասին հարցին Աթաքիչիելը դժվարացել է փաստական պատասխան տալ, միայն հիշել է ՊՆ կողմից խոջալու ուղարկված ստորաբաժանման հրամանատարի՝ «բաքվեցի Թոֆիկի» անունը: Այս հանգամանքը վկայում է, որ Աթաքիչիելը խոջալուում նույնիսկ մշտապես չի բնակվել: Հակառակ դեպքում նա հազիվ թե տեղյակ չլիներ գյուղի «ինքնապաշտպանական» հնարավորություններին, չիմանար ստորաբաժանումների հրամանատարների անուն-ազգանունները:

Աթաքիչիելի անունը խոջալուի դեպքերի մասին շրջանառվում է միայն մի կտրվածքով. նրան է վերագրվում դեռես 1991-ի դեկտեմբերի կեսերին եւ 92-ի փետրվարի 24-ին Մութալիբովին «տագնապալի հեռագիր հղելու» դերակատարությունը: Աղբյուրներում այդ հեռագրերի բնօրինակները պահպանվում են: Բովանդակային առումով առաջինը

բնութագրում է ԼՂ-ից ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի դուրսբերումից հետո ստեղծված ռազմա-քաղաքական իրավիճակը:

Ուշագրավ է Աթաքիշիեի ասածն այն մասին, որ «Խոջալուի բնակչությունն ուզում է թողնել-հեռանալ»: Նա այդպիսի հեռանկարը «չափազանց անցանկալի» է համարում, քանի որ «դա կնշանակի Խոջալուն հանձնել հայերին, իսկ Ղարաբաղի բախտը վճռվում է Խոջալուն»: Աթաքիշիեի, այսպիսով, ոչ թե խաղաղ բնակչության անվտանգության, այլ «Խոջալուի պաշտպանությունն ամրապնդելու» հարց է առաջադրել Մութալիբովին: «Մեզ մոտ ամեն ինչ սպառվում է, կարծում են, հասկանալի է, թե խոսքն ինչի մասին է, թանկագին ղեկավար», - սույն բազմանշանակ ընդհանրացմամբ է ավարտել նա առաջին հեռագիրը, որի պատճենը, չգիտես ինչու, նաև հասցեագրել է Ադրբեջանի գլխավոր դատախազին:

Մեզ համար առավել էական է Աթաքիշիեի երկրորդ հեռագիրը: Ոչ թե բովանդակության, այլ՝ ժամանակի եւ առաքման վայրի ու հասցեատերերի առումով: Այդ հեռագիրն ուղարկվել է 1992թ. փետրվարի 24-ին՝ Ադրամից: Հետեւաբար, այդ օրը Խոջալուի «դատախազ» Աթաքիշի Աթաքիշիեի գտնվել է Ադրամում: Ինչո՞ւ: Մի՞թե պատշաճ էր, որ «քաղաքի» կամ «շրջանի դատախազի» պաշտոնն զբաղեցնող անձը Խոջալուի համար ծանր պահին լքեր բնակավայրն ու հեռանար Ադրամ:

Իհարկե՞ ոչ: Նա գտնվում էր պետական կարեւորագույն ծառայության մեջ, մանավանդ, որ իրավիճակը պատերազմական էր եւ պարտավոր էր մինչեւ վերջ մնալ Խոջալուում: Ստացվում է, որ Աթաքիշիեի դասալի՞ք էր: Ըստ էության՝ այո: Այդ դեպքում հարց է առաջանում՝ Խոջալուի դեպքերով հարուցված քրգործով նա ինչո՞ւ է անցել «որպես վկա»: Կամ՝ ինչո՞ւ Ադրբեջանի դատախազությունը ծառայողական հետաքննություն չի անցկացրել՝ պարզելու Աթաքիշիեի կողմից Խոջալուն լքելու հանգամանքները: Կամ՝ եթե նման հետաքննություն անցկացվել է, ապա ինչո՞ւ ադրբեջանական աղբյուրներն այդ մասին համառորեն լռում են:

Ո՞ւմ է հասցեագրել Աթաքիշիեին իր երկրորդ հեռագիրը: Ադրբեջանի նախագահ Մութալիբովին, գլխավոր դատախազին եւ... պետական հեռուստատեսության «24 ժամ» լրատվական ծրագրին: Ամենաաղակող հանգամանքը վերջինն է: Պատկերացնելի՞ է, որ Խոջալուի «Մալիբեկլուի, Ղուշչուլարի եւ Ղարաղաղլուի ճակատագրին արժանանալու, եթե անհապաղ քայլեր չձեռնարկվեն» մասին ահազանգող, հանրապետության նախագահին ուղղված հեռագրի պատճենն ուղարկվի նաև հեռուստատեսության լրատվական ծրագրին: Այն էլ՝ Խո-

ջալուի «դատախազի» կողմից, որն ի պաշտոնե պարտավոր էր ոչ միայն պահել պետական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը, այլև հոգալ, որպեսզի ուրիշներն այն չտարածեն:

Ադրբեջանական աղբյուրներում պահպանվել է վկայություն, որ 1992 թ. փետրվարի 13-ի վերջին ուղղաթիռով Խոջալուից հեռացել է ՆԳ «շրջբաժնի պետ» Սաբիր Սամեդովը: «Ոչ ոք նրան պաշտոնից հետ չէր կանչել», - փաստում է ադրբեջանցի ուսումնասիրող Սամեդ Վելիմամեդովը: Կարծում ենք, որ «դատախազ» Աթաքիշիեւը նույնպես փետրվարի 13-ին էլ քել Խոջալուն: Համենայնդեպս, նա փետրվարի 24-ին նախորդող օրերին արդեն գտնվել է Աղդամում: Այդ է վկայում Ադրբեջանի ԳԽ փոխնախագահ Թամեռլան Գարաբեի ցուցմունքի այն մասը, որտեղ նա ասում է, որ «Խոջալուի դատախազ Աթաքիշի միջոցով մի «ԿամԱԶ» բեռ է ուղարկել Գյանջա, որպեսզի ուղղաթիռի գոնե մի քանի թռիչք արվի»: (տես՝ հաջորդիվ)

Աթաքիշիեւը նկատելի խնդիրներ է ունեցել եւ տարրական գրագիտության, եւ տրամաբանության հետ առհասարակ: Հարցաքննության թերթիկում նրա ձեռքով գրված տողերը վկայում են, որ այդ մարդը հազիվ թե բավարար, էլ չենք ասում՝ իրավաբանական, կրթություն ունեցել է: Փաստը, որ նա «пугает» ռուսերեն բառն ադրբեջաներեն գրել է «пугамот», ամեն ինչ ասում է: Ինչ վերաբերում է տրամաբանությանը, ապա բավական է ընդգծել, որ «վկայի» ցուցմունքներում նա բացիորեն խոստովանել է հետեւյալը. «Որպեսզի Ստեփանակերտում զրահատեխնիկայի վերանորոգման գործարանը չաշխատի, մենք խորտակել ենք էլեկտրագծերը, եւ Խոջալուն նույնպես զրկվել է հոսանքից»:

Որ 1992թ. տարեսկզբի դրությամբ Ստեփանակերտում «զրահատեխնիկայի վերանորոգման գործարան» չի աշխատել՝ ակնհայտ իրողություն է: Հետեւաբար, Խոջալուում կատարվել է գիտակցված դիվերսիա, որպեսզի մարդիկ Ստեփանակերտում մատնվեն ցրտահարության, լիովին կտրվեն արտաքին աշխարհից, զրկվեն բուժօգնությունից եւ այլն: Մի խոսքով, «դատախազ» Աթաքիշիեւը վկայել է, որ Խոջալուում Ստեփանակերտի եւ հարակից հայկական գյուղերի հանդեպ կատարվել է թշնամական գործողություն:

Աղդամուն

Ադրբեջանական աղբյուրները միահամուռ փաստում են, որ 1992թ. փետրվարի 24-ին Աղդամուն նախապատրաստվել է «Ասկերանի ուղղությունից ճեղքելու եւ Խոջալուն ապաշրջափակելու» ռազմագործողություն: Վերոհիշյալ Յաղուբլիի ուսումնասիրության մեջ վկայակոչված է ռազմագործողության հետեւյալ պատկերը. Աղդամից երկաթգծով պետք է առաջ շարժվեր զրահագնացք՝ գնացքաքարշի առջեւից ունենալով դատարկ ապրանքատար վագոններ, շարակազմը պետք է ունենար զրահատեխնիկայի հարթակներ, ավազով եւ խիճով բեռնված վագոններ: Հարձակման ընդհանուր ազդանշանը պետք է տրվեր Ջաբրաթ օդանավակայից Ասկերանի ուղղությամբ գրոհող երկու «Կրոկոդիլ» մարտական ուղղաթիռներից, ինչին պիտի հետեւեր մոտոհրաձգային գնդի հարձակումը Ասկերան քաղաքի վրա, իսկ «աշխարհագրային գունարտակները» պետք է գրոհեին Խրամորթի եւ Նախիջեւանիկի հայկական դիրքերը:

Ջրահագնացքի մասին ասվածն առասպել է: Այլ աղբյուրներ փոխանցում են, որ այն կազմավորվել է Գյանջայի երկաթուղային դեպոյում: Դա, իհարկե, բառիս իսկական իմաստով զրահագնացք չէր: Ադրբեջանցի ինժեներներն ուղղակի երկաթուղային գնացքաքարշը «զրահավորել են» շուրջ 1սմ հաստության մետաղաթիթեղներով: Ծախսը կազմել է 200 000 խորհրդային ռուբլի, որն «իրենց անձնական միջոցներից վճարել են Սուրեթ Հուսեյնովը եւ Ռասուլ Գուլիեւը»: Ջրահագնացքը հասցվել է Աղդամ: Այնտեղ են բերվել նաեւ համազարկային կրակի «Գրադ» երկու կայանք, 5 միավոր S72 տանկ:

Ձուտ ռազմական առումով չափազնաց հետաքրքրական են փոխգնդապետ Ինթիգամ Աբդուլլաեւի վկայությունները: Վերջինս Աղդամ էր գործուղվել, որպեսզի «օժանդակի շտաբի աշխատանքների կազմակերպմանը»: Մենք բաց ենք թողնում այս կամ այն զինվորականի կամ քաղաքական դեմքի մասին նրա բնութագրումները: Դրանք կարող են լինել նաեւ խիստ սուբյեկտիվ:

Էականը հետեւյալն է. Աղդամում իրոք նախապատրաստվել է Խոջալուն «ապաշրջափակելու» ռազմագործողություն, որը պետք է սկսվեր փետրվարի 25-ի ժամը 14:00-ին: Ըստ օպերատիվ պլանի, ռազմագործողությունը պետք է իրականացվեր մեկ մոտոհրաձգային գունար-

տակի, ՆԳՆ հատուկ նշանակության ջոկատի, ՆԳՆ պարեկապահնորդական գումարտակի եւ «տեղական ինքնապաշտպանության» երկու գումարտակի ընդգրկմամբ: Ջրահատեխնիկան՝ 5 T-72 տանկ, անձնակազմերով հանդերձ, ուղարկված է եղել Բաքվից, իսկ Բեյլագանից տեղ է հասցվել համազարկային կրակի 2 «Գրադ» կայանք:

Ընդամին, Աբդուլլաեւի վկայությամբ, արդեն փետրվարի 26-ի գիշերը «Գրադ» կայանքներից կրակ է բացվել Խոջալուի, ավելի հստակ՝ օդանավակայանի ուղղությամբ: Այս հանգամանքն ընդգծում ենք, քանի որ ադրբեջանական կողմի պաշտոնական վարկածով «առաջինը հրկիզվել են օդանավակայանին հարող թաղամասի տները», մինչդեռ երաշխիք չկա, որ հենց Աղդամից «Գրադ» կայանքներից արձակված հրթիռները չեն ավերել Խոջալուեցիների տները եւ դարձել հրդեհի ու մարդկային կորուստների պատճառ:

Միայն վերջին պահին է պարզվել, որ «օպերացիան ռազմաօդային աջակցություն չի ունենա»: Թեեւ ադրբեջանական կողմին հաջողվել էր «փախցնել» եւ Ջաբրաթ օդանավակայան հասցնել 8 մարտական ուղղաթիռ, ռուս օդաչուները հրաժարվել էին մասնակցել Խոջալուի «ապաշրջափակմանը», պատճառաբանելով, որ «ուղղաթիռները չունեն ջերմային հրթիռներից պաշտպանվելու համակարգ», իսկ ադրբեջանցի ռազմական օդաչուներ չեն գտնվել:

Ի՞նչ է կատարվել Աղդամում 1992թ. փետրվարի 23-24-25-ին: Ռազմագործողության նախօրեին հայտնի է դարձել, որ Բաքվից երկաթուղով ուղարկված զրահատեխնիկան «բռնագրավվել է»: Այն անցել է «ինքնապաշտպանության գումարտակներից մեկի հրամանատար» Յաղուբ Ռզաեւի ենթակայությանը: Նշանակված ժամին ոչ մի հրամանատար չի ներկայացել զինվորական շտաբ: Բոլոր ուժերը ցրվել են «իրենց հայտնի ուղղություններով»:

ՆԳՆ հատուկ ջոկատայինների ՁԻԼ-131 բեռնատար ավտոմեքենան «պայթել է ականի վրա, երբ հատուկջոկատայիններին տանում էր Խանաբադի ուղղությամբ հետախուզության», - վկայել է Ինթիգամ Աբդուլլաեւը՝ ակնարկելով, որ դեպքը տեղի է ունեցել ադրբեջանական կողմից վերահսկվող հատվածում: Իսկ դա շատ բան է ասում: Քննիչը ճշտող հարց է առաջադրել. «Ինչու՞ է ընտրվել ճեղքման հատկապես Շելլու-Խոջալու ուղղությունը», ինչին նա պատասխանել է. «Մենք գիտեինք, որ տարբեր հրամանատարներ մտադիր են հարձակվել իրենց հա-

մար ցանկալի ուղղությամբ, բայց քանի որ այդքան ուժեր չունեինք, ընտրել էինք այդ ուղղությունը՝ որպես ամենահարմարը»:

Այս հանգամանքը խիստ կարեւորվում է նրանով, որ արդեն փետրվարի 26-ի գիշերվա իրավիճակի մասին Աբդուլլաեւը վկայում է. «Մենք գիտեինք, որ Խոջալուից մարդիկ պիտի դուրս գան եւ շարժվեն դեպի Շելլու»: Այսինքն՝ Աղդամում իրազեկ էին, թե Խոջալուից նահանջող զորքը եւ բնակչությունը որ ուղղութեամբ են շարժվելու դեպի Աղդամ:

Փորձենք վերացարկվել ամեն ինչից. ակնհայտ է, որ ադրբեջանական կողմը Աղդամում բավարար ռազմական ռեսուրսներ ունեցել է, որպեսզի փորձեր ճեղքել Ասկերանի ուղղության ԼՂՀ ԻՈՒ դիրքերը, բայց «փետրվարի 25-ի օպերացիան, ինչպես եւ նախորդը, տապալվեց», վկայել է փոխգնդապետ Ինթիգամ Աբդուլլաեւը: Ինչու՞: Բացատրությունը միայն մեկն է. պատասխանատուները բառիս բուն իմաստով նենգադուլի են ենթարկել այն:

Այլ բան է, եթե ռազմագործողությունն սկսվեր եւ անհաջողության մատնվեր, այլ՝ որ այն ընդհանրապես տապալվում է, քանի որ «իրամատարներից ոչ ոք չտար չի ներկայանում»: Իսկ ու՞ր են գնացել այդ մարդիկ՝ ՆԳՆ հատուկ ջոկատայինների հրամանատար Ռովան Ջավադովը, Յաղուբ Մամեդովը, Ալլահվերդի Բադիրովը, Շիրին Միրզոեւը: Հայտնի՞ է, թե որտեղ են գտնվել նրանք փետրվարի 26-ի գիշերը եւ առավոտյան, ցերեկը, ի՞նչ առաջադրանք են կատարել»:

Ստույգ հայտնի է, որ փետրվարի 24-ին Աղդամում հարձակման է ենթարկվել ԱՊՀ բանակի ինժեներա-սակրավորական զււմարտակը: Ռազմական տեխնիկան, զինամթերքը լիովին բռնագրավվել է ԱԺԾ տեղական զինառյալների կողմից: Ընդհանուր հսկողությունն իրականացրել է Ադրբեջանի ԳԽ նախագահի տեղակալ Թամեռլան Գարաեւը: Խնդիր էր դրվել «ունենալու ականազերծող մարտական տեխնիկա», որը պիտի Ասկերանի ուղղությամբ գրոհից առաջ «սանրեր հայկական դիրքերի առաջապահ գիծը եւ տանկերի համար ապահով միջանցք բացեր»:

Նույն օրն ադրբեջանական կողմը տիրացել է ԽՍՀՄ Ջինված ուժերի Անդրկովկասյան օկրուգի համաբանակային զինապահեստին, որ գտնվել է Աղդամից հյուսիս՝ «Ուզունդարա» կոչվող տեղանքում: Ջինապահեստի հերթապահ մասի ազգությամբ ադրբեջանցի պետը զինաթափել է պահակախմբին, զինվորներին բանտարկել պահականո-

ցում, իսկ սպաներին սպառնացել, որ «կայաթեցնի առկա ողջ զինամթերքը»:

Ամենայն հավանականությամբ, դա նախօրոք պայմանավորված գործողություն էր: Ձինապահեստը, որտեղ ընդհանուր հաշվով կար երկաթուղային 1200 վագոն զինամթերք, հիմնականում՝ «Գրադ» կայանքի ռեակտիվ արկեր եւ հրաձգային զենքի փամփուշտներ, լիովին անցել է ԱԺԾ վերահսկողության տակ: Նույն գիշեր Գյանջայում տեղակայված 23-րդ դիվիզիայից «զինապահեստին վերատիրանալու փորձ է ձեռնարկվել»: Դեպի Ադդամ շարժվող զորախումբը, սակայն, Գարվենդ գյուղում հայտնվել է հոծ ամբոխի շրջափակման մեջ եւ «ստիպված վերադարձել»: Բացառված չէ, որ Գյանջա են հասել միայն զինվորները, իսկ մարտական տեխնիկան եւ զինամթերքը դարձյալ առգրավվել է:

Ձանազան «աղբյուրներ» փետրվարի 26-ի մասին անհավանական «նկարագրություններ» են անում: Մինչդեռ ցանկության դեպքում Ադրբեջանում կարող էին դեպքերի ամենաթարմ հետքերով պարզել եւ պատասխանատվության ենթարկել կարեւորագույն մարտական առաջադրանքը տապալած գոնե նրանց, որ զինվորական էին: Ինչպես, օրինակ, Ռովշան Ջավադովը եւ Շիրին Միրզոեւը, երկուսն էլ՝ փոխգնդապետ: Կամ՝ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Շահին Մուսաեւը:

Վերջինս առհասարակ առեղծվածային դեմք է: Նրա մասին ադրբեջանական աղբյուրներն ասում են, որ «ավարտել է Բաքվի համազորային ռազմական ուսումնարանը, ծառայել Աֆղանստանում, երկու անգամ վիրավորվել եւ 1989-ին ԽՍՀՄ զինված ուժերից զորացրվել որպես 2-րդ կարգի հաշմանդամ»: Չետագայում ապրել է Ուկրաինայում, 1991թ. «հայտնվել Ադրբեջանում եւ նշանակվել պաշտպանության նախարարի առաջին տեղակալ-գլխավոր շտաբի պետ՝ չներկայացնելով նույնիսկ իր ծառայողական գործը, որ մինչեւ վերջ էլ մնացել է Մոսկվայում»:

Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից հեռանալուց հետո Մուսաեւն «արխազ անջատողականների կողմից մասնակցել է վրաց-արխազական պատերազմին, իսկ հետո նրա անունը շրջանառվել է ռուս-չեչենական առաջին պատերազմի ժամանակ՝ որպես չեչեն դաշտային հրամանատարներից մեկի ռազմական խորհրդատուի»:

Չափազանց ուշագրավ է Ադդամի շրջանային հիվանդանոցի գլխա-

վոր բժիշկ Թարիել Էյվազովի վկայությունը, որ մեջբերել է Յաղուբլին: Ըստ այդմ, փետրվարի 25-ին «իրենց հանձնարարվել է (ու՞մ կողմից- Վ. Ա.) հիվանդանոցը, վիրահատական սեղանները պահել պատրաստի վիճակում, ծանր վիրավորներին Բաքու տեղափոխելու համար հատկացվել է երկու ուղղաթիռ»: Նույնիսկ ադրբեջանցի ուսումնասիրողը չի թաքցրել տարակուսանքը. «Ջարմանալի է, «կոտորածը» (չակերտները մերն են- Վ. Ա.) դեռևս չսկսված՝ դրան ընդամաջ արդեն նախապատրաստական աշխատանքներ են տարվել»:

Յաղուբլին, իհարկե, կեղծում է. բժիշկ Էյվազովին թիվ մեկ պատրաստության հանձնարարական է տրվել, քանի որ նույն օրը Աղղամից պետք է սկսվեր «Խոջալուի ապաշրջափակման ռազմագործողությունը»: Իրականում ադրբեջանական կողմը կանխաձրագրում էր ոչնչացնել Ասկերանի, Խրամորթի եւ Նախիջեւանիկի հայկական դիրքերը, ուժերը կենտրոնացնել Խոջալուում, որից հետո Ստեփանակերտը պիտի ենթարկվեր երկկողմանի հարձակման՝ Խոջալուից եւ Շուշիից:

Դեպքերն ընթացել են այլ ուղղությամբ. ադրբեջանական կողմից կանխաձրագրված փետրվարի 25-ի ռազմագործողությունը տապալվել է: ՆԳ փոխնախարար, «Ղարաբաղյան գոտում» զինված ուժերի ընդհանուր հրամանատար Թահիր Ալիեւը հայտարարել է, որ չունի հարձակման հրաման տալու լիազորություն, պատասխանատու է միայն արտակարգ դրության ռեժիմի համար, իսկ ԱԺԾ կողմից ՊՆ գործուղված Ֆահմին Չաջիեւը՝ հրաժարվել ստանձնելու պատասխանատվություն, քանի որ «որոշ մարդիկ Բաքվից հատուկ նպատակով եկել էին իրեն խանգարելու»:

Դրանից, այդուհանդերձ, չի հետեւում, թե Ադրբեջանում Ասկերանը ոչնչացնելու, ուժերը Խոջալուում կենտրոնացնելու եւ Ստեփանակերտը գրոհելու ռազմաքաղաքական ծրագիր մշակված չի եղել: Խնդիրն այս հարթությունում քննարկելու դեպքում Խոջալուի հանդեպ Աղղամի եւ Շուշիի բացահայտ անտարբերությունը շատ հեշտ է բացատրել. եթե Սութալիբովին հաջողվեր ճեղքել Ասկերանի ուղղությունը, ապա ռազմական իմաստով ԼՂ հարցը կլուծվեր ինքնին: Իսկ այդ դեպքում նա կդառնար «ազգային հերոս, հաղթանակած նախագահ», որի դեմ ընդդիմության ցանկացած ելույթ հանրության բացարձակ մեծամասնության կողմից կդապարտվեր:

ԱԺԾ-ն, որ խանաճիկի պես ենթարկվում էր Չեյդար Ալիեւին, չէր կա-

րող Մութալիբովին թույլ տալ վայելելու «Խոջալուում ԼՂ հարցը վճռելու» հաճույքը: Խոջալուի դեպքերին նախորդած օրերին Աղդամում ոչ միայն ռազմական, այլև քաղաքական նենգադուլ է տիրել: Ընդ որում, ճգնաժամը հրահրվել է Բաքվից: Պահպանվել է Ադրբեջանի նախագահի մոտ տեղի ունեցած խորհրդակցության սղագրությունը (*տես՝ www.erevangala 500.com*): Դիմելով ներկաներին, Մութալիբովը հարցնում է, թե նրանցից ո՞վ օրվա մեջ քանի անգամ է հեռախոսով կապվում «Ղարաբաղյան գոտում Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցիչ», փոխվարչապետ Մուսա Մամեդովի հետ:

Արձագանքում են միայն պաշտպանության եւ ՆԳ նախարարները: «Վատ է, մարդուն (Մուսա Մամեդովին) մենք խոստացել ենք ամեն կերպ օգնել, նա այնտեղ է՝ պատերազմական գոտում, իսկ կառավարությունից օգնություն չկա: Մի՞թե նախագահը (իր մասին է ասում-Վ.Ա.) ստիպված պիտի լինի ամենատարբեր հարցեր լուծել, մենք, ի՞նչ է, կառավարություն չունե՞նք», - գայրալի հարցնում է Մութալիբովը եւ պահանջում «վերջ տալ խայտառակությանը»:

Այստեղ հարկ է միջարկում անել: 1990 հունվարի 20-ի գիշերը, Բաքու գործ մտցնելուց ժամեր առաջ ԱԺԾ-ն շրջափակել էր կառավարական շենքերը եւ պահանջում էր Վեզիրովի հրաժարականը: Ինչպես վկայում է Ջարդուշտ Ալիզադեն (*տես՝ «Конец второй республике» http://azeribooks.narod.ru/politika/zardusht_alizade/konets_vtoroy_respublik.html*). «ճակատայինները» հասկանում էին, որ իրենցից եւ ոչ մեկը Վեզիրովի պաշտոնին՝ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, չի նշանակվի եւ առաջարկում էին Հասան Հասանովի թեկնածությունը: Մոսկվան այդ գաղափարը մերժել է. Հասանովը հայտնի էր որպես «Յեյդար Ալիևի մարդ»: Ի վերջո, ԱԺԾ-ն եւ Մոսկվայից Բաքու գործուղված Եվզենի Պրիմակովը համաձայնում են, եւ փոխզիջումային լուծումը գտնվում է. Վեզիրովի փոխարեն նշանակվում է Այազ Մութալիբովը, իսկ Հասանովը զբաղեցնում Նախարարների խորհրդի նախագահի (վարչապետի) պաշտոնը:

Ադրբեջանի կառավարությունը, ուրեմն, «Ղարաբաղյան գոտում նախագահի լիազոր ներկայացուցիչ» Մուսա Մամեդովին չօժանդակելու միանգամայն հասկանալի պատճառներ ուներ: Հասանովը միտումնավոր խոչընդոտում էր Մուսաեւին, որպեսզի Աղդամում Խոջալուի հետ կապված հարցերի լուծումը տապալվի, ինչը, բնականաբար,

պետք է հարուցեր արդարացի դժգոհություններ: Հայտնի է, որ 1992-ի փետրվարին Աղդամում գրեթե շուրջօրյա ցույցեր եւ հանրահավաքներ էին կազմակերպվում: «ԼՂ-ից ադրբեջանցի փախստականները» խստորեն դատապարտում էին Սուբալիբովին, նրան անվանում «թուլամորթ», «դավաճան, որ Ղարաբաղը ծախել է հայերին»:

Կան փաստեր, որ վկայում են «զայրացած խոջալուեցիների կողմից» Աղդամի օդանավակայանը գրավելու մի քանի փորձերի մասին: Մարդիկ, իբր, «պահանջում էին ուղղաթիռ հատկացնել, որպեսզի վերադառնան իրենց տները՝ Խոջալու»: Իհարկե, ձեւակերպումները քարոզչական են. Խոջալուից հեռացած ոչ ոք այնտեղ վերադառնալու ցանկություն այլեւս չէր ունենա, բայց որ ԱժԳ-ն Աղդամում հմտորեն ապակայունացնում էր իրավիճակը, փաստ է: Այս հարցում առանձնակի դերակատարություն է ունեցել Գասուն Քերիմովը՝ Շահբուլաղի քարհանքի երկարամյա տնօրենը, որ նաեւ Ադրբեջանի ԳԽ պատգամավոր էր:

Քերիմովը Հեյդար Ալիևի կոմունիստական իշխանության հենասյուներից մեկն էր Աղդամում: Նրա անմիջական ենթակայության տակ էր գործում նախկին քարգործ վարպետ Յաղուբ Ռգանեի ղեկավարած «ինքնապաշտպանական ջոկատը»: Փոխգնդապետ Ինթիգամ Աբդուլլաևի՝ որպես վկայի, հարցաքննության արձանագրության մեջ այս իմաստով մի հետաքրքրական պահ կա: Քննիչը հարց է ուղղում, թե արդյոք նա տեղա՞կ է Գասուն Քերիմովի եւ Ֆահմին Հաջիեւի «միջեւ թշնամական հարաբերություններից», ինչին հետեւում է խուսափողական պատասխան:

Այդուհանդերձ, Աբդուլլաևը հիշում է միջադեպ, երբ Քերիմովը Հաջիեւին մեղադրում է «դավաճանության մեջ եւ ասում, որ նա զենք է վաճառում»: Դարձյալ հիշեցնենք, որ Ֆահմին Հաջիեւը պաշտպանության նախարարությունից «հատուկ լիազորությամբ» Աղդամ էր ուղարկվել, որպեսզի «համակարգի տեղի զինված ուժերի փոխգործակցությունը»: Այլ կերպ ասած, նրան էր վերապահվել առանձին-առանձին ջոկատների եւ ՊՆ ու ՆԳՆ ենթակայության ստորաբաժանումների միջեւ «կապող օղակի» դերը: Հաջիեւի հասցեին Քերիմովի ելույթները, որոնցից մեկի մասին վկայել է Աբդուլլաևը, գալիս են ապացուցելու, որ քարհանքի ազդեցիկ տնօրենը գործել է ի վնաս ռազմական ուժերի համախմբան եւ կենտրոնացված հրամանատարության: «Ես նախկին

զինվորական եւ ԳԽ պատգամավոր եմ, քեզնից լավ գիտեմ՝ ինչ պիտի արվի», - բազմամարդ խորհրդակցության ժամանակ Ֆահմին Չաջիեւի երեսին շարտել է Գասուն Քերիմովը:

Մի շարք վկայություններ Գասուն Քերիմովին են վերագրում Աղղամի շրջանի գործադիր իշխանության ղեկավարի եւ ՆԳ բաժնի պետի պաշտոնանկության պահանջը՝ տառացիորեն Խոջալուի դեպքերի նախօրերին: Մութալիբովն ստիպված է եղել բավարարել Քերիմովի հավակնությունները, բայց՝ ոչ լրիվ: Նա Աղղամի շրջանի գործադիր իշխանության ղեկավար չի նշանակվել: Ըստ երեւոյթին, լրջագույն հակասություններ են եղել նա Աղղամի շրջանային ղեկավարության եւ «Ղարաբաղյան գոտում նախագահի լիազոր ներկայացուցիչ» Մուսա Սամեդովի միջեւ: Այնքան, որ վերջինս ստիպված է եղել անձամբ մասնակցել Փառուխ եւ Խրամորթ գյուղերի «ազատագրման» ռազմագործողությանը: Ինչպես ՆԳ փոխնախարար Թահիր Ալիեւն է վկայել, Խրամորթում իրենք «հազիվ են ազատվել գերի ընկնելու վտանգից»:

Միակ անձը, որ Խոջալուի դեպքերի կապակցությամբ Աղրբեջանում ենթարկվել է քրեական հետապնդման եւ դատվել, Ֆահմին Չաջիեւն է: Տարիներ անց, պատասխանելով հարցին, թե, «ի վերջո ո՞վ է Խոջալուի ողբերգության պատասխանատուն», Չաջիեւը պատասխանել է՝ Չեյդար Ալիեւը, եւ ավելացրել, որ «Աղղամում նրա ուղարկած մարդիկ զինվորներին քարոզում էին չկռվել, կազմակերպում, որ հազարավոր հեռագրեր ուղարկվեն Բաքու, որտեղ ասվում էր, որ պատրաստ են կռվել, եթե Չեյդար Ալիեւը վերադառնա եւ գլխավորի հանրապետությունը» (*տես՝ www.monitorjournal.com/2005-1/86/86-nedelya.htm*):

Ալիֆ Յաջիել. հերո՞ս, թե՞...

Ադրբեջանի նախագահի 1992թ. հունիսի 5-ի հրամանագրով Ալիֆ Լյաթիֆ օղլու Յաջիելին հետմահու շնորհվել է ազգային հերոսի կոչում: Պաշտոնական կենսագրության մեջ ասված է, որ նա «գոհվել է Խոջալուի գրոհի ժամանակ», ինչը չի համապատասխանում իրականությանը: Յաջիելը թաղված է Բաքվի «շահիդների ծառուղում», իսկ փաստ է, որ ադրբեջանական կողմը Խոջալուում գոհված զինծառայողների դիակներին «տեր չի կանգնել»: Այլուր կարողում ենք (*տես՝ www.erevangala500.com*), որ Յաջիելը սպանվել է «Քյաթուլի անտառում, «հայ գրոհայինների» (չակերտները մերն են.- Վ. Ա.) հետ դիմահար մարտում»:

Ալիֆ Յաջիելը ծնվել է 1953թ. հունիսի 24-ին Խոջալու գյուղում: 1970 -ին ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1971-73թթ. ծառայել Խորհրդային բանակում: 1974-84-ին ծառայել է Բելառուսական ԽՍՀ եւ ԼՂԻՄ ՆԳ մարմիններում: 1984-ին նրա դեմ հարուցվել է քրեական գործ՝ կաշառակերության մեղադրանքով, եւ Յաջիելը դատապարտվել է 10 տարվա ազատազրկման: 1989-ին Ադրբեջանի գերագույն դատարանը վերանայել է Յաջիելի գործը եւ նրան արդարացրել: Յաջիելը վերադարձել է Ադրբեջան, կրկին ծառայության անցել ՆԳ մարմիններում: 1990թ. դեկտեմբերի 21-ին նա նշանակվել է «Խոջալուի օդանավակայանի ՆԳ բաժանմունքի պետ, օդանավակայանի պարետ» (*տես՝ <http://ru.wikipedia.org/wiki>*):

Նույն տեղում կարողում ենք, որ Յաջիելը Խոջալուից «նահանջելուց առաջ պայթեցրել է օդանավակայանի դիսպետչերական կետը, որպեսզի պետական կարեւորության փաստաթղթերը չընկնեն հակառակորդի ձեռքը»: Ի՞նչ փաստաթղթեր կարող էին ընկնել հայկական կողմի ձեռքը: Խոսքը, ամենայն հավանականությամբ, վերաբերում է ուղղաթիռներով Խոջալու հասցված ռազմական նշանակության բեռների մասին տեղեկատվությանը, որ, իրոք, կարող էր պահվել օդանավակայանի համապատասխան ծառայության փաստաթղթերում:

Ադրբեջանում, բնականաբար, չէին ցանկանա, որպեսզի հայկական կողմը տիրապետեր նման տեղեկատվության, այն էլ՝ փաստաթղթային տեսքով: Այդ դեպքում անհնար կլիներ Խոջալույն ներկայացնել որպես «բոլոր կողմերից պաշարված խաղաղ բնակավայր»: Բացառված չէ, որ Յաջիելը կարող էր ունենալ նաեւ փաստաթղթեր օդանավակայանն Ադրբեջանի ՆԳՆ հատուկ ջոկատայինների վերահսկողության անցնելուց հետո ազգությամբ հայ ուղեւորների դեմ գործադրված բռնություն-

ների մասին: Բայց դրանք ոչնչացնելու համար, կարծում ենք, օղանավակայանի «դիսպետչերական կետը» պայթեցնելու կարիք չպետք է զգացվեր: Հաջիելը հնարավորություն կունենար փաստաթղթերը ոչնչացնել դրանք հրկիզելու միջոցով:

Ըստ երեւույթին, Հաջիելը կատարել է այլ՝ հատուկ հանձնարարություն, որի նպատակն օղանավակայանը ոչնչացնելն էր: Ասվածը ենթադրությունն է: Խոջալուի դեպքերով քրգործում հանդիպում ենք կարեւորագույն վկայության: Ադրբեջանի դատախազության քննիչի հարցին, թե 1992թ. փետրվարի 8-ին տեղի ունեցած՝ Անվտանգության խորհրդի նիստի որոշման մեջ Խոջալուի մասին ոչինչ նշված չէ, Մութալիբովի կառավարությունում պետական քարտուղար Միթադ Աբասովը պատասխանել է. «Ձեր նշած փաստաթուղթը ԱԽ նիստի արձանագրությունն է, որը հանձնարարական բնույթ ունի: Կոնկրետ Խոջալուի մասով որոշումն այսպիսինն էր՝ ճեղքել շրջափակումը եւ ապահովել «քաղաքի» (չակերտները մերն են- Վ. Ա.) պաշտպանությունը, իսկ եթե դա ինչ-ինչ պատճառներով հնարավոր չլինի, ապա օդային ճանապարհով կազմակերպել բնակչության եվակուացիան, որից հետո՝ պայթեցնել օղանավակայանը եւ թռիչքուղին» (*intu`http://www.erevangala500.com/booke//pdf/1323993822.pdf*):

Նույն տեղում ծանոթանում ենք նաեւ Ի. Ռուստամովի ցուցմունքներին: Ըստ այդմ, «փետրվարի 15 -ին ՆԳՆ ՕՍՕՆ-ի (հատուկ նշանակության ջոկատների- Վ. Ա.) հրամանատար Ռովշան Ջավադովի հետ միասին» նա ներկայացել է ներքին գործերի նախարար Քերիմովին: Վերջինս հետաքրքրվել է՝ ճի՞շտ է, որ Ռուստամովը «մասնագիտությամբ պայթեցնող դիվերսանտ է»: Ստանալով դրական պատասխան, նախարարը հետաքրքրվել է՝ «կարո՞ղ ես պայթեցնել Խոջալուի օղանավակայանի թռիչքուղին»: Ռուստամովը դարձյալ դրական է պատասխանել: Այնուհետեւ Քերիմովը հարցրել է, թե «դրա համար ի՞նչ միջոցներ են պետք»: Ռուստամովը մանրամասն ներկայացրել է հաշվարկը՝ տրոտիլ, էլեկտրապայթուցիչներ, էլեկտրաքուղի՝ նշելով անհրաժեշտ քանակությունը:

Նույն օրը Ռուստամովն ստացել է անհրաժեշտ նյութերն ու սարքավորումները, բացառությամբ էլեկտրաքուղի: Փետրվարի 16-ին նա ուղղաթիռով հասել է Աղդամ, որտեղ հարկ եղած քանակի, այն է՝ 500մ էլեկտրաքուղի, ստացել է Գասում Քերիմովից՝ «карьер Гасым» (թարգմանաբար՝ քարհանք Գասում) մականվանյալ: Վերջինս, ինչպես արդեն ասել ենք, Շահբուլաղի քարհանքի երկարամյա տնօրենն էր, հայտնի «օլիգարխիկ» հեղինակություն Աղդամում եւ շրջակայքում: Այս պահից

սկսած Ռուստամովի ցուցմունքները խեղաթյուրված են: Նա խոսում է, որ իրեն «խոջալու հասնելու համար ուղղաթիռ չեն տրամադրել եւ, սպասելով մինչեւ փետրվարի 24-ը, հարկադրված վերադարձել է Բաքու, ներկայացել ՆԳ նախարար Քերիմովին» եւ այլն, եւ այլն:

Ինչու՞ ենք այսպես ասում: Ռուստամովն Աղդամ է հասել փետրվարի 16-ին: Իսկ դա կարելու ամսաթիվ է, որի մասին դեռ կխոսենք: Այժմ բացատրենք Ռուստամովի ցուցմունքի տրամաբանական հակասությունը: Բանն այն է, որ Աղդամից խոջալու հեռավորությունը հազիվ 14կմ է: Եւ եթե խնդիր դրված լիներ, որ Ռուստամովը վտանգավոր բեռով խոջալու պիտի մուտք գործեր օդից, ապա ի՞նչ իմաստ կունենար Աղդամում վայրէջքը, «օդեր շարունակ ուղղաթիռի սպասելը»: Ուղղաթիռը չէ՞ր կարող միանգամից իջնել խոջալուում: Իսկ այժմ՝ թե ինչու՞ է նշանավոր դառնում փետրվարի 16-ը՝ Ռուստամովի Աղդամ հասնելու օրը:

Ադրբեջանցի ուսումնասիրող Մամեդ Վելիմամեդովը, հղում անելով ադրբեջանական ԱԱ նախարարության «միանգամայն վստահելի աղբյուրների», գրում է, որ «փետրվարի 16-ին խոջալու-Քյաթուկ-Շելլու երթուղով Աղդամ են հասել երկու խոջալուեցի՝ Օրուջեւ եւ Մուսաեւ ազգանուններով»: Կրկնենք, դա նույն այն օրն է, երբ Բաքվից Աղդամ է հասել դիվերսանտ Ռուստամովը՝ հատուկ նշանակության բեռով:

Պատահականություն՞ն է, որ այդ օրն Աղդամ են մտել նաեւ Օրուջեւը եւ Մուսաեւը, որոնց «խոջալուեցի լինելը» խիստ կասկածելի է: Իսկ եթե նրանք խոջալվում տեղակայված՝ Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՕՆ-ի զինծառայողներ՞ն էին: Հետեւենք Վելիմամեդովին: Նրա խոսքով, «Օրուջեւը եւ Մուսաեւը, որոնց Աղդամում միացել է եւս երեք հոգի, փետրվարի 18-ին վերադարձել են խոջալու՝ իրենց հետ տանելով ուտելիք եւ 3000 փամփուշտ»: Շրջափակված խոջալուից Աղդամ կարող էր հասնել եւ, մանավանդ, վերադառնալ հատուկ պատրաստություն անցած խումբը միայն: Սա կասկածից դուրս է, եթե նկատի ենք ունենում, որ Օրուջեւի եւ Մուսաեւի ճանապարհը դեպի Աղդամ, 5 հոգանոց բեռնավորված խմբի հետադարձ երթուղին անցնում էր ԼԳՀ ինքնապաշտպանական ուժերի Ասկերանի ուղղության դիրքերին շատ մոտ:

Համադրելով Ռուստամովի հատուկ հանձնարարությամբ եւ «խոջալուեցիների» նույն օրն Աղդամում գտնվելու, ապա «եւս 3 հոգու հետ 3000 փամփուշտով խոջալու վերադառնալու» փաստերը, միանգամայն հնարավոր է դառնում պնդել, որ այդ խումբը փետրվարի 18-ին խոջալու է հասցրել օդանավակայանի եւ թռիչքուղու պայթեցման համար նախատեսված հատուկ նշանակության բեռը: Ռուստամովը

նրանց հե՞տ է եղել, թե՞ ոչ, արդեն կարելուր չէ:

Թեեւ չի բացառվում, որ նա կարող էր մուտք գործել Խոջալու, կատարել դիվերսանտի իր մասնագիտական գործը եւ «սեւ աշխատանքը» թողնելով տեղական ուժերին, նույն ճանապարհով վերադառնալ Աղդամ: Հավանաբար, Ալիֆ Հաջիեւը կամ պարզապէս գլուխ չի հանել Ռուստամովի ցուցմունքներից, քանի որ մասնագիտական բավարարմակարգակ չի ունեցել եւ «հատուկ առաջադրանքը» կատարել է մասնակիորեն կամ ադրբեջանական աղբյուրները խնամքով թաքցնում են ողջ ճշմարտությունը:

Արդեն անդրադարձել ենք, որ փետրվարի 26-ի գիշերը Խոջալուն Աղդամից ենթարկվել է հրթիռակոծման: «Գրադ» կայանքների կրակն ուղղվել է հիմնականում դեպի օդանավակայան: Ասել ենք, որ չպետք է բացառել, որ օդանավակայանին հարող՝ Խոջալուի թաղամասում հրդեհ եւ ավերածություններ գործել է հենց այդ հրթիռակոծությունը: Իսկ եթե դրան ավելացնենք նաեւ Ալիֆ Հաջիեւի կողմից օդանավակայանի պայթեցման փորձը, ապա պատկերն ավելի ամբողջական կդառնա:

Մարդկանց ճակատագիրը ոչ ոքի չի հուզել

*Խոջալուից անասունները դուրս են բերվել, մարդիկ՝ ոչ:
Էյնուլլա Ֆաթուլլաև, ադրբեջանցի
լրագրող, «Ղարաբաղյան օրագիր»*

<http://www.gisher.ru/eynulla-fatullaev-karabaxskiy-dnevnik-t12884.html>

Ադրբեջանական քարոզչությունը Խոջալուի դեպքերը բնորոշում է որպես «ցեղասպանություն», «աղետ», «մարդկության դեմ ծանրագույն հանցագործություն», «քաղաքի եւ բնակչության կատարյալ ոչնչացում» եւ այլն: Խնդիրը, այսպիսով, դիտարկվում է մարդասիրական հարթությունում: Անկախ նրանից՝ այդպիսի բնութագրումները փաստացի հիմքեր ունեն՞, թե՞ ոչ, մենք համոզված ենք՝ չունեն, պաշտոնական Բաքուն ամենից առաջ պետք է ապացուցի, որ, նախ, Խոջալուն, իրոք, եղել է խաղաղ բնակավայր, երկրորդ՝ ադրբեջանական կառավարությունն ամեն ինչ արել է, որպեսզի մարդկանց կյանքը փրկի, իսկ հայկական կողմը՝ իր գործողություններով «խոչընդոտել»:

Մարդասիրական միջանցքի փաստը հանրահայտ է եւ արձանագրված իրավապաշտպան կազմակերպությունների, Մութալիբովի, ադրբեջանցի մի շարք անկախ ուսումնասիրողների, Խոջալուի որոշ բնակիչների կողմից: Էլման Մամեդովի հակասական ցուցմունքներին նվիրված գլխում մենք ուշադրություն ենք հրավիրել նրա վկայությանը, որի համաձայն՝ փետրվարի 25-ի ժամը 20:30-22:30-ը հայկական զրահատեխնիկական գտնվել է Խոջալուից 1-1,5-2կմ հեռավորության վրա, սակայն որեւէ գործողության չի դիմել: Ասել ենք, որ դա բավարար ժամանակ էր, որպեսզի Խոջալուի քաղաքացիական եւ զինվորական պատասխանատուները կազմակերպեին գյուղում դեռեւս մնացած խաղաղ բնակիչների անվտանգ տարահանումը:

Հայկական ուժերի երկժամյա «անգործությունն» ի՞նչ արձագանք է ունեցել Խոջալուում: Էլման Մամեդովի վկայությամբ, իրենք որոշել են, որ «թողնել-փախչելը տղամարդկություն չէ», ինչպես նաեւ՝ «մարդկանց հանգստացրել, որ խուճապի չմատնվեն, զուցե սադրանք է կամ ուրիշ ինչ-որ բան են ուզում ասել (հայերը)»: Մամեդովը հրաշալի գիտեր, թե ինչ են «ասում» հայկական զինված ջոկատները: Գիտեր այն

պահից, երբ ԼՂ-ից հեռացել էին Պոլյանիչկոն եւ նրա հրամանին ենթակա ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը:

Ահա ինչպես է նա իրավիճակը ներկայացրել Այազ Մութալիբովին հղած հեռագրում. «Անհրաժեշտ են համարում Ձեզ տեղեկացնել, որ հայկական զինված խմբավորումների նպատակաուղղված հարձակումների հետեւանքով գրավվում են Ղարաբաղի ադրբեջանական բնակավայրերը: Ստեփանակերտի եւ Ասկերանի միջեւ ճանապարհ բացելու համար նախապատրաստվում է հարձակում Խոջալուի վրա: Մեզ ոչնչացնելու համար հայերը կձեռնարկեն բոլոր ջանքերը: Հայկական ուղղաթիռների թռիչքների հաճախակի դառնալը հաստատում է դա: Խնդրում են Ձեզ անհետաձգելիորեն հարկ եղած միջոցներ ձեռնարկել Խոջալուի պաշտպանության համար: Խոջալուն Ադրբեջանի համար ռազմավարական կարեւոր կետ է: Սպասում ենք շուտափույթ օգնության»:

Հեռագիրը թվագրված է՝ 17.12.1991թ, հետեւաբար փետրվարի 25-ի երեկոյան Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավարը» պարտավոր էր շփման մեջ մտնել հայկական ուժերի հետ եւ քննարկել խաղաղ բնակչության հարցը: Նման քայլ չի ձեռնարկվել: Եւ հայկական ուժերը երկժամյա «անգործությունից» անցել են Խոջալուի գրոհին: Կարելի՞ է դրա համար մեղադրել Մամեդովին: Մարդկայնորեն՝ այո, որպես պաշտոնյայի՝ ոչ: Քանի որ նա մինչեւ վերջ հավատարիմ է մնացել Ադրբեջանի պետական դիրքորոշմանը՝ «եթե բնակչությունը դուրս բերվի, ապա դա կնշանակի Խոջալուի հանձնում»:

Այլ որոշման, մանավանդ՝ հայկական ուժերի հետ շփման միջոցով ընդունված, դեպքում էլ նման Մամեդովը կենթարկվեր պատասխանատվության: Այսքանը՝ տրամաբանորեն: Իրականում մենք հակված ենք կարծելու, որ նա «չի կարելի տարհանել բնակչությանը» գաղափարի հեղինակներից է: Մեջբերում ենք Խոջալուի «դատախազ» Աթաքիշի Աթաքիշիեւի՝ նույնպես Մութալիբովին հղած հեռագրից. «Մեզ մոտ ամեն ինչ սպառվում է, հասկացեք մեզ, թե ինչ ենք ուզում ասել: Բնակչությունն ուզում է լքել Խոջալուն: Պաշտպանության նախարարության կողմից մեզ ոչ մի օգնություն չի ցուցաբերված: Թանկագին ղեկավար, եթե բնակչությունը լքի Խոջալուն, ապա այդ դեպքում կբացվի Սեփանակերտ-Ասկերան ճանապարհը: Թանկագին ղեկավար, Խոջալուի բնակչությունը ոչ մի հավաստի տեղեկատվություն չունի: Մենք ձեզ

խնդրում ենք օգնել մեզ... Թանկագին ղեկավար, հետո ուշ կլինի»:

Ալնհայտ է, որ Մամեդովին եւ Աթաքիշիեւին հուզել է ոչ թե Խոջալու-
ում մնացած խաղաղ բնակչության ճակատագիրը, այլ՝ որպեսզի Ստե-
փանակերտ-Ասկերան հաղորդակցությունը չբացվի: Լինելով Ադրբե-
ջանի կառավարության կողմից որոշակի լիազորություններով օժտ-
ված անձինք, նրանք, փաստորեն, Խոջալուի խաղաղ բնակչությանը
կանխամտածված ձեռով ենթարկել են ֆիզիկական ոչնչացման սպառ-
նալիքի, քանի որ համոզված էին մի բանում. հայկական ուժերը երբե-
ւէ փորձելու են ապաշրջափակել ԼՂ միակ օդանավակայանը, վերա-
կանգնել Ստեփանակերտ-Ասկերան խճուղային հաղորդակցությունը:

««Քաղաքի» (Խոջալուի- Վ.Ա.) ռազմավարական նշանակությունը
պայմանավորված է ոչ միայն նրանով, որ գտնվում է «Խանքենդի»
(Ստեփանակերտ- Վ. Ա.)-Ասկերան ճանապարհի վրա, այլև Լեռնային
Ղարաբաղում միակ օդանավակայանի առկայությամբ», - գրում է ադր-
բեջանցի ուսումնասիրող Վելիմամեդովը: Ինչպես տեսնում ենք, ադր-
բեջանցի հեղինակի համար էլ Խոջալուն ոչ այնքան բնակավայր, որ-
քան՝ ռազմավարական նշանակության հենակետ է: Ըստ էության,
նման մոտեցումը բնութագրում է Ադրբեջանի պետական եւ հանրային-
քաղաքական վերաբերմունքը: Բայց եւ միաժամանակ՝ հաստատում,
թե ինչու՞ էր Խոջալուն ծաղկում 1988-91թթ.: Պարզապես ամրացվում
էր Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհի վրա գտնվող ռազ-
մական հենակետը, այլ ոչ թե՝ սոցիալ-տնտեսական խնդիր լուծվում:

Հետեւենք Վելիմամեդովի շարադրանքին. «1991թ. նոյեմբերից
«քաղաքը» (Խոջալուն) գտնվում էր շրջափակման մեջ: Բոլոր ճանա-
պարհները հայկական զինված խմբավորումների կողմից փակված
էին»: Ավելի անկեղծ արտահայտվել է Խոջալուի «գործադիր իշխանու-
թյան ղեկավար» Էլման Մամեդովը՝ ասելով, որ ԼՂԻՄ-ից խորհրդային
զինվորականների դուրսբերումից հետո «Աղդամի եւ Շուշիի հետ կա-
պը խզվել էր»:

Բայց ահա ինչպե՞ս են իրավիճակը գնահատել եւ ի՞նչ լուծումներ
առաջարկել իրավասու անձինք: Վելիմամեդովը մեջբերում է Ադրբեջա-
նի պետական անվտանգության կոմիտեի անանուն աշխատակցի՝
16.02.92 թվագրության ծածկագիրը. ««Քաղաքում» (Խոջալուում)
դրությունը ծայրահեղ է: Հարկ է ընդունել անհետաձգելի միջոցներ՝
ցուցաբերելու օգնություն եւ հատկապես՝ իրականացնելու օդանավա-

կայանի պաշտպանությունը, որը ռազմավարական օբյեկտ է հանդիսանում, որի գրավման դեպքում «գրոհայինները» (չակերտները մերն են- Վ. Ա.) հնարավորություն կստանան ինքնաթիռներով տեղ հասցնել մեծ քանակությամբ մարդկանց եւ զենք»:

Ձուտ ռազմական իմաստով այսքանից հետո կարելի^օ է ասել, թե խոջալուն «շրջափակված էր բոլոր կողմերից»: Ավելի ճիշտ չէր լինի օպերատիվ իրավիճակը բնութագրել այսպես. «խոջալուն շարունակում էր խզված պահել Ստեփանակերտ-Ասկերան ավտոճանապարհային հաղորդակցությունը»: Կարծում ենք, էլնան Մամեդովի «շուտափույթ օգնության» խնդրանքը ոչ թե մարդասիրական, այլ՝ ռազմական օգնությանն է վերաբերվել: Այսինքն՝ նա խնդրել է հնարավորություն ստեղծել, որպեսզի խոջալուն շարունակի կատարել Ստեփանակերտը եւ Ասկերանը միմյանցից բաժանող ռազմահենակետի իր դերը: Այս ամենից հետո զարմանալի չէ, որ դեպքերից մի քանի օր առաջ հրավիրված՝ Ադրբեջանի անվտանգության խորհրդի նիստում որոշում է ընդունվել խոջալուից տարհանելու ... միայն «վիրավորներին»: Բնակավայրը, այսպիսով, դիտվել է որպես ռազմավարական կարելուության հենակետ, եւ այնտեղ մնացած մարդկանց ճակատագիրը ոչ մեկին չի հուզել:

Եւ շատ «օրինաչափ» է, որ պետության կողմից մոռացության մատնված, ընդամենը «թնդանոթի միս» գնահատված մարդկանց, երբ նրանք հայկական զինուժի կողմից թողնված միջանցքով հասել են Ադդամ, դիմավորել են իբրեւ «դավաճանների»՝ դիմախար կրակով եւ հրթիռահրետակոծությամբ: Ինչպես որ Չայրենական մեծ պատերազմի տարիների հրամաններից մեկում (*տես՝ Դ. Волкогонов, Триумф и трагедия, Политический портрет И.В.Сталина http://royallib.ru/read/volkogonov_dmitriy/triumf_i_tragediya_politicheskiy_portret_i_v_stalina_kniga_2.html*) Ստալինն էր կարգադրել վարվել Լենինգրադի խաղաղ բնակչության հետ, եթե «փորձեն լքել քաղաքը»:

Մեզ հայտնի չէ ուսումնասիրություն, որտեղ փորձ արված լինի տալ մի հարցի պատասխան. Ադդամի ռազմական շտաբը 1992թ. փետրվարի 26-ի գիշերը ձեռնարկել է խոջալուի իրավիճակը փրկելու ռազմագործողություն: Կարծում ենք՝ այո: Եւ Շելլուի ուղղությամբ՝ Կարկառ գետի հունով շարժվող խմբավորումներն էլ հենց «դիմավորել են» խոջալուից նահանջողներին: Եւ նրանց հետ վարվել «պատերազմական

ժամանակի օրենքով՝ ինչպես դավաճանների»:

Փաստե՞ր: Բայց մի՞թե բավարար չեն մեջբերված պաշտոնական գրությունները, որոնցում, ինչպես տեսնում ենք, ոչ մի ակնարկ իսկ չկա խոջալուում մնացած խաղաղ բնակչության տարհանման մասին: Փրկվողը պատահաբար է փրկվել: Իսկ սադրիչները, որոնցից մեկն էլ «քաղաքի դատախազ» Աթաբիշիեն է, ժամանակին էին ճողոպրել Աղդամ: Որպեսզի նյութեն իրենց դավերը:

Եւ այդ խայտառակությունը բացահայտել չուզե՞նալուց կամ չկարողանալուց է, որ Ադրբեջանի իշխանությունները հորինել են խոջալուի «ցեղասպանության» առասպելը: Դժվար է խոստովանել, որ սեփական զինված ուժերը վրեժխնդիր են եղել սեփական խաղաղ բնակիչներից՝ «քաղաքը հանձնելու» համար: Հայրենական պատերազմի տարիներին խորհրդային խաղաղ բնակչության դեմ ստալինյան ռեժիմի ռազմական հանցագործությունների մասին գրվել է շուրջ կես դար հետո...

Թամեռլան Գարաեւի 20-ամյա ազատ արտոն ու չմարած պարտքը

Իրականությունը երեւի ամբողջությամբ պատմություն չի դառնում: Ինչ-որ բան դուրս է մնում: Երբեմն էլ՝ կեղծվում: Բայց երբ այն խեղաթյուրվում է լիովին, պարտավոր ենք բարձրաձայնել: Մենք այս դեպքում ոչ բարձր ոճի, ոչ էլ, մանավանդ, «բացառիկ նյութի տիրապետելու» տպավորության հավակնություն չունենք: Պարզապես ադրբեջանական աղբյուրներից, ընդգծենք՝ բաց, բոլորին հասանելի, քաղում ենք հարկավոր փաստեր, համադրում: Որպեսզի ինչ-որ չափով վերականգնենք ճշմարտությունը:

Իրադարձությունների ամենաթարմ հետքերով Ադրբեջանի դատախազությունը քրգործ հարուցել է 1992թ. փետրվարի 27-ին: Դատաբժշկական փորձաքննություն նշանակվել է 181 դիակի եւ 229 վիավորի փաստերով: Իբրեւ տուժած հարցաքննվել է 200, որպես վկա՝ 300 անձ (*տես՝ <http://www.erevangala500.com/booke//pdf/1323994124.pdf>*: Վկաներից մեկն էլ Թամեռլան Գարաեւն էր: Նա հարցաքննվել է 1992թ. սեպտեմբերի 14-ին, երբ արդեն ԳԽ նախագահի առաջին տեղակալ էր. Ադրբեջանում իշխանության էր եկել ժողովրդական ճակատը: Գարաեւին հարցաքննել է դատախազության հատուկ կարեւոր գործերով քննիչ Ս. Ռաջաբովը, հարցաքննության արձանագրությունը կազմված է ձեռագիր, ադրբեջաներեն է (այս եւ հետագա հղումները՝ նույն տեղում):

Վկայի ինքնությունը ճշտելուց հետո քննիչը նրան հարց է ուղղել, թե՝ «ու՞ն հանձնարարությամբ է 23.02.92-ին մեկնել Ադրամ»: Գարաեւը պատասխանել է, որ, լինելով ԳԽ նախագահի տեղակալ, ինքը նման հանձնարարություն կարող էր ստանալ «կամ Գերագույն խորհրդից, կամ ԳԽ Ազգային խորհրդից (քննադրում՝ «Միլլի շուրա»- Վ. Ա.) կամ ԳԽ նախագահից», որոնք, սակայն, իրեն «նման հանձնարարություն չեն տվել»: Նա, այսպիսով, փաստել է, որ Ադրամում գտնվելու եւ ինչ-որ հարցեր քննարկելու, առավել եւս՝ դրանց լուծումներ տալու կամ առաջարկություններ անելու պաշտոնական լիազորություն չի ունեցել: Միայն «նախագահ Մութալիբովին տեղեկացրել է», որ մտադիր է գնալ Ադրամ, «հանդիպել մարդկանց, նրանց ներկայացնել արտակարգ դրության մասին հրամանագիրը, բացատրել իրավիճակը»:

Գարաեւը չի կարողացել հիշել, թե երբ է ներկա գտնվել Մութալիբովի մոտ տեղի ունեցած խորհրդակցությանը, որի ավարտին «նա իրեն խնդրած լինի մնալ»: Քննիչը պարզաբանել է, որ նման ցուցմունք տվել է Արազ Ալիզադեն (Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցու-

թյան ներկայիս նախագահը): «Ալիզադեն, հնարավոր է, անձնական նկատառումներից ելնելով խառնում է փաստերը»,- խուսափողական ասել է ԳԽ նախագահի առաջին տեղակալը, որից հետո քննիչն անցել է բուն հարցադրումներին:

Դրանց լիարժեք վերծանությունը ժամանակ եւ մասնագիտական բարձր մակարդակ է պահանջում: Մենք հասցրել ենք առանձնացնել հետեւյալը: Քննիչին հետաքրքրել է՝ «օրակարգում եղե՞լ է Խոջալուի բնակչությանը տարհանելու հարց, ուղղաթիռներ եղե՞լ են, որպեսզի մարդկանց դուրս բերեին»: Գարաբեը նախ տվել է «քաղաքական» զնահատական: Ըստ այդմ, «նման լարված իրավիճակում պատասխանատու անձանցից եւ ոչ մեկը համարձակություն չի ունեցել դնելու մարդկանց տեղափոխելու հարց»: Այնուհետեւ նա ասել է, որ «Խոջալուի դեպքերից 5-6 օր առաջ մինչ այդ Շահին Մուսաեւի (Ադրբեջանի ՊՆ գլխավոր շտաբի պետ, նախարարի պաշտոնակատար) գլխավորությամբ ամեն օր Ղարաբաղ թռչող զրահապատ (°- Վ. Ա.) ուղղաթիռների թռիչքները հանկարծակի դադարեցվել են»: Այնուհետեւ Գարաբեը, որ մինչ այդ իրեն «զինվորական գործերին երբեւէ չառնչված մարդու» էր ներկայացրել, պատմել է, որ «անձամբ Խոջալուի դատախազ Աթաթիշիի (Աթաթիշի Աթաթիշիեւի.-Վ.Ա.) միջոցով մի «ԿամԱԶ» բեռ է ուղարկել Գյանջա, որպեսզի գոնե մի քանի թռիչք անեն (ռուս օդաչուները.-Վ.Ա.)»:

Մինչ Գարաբեի ցուցմունքների հետագա ընթացքին անդրադառնալը միջանկյալ ասենք, որ «դատախազ» Աթաթիշիեւին Գյանջա գործուղելու փաստը վկայում է, որ դեպքերի օրը վերջինս Խոջալուում չի գտնվել: Դա, սակայն, չի խանգարել, որ Աթաթիշիեւը փետրվարի 27-ին Ադրամում հարցազրույց տա Չինգիզ Մուստաֆաեւին՝ ներկայանալով իբրեւ «տուժած ականատես»:

Այժմ՝ Գարաբեի վկայության քաղաքական ենթատեքստի մասին: Խոսելով Գյանջայի զինվորականներից ստացած մերժման մասին, նա հռետորական հարց է տալիս. «Ասենք թե դա Ադրբեջանին քիթսփոցի էր, կենտրոնից (Մոսկվայից.- Վ. Ա.) հրահանգված, որպեսզի (Ադրբեջանը) շուտափույթ վավերացնի ԱՊՀ պայմանագիրը (Մութալիբովն այդ պայմանագիրն ստորագրել էր, բայց ԳԽ-ն չէր վավերացնում.- Վ. Ա.), իսկ ինչու՞ մեր (Ադրբեջանին պատկանող) զրահապատ ուղղաթիռները չէին կարող Խոջալու թռչել, չէ՞ որ Շահին Մուսաեւն ասել էր, որ Խոջալուի շուրջ հայերի բոլոր հենակետերը ոչնչացված են»:

Ինչպես տեսնում ենք, Գարաբեը քննադատության սլաքն ուղղում է պաշտպանության նախարարի պաշտոնակատար Շահին Մուսաեւի,

իրականում՝ Այազ Մութալիբովի դեմ: Բնութագրական է նաև, որ քննիչը նրա «քաղաքական գեղումները» չի ընդհատել, չի փորձել բերել հստակության դաշտ: Ակնհայտ է, որ փոփոխված իրավիճակում կողմերին հարմար էր կատարվածի համար պատասխանատվությունը բարդել Մութալիբովի եւ նրա կառավարության առանձին անդամների ուսերին:

Քննիչ Ռաջաբովին հետաքրքրել է Գարաբեի բացատրությունը Ֆահմին Յաջիեի (Աղդամուն Ադրբեջանի ՊՆ հատուկ ներկայացուցչի, ՆԳՆ ներքին զորքերի հրամանատարի) այն ցուցմունքի վերաբերյալ, ըստ որի Յաջիեը 24.02.92-ին զանգել է Շահին Մուսաեւին եւ իմացել, որ Գարաբեը նախագահ Մութալիբովից պահանջել է «հետ վերցնել Յաջիեի լիազորությունները»: ԳԽ նախագահի առաջին տեղակալը նախ ժխտել է, թե որեւէ մեկի հետ քննարկած լինի Ֆահմին Յաջիեին լիազորություններից զրկելու հարցը, ապա քիչ անց ասել. «Բայց լիազորությունները դադարեցնելու մասին խնդրանքը դեռեւս չի նշանակում լիազորություններից զրկել», -ինչից պարզ հասկացվում է, որ նա, իրոք, Մութալիբովի առջեւ նման հարց հարուցել է:

Փետրվարի 24-ին Ֆահմին Յաջիեը եւ ՊՆ-ից լրացուցիչ Աղդամ գործուղված երկու սպա հրավիրել են զորախմբերի հրամանատարների խորհրդակցություն եւ ներկայացրել «Ասկերանի ուղղությամբ ճեղքմամբ Խոջալուն ապաշրջափակելու» ռազմագործողության օպերատիվ պլանը: Խորհրդակցության կազմակերպիչ սպաներից մեկի՝ փոխգնդապետ Ինթիգամ Աբդուլլաեւի, ցուցմունքներով՝ երբ առաջարկվել է, որպեսզի ռազմագործողություն սկսելու հրամանը ստորագրվի, Ֆահմին Յաջիեւն ասել է, որ ինքը նման լիազորություն «այլեւս չունի»: Յաջորդ օրը նշանակված ժամին զորախմբերի հրամանատարներից ոչ ոք չի ներկայացրել, ռազմագործողությունը տապալվել է: Կա՞պ ունի դա Գարաբեի կողմից Մութալիբովի առջեւ Յաջիեին լիազորություններից զրկելու հարց հարուցելու հետ՝ մնում է ենթադրել:

Այս իմաստով չափազանց կարեւոր է, որ «ինչպիսի՞ն էր իրավիճակն Աղդամուն փետրվարի 25-ին» հարցին պատասխանելիս Գարաբեը հիշել է, որ հրամանատարներից երկուսը՝ Ռովշան Ջավադովը եւ Ֆահիկ Բախշալիեը «եկել եւ ասել են, որ Ֆահմինի օպերացիայից բան դուրս չեկավ»: Նրանք տեղեկացրել են, որ իրենք «մի օպերացիա են համաձայնեցրել, գուցե հնարավոր լինի դեպի Խոջալու ճանապարհ բացել եւ օգնություն հասցնել»: Գարաբեի խոսքերով, «նրանք դուրս են եկել (Աղդամից շարժվել են.-Վ.Ա.) նույն օրվա (փետրվարի 25-ի.-Վ.Ա.) երեկոյան կողմ, մինչեւ առավոտ (փետրվարի 26-ի.-Վ.Ա.) նրանցից տեղեկություն չի եղել»: Գարաբեը շարունակել է. «Առավոտյան կողմ

նրանցից լուր եկավ, որ ոչինչ անել չի ստացվել, միայն շրջակա գյուղերի (Աղղամի.-Վ.Ա.) ջոկատների ուժերով գրավել են Գարա-գայա տեղանքը եւ Խոջալուից եկող մարդկանց համար Աղղամ հասնելու հնարավորություն ստեղծել»:

«Գարա-գայա» տեղանքը Աղղամի փաստացի արվարձան Շելլու գյուղի տարածքում էր: Ջավադովը եւ Բախշալիեն այն «գրավելու» խնդիր չունեին: Չակառակ դեպքում պիտի ընդունել, որ Խոջալուի ռազմագործողությանը նախորդած ժամերին հայկական ուժերը գտնվել են գրեթե Աղղամի մատույցներում, ինչը ոչ միայն անհավանական է, այլեւ որեւէ, այդ թվում՝ ադրբեջանական, ադրբայրի կողմից վկայված չէ: Եւ եթե «Ֆահմիհի օպերացիայից բան դուրս չէր եկել», այն տապալվել էր, ապա ինչի՞ վրա էին հույս դրել Ջավադովը եւ Բախշալիենը, երբ «համաձայնեցրել էին (ու՞մ հետ) իրենց ծրագիրը» եւ փորձ էին արել «դեպի Խոջալու ճանապարհ բացել, օգնություն հասցնել»: Վերջապես, Թամեռլան Գարաեւը փաստորեն վկայել է, որ տեղյակ էր Ջավադովի եւ Բախշալիեի ծրագրին, սպասել է նրանցից լուրերի եւ արդեն փետրվարի 26-ի «առավոտյան կողմ» իմացել, որ նրանք «գրավել են Գարա-գայա տեղանքը», այնտեղ «դիմավորել» Խոջալուից տեղ հասած մարդկանց:

Ցուցմունքի վերջում Գարաեւը, առանց քննիչի կողմից հարցի առաջադրման, ավելացրել է, որ «փետրվարի 27-ին Աղղամ պիտի գար, որպեսզի Խանքենդի (Ստեփանակերտ) եւ Շուշի գնա Իրանի արտգործնախարար Վելայեթին, ձեռք էր բերվել եռօրյա հրադադարի համաձայնություն»: Նրա ասելով, Վելայեթին թռել էր Գյանջա, որտեղից «պիտի գար ուղղաթիռով, սակայն զինվորականները հրաժարվել էին ուղղաթիռ տրամադրել, Վելայեթին ասել էր, որ համաձայն է մեկնել ավտոմեքենայով»: Գարաեւը հիշել է, որ, «օգտվելով մի քանի ժամվա հնարավորությունից (մինչեւ իրանցի դիվանագետը Գյանջայից ավտոմեքենայով Աղղամ կհասներ.- Վ.Ա.), գնացել է Շելլու՝ մասնակցելու Խոջալուեցիներին «ազատելու» (չակերտները մերն են.- Վ. Ա.) ժամանակ զոհված հարազատների հուղարկավորությանը եւ տեսել, որ գերեզմանատան մոտ «Գրադ» մեքենայից (բնագրում այդպես է.- Վ. Ա.) կրակում են Նախիջեւանիկի ուղղությամբ»:

Թամեռլան Գարաեւի վկայությամբ, երբ փոխգնդապետ Նիչեպուրենկոյին հարցրել է, թե «ինչու՞ են անպատակ կրակ բացել, վերջինս ասել է. «Եթե զենքը կա, պիտի կրակի», եւ դա տեսել է մեկուկես-երկու ժամ»: Վերադառնալով Աղղամ, Գարաեւը տեղեկացել է, որ Վելայեթին հրաժարվել է ուղեւորությունից, իսկ երբ զանգել է Գյանջա՝ իմանալու

պատճառը, այնտեղից ասել են, որ Վելայեթիին զգուշացրել են, որ Թամեռլան Գարաբեը «Գրադ»-ը տարել է իր հայրենի գյուղ եւ կրակում է հայերի վրա»:

Այստեղ էական է երկու հանգամանք: Նախ, Գարաբեը վկայում է, որ Շելլուից «Գրադ» կայանքով հրթիռակոծվել է Նախիջեւանիկի ուղղութիւնը: Այն էլ՝ շուրջ երկու ժամ անընդմեջ: Փաստորեն, նա հաստատել է, որ ադրբեջանական կողմից զանգվածային ոչնչացման զենք է կիրառվել հայկական խաղաղ բնակավայրերի դեմ: Երկրորդ, նա հավաստել է, որ դա արվել է հրադադարի համաձայնությունը խախտելու եւ Վելայեթիի այցը տապալելու նպատակով: Այսինքն՝ ադրբեջանական կողմը չի ցանկացել, որպեսզի Իրանի արտագործնախարարը Խոջալուի դեպքերի հաջորդ օրը լինի Աղդամում, այցելի Ստեփանակերտ: Ինչու՞: Տրամաբանականն այն է, որ Ադրբեջանում պետք է խիստ շահագրգռված լինեին, որպեսզի Խոջալուի «կոտորածն» ստանար հզոր արձագանք, ինչպես եւ՝ դառնար միջազգային հետաքննության առարկա: Դա կարող էր սկսվել Վելայեթիի այցելությանը, ինչը Թամեռլան Գարաբեի վկայությամբ տեղի չի ունեցել «ամհայտ անձանց» մեղքով: Մինչդեռ ուրիշները հենց նրան են մեղադրել դրանում, ինչպես եւ ասել է ինքը:

Եւ՝ վերջին շտրիխը: Նույն քրեական գործով 1992թ. մարտի 7-ին Աղդամում որպես վկա հարցաքննվել է Խոջալուի բնակիչ, 1966 թ. ծնված, երկու երեխայի հայր, Խոջալուի «ինքնապաշտպանական» գումարտակի 4-րդ դասակի նախկին հրամանատար Շաքիր Շահլար օդու Ջասանովը: Հարցաքննությունը վարել է Ադրբեջանի դատախազության հատուկ կարեւոր գործերով քննիչ Մ. Հուսեյնովը

Հարց. Ի՞նչ եք կարծում, ո՞վ է մեղավոր, որ զոհվել են Խոջալուի խաղաղ բնակիչներ:

Պատասխան. Փետրվարի 25-ի դեպքերից 8-10 օր առաջ Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Թամեռլան Գարաբեը հեռախոսով բազմիցս դիմել է Խոջալու «քաղաքի» (չակերտները մերն են.- Վ. Ա.) բնակիչներին, որ խուճապի չմատնվեն, օգնության են գալու Ազգային բանակի զորքերը, բայց օգնություն չի եկել: Ես գտնում եմ, որ Թամեռլան Գարաբեը մարդկանց միտումնավոր մատնել է հոշոտման: Հազարավոր (՞- Վ. Ա.) մարդկանց մահը նրա խղճի վրա է, նա պետք է դատի տրվի եւ ենթարկվի քրեական պատասխանատվության: (*տես՝ <http://www.erevangala500.com/booke//pdf/1323994124.pdf>*)

Կրկնենք, Շաքիր Հասանովը հարցաքննվել է 1992թ. մարտի 7-ին,

նախագահի պաշտոնից Սուբալիբովի հրաժարականից երկու օր հետո: Իսկ թե ինչու՞ Թամեռլան Գարաբեը Խոջալուի դեպքերից միայն 7 ամիս անց եւ դարձյալ վկայի կարգավիճակով է հարցաքննվել կամ ինչու՞ Շաքիր Չասանովի ցուցմունքի մասով նրան հարց չի առաջադրվել, կապված է քաղաքական հանգամանքների հետ. 1992-ի գարնանը փաստացի իշխանության եկած ԱԺԾ-ն չէր կարող դատի տալ եւ քրեական պատասխանատվության ենթարկել կազմակերպության կարկառուն ներկայացուցիչներից մեկին: Ի դեպ, հարցաքննության թերթիկում Գարաբեըն իրեն անվանել է «անկուսակցական»:

ԱԺԾ պարագայում Գարաբեի հանդեպ վերաբերմունքը հասկանալի է: Իսկ թե ո՞րն է պատճառը, որ իշխանության գալով Յեյդար Ալիեը նրան «ազատ աքսորական» է դարձրել՝ դիվանագիտական աշխատանքի նշանակելով Չինաստանում, իսկ Իլիամ Ալիեը՝ շարունակել ավանդույթը, մնում է միայն ենթադրել:

Աղբբեջանական «թվաբանություն»

Ո՞րն է խոջալուում սպանվածների իրական թվաբանակը: Աղբբեջանը միջազգային աստաններում հնչեցնում է 613 թիվը: Մենք կփորձենք աղբբեջանական տարբեր աղբբությունների տվյալների հիման վրա ճշգրտումներ անել: Մինչ այդ, սակայն, հարկ է նկատել մի հանգամանք. ոչ մի դեպքում սպանվածները չեն տարբերակվում ըստ գինվորական եւ քաղաքացիական անձանց: Աղբբեջանը մշտապես շեշտադրում է, որ սպանվածները «հիմնականում ծերեր, կանայք եւ երեխաներ են»: Տպավորություն է ստեղծվում, թե խոջալուի հասում տղամարդիկ իրենց ծնողներին, կանանց, քույրերին եւ երեխաներին թողել են անօգնական եւ փրկել իրենց կյանքը:

1992-ի փետրվարի 25-ի դրությամբ խոջալուում, ըստ էլման Մամեդովի վկայության, գենքի տակ է եղել 364 հոգի: Չենք կարծում, թե նրանց մեծ մասը «ծերեր, կանայք եւ երեխաներ» են եղել: Խոջալուում հայկական ուժերը հանդիպել են լրջագույն դիմադրության: Հատկապես՝ օդանավակայանի եւ «հինգհարկանի շենքի» ուղղություններում: Աղբբեջանական կողմը, բնականաբար, գինված ջոկատներից ունեցել է զոհեր: Ինչքան՝ պաշտոնական Բաքում չի հրապարակում:

Խոջալուի մարդկային կորուստների մասին առաջինը տեղեկատվություն տարածել է «Ազերինֆորմ» պետական լրատվական գործակալությունը՝ «2 զոհ, կան վիրավորներ, մարտերը շարունակվում են»,- ծանուցվել է փետրվարի 26-ին: Քրգործով որպես վկա տված ցուցմունքներում «Ազերինֆորմ»-ի գլխավոր տնօրեն Ազադ Շարիֆովն այդ տեղեկատվության աղբբուր է անվանել նախագահ Այազ Մութալիբովի մամուլի քարտուղար Ռասիմ Աղաեիին: Հարցաքննվել է նաեւ վերջինս եւ իր հերթին հղել պետական քարտուղար Միթադ Աբբասովին:

Աբբասովը համեմատաբար բարեխիղճ է գտնվել եւ չի թաքցրել, որ փետրվարի 26-ին նախագահ Մութալիբովի մոտ խորհրդակցության ընթացքում Շուշիից իրեն կառավարական կապի մոտ է հրավիրել Ռահիմ Գազիեւը եւ հայտնել, որ «աղբբեջանական զորքերը վերստին ազատագրել են խոջալուն, կա 2 զոհ»: Հենց այս տեղեկության հիման վրա էլ «Ազերինֆորմ»-ին տրվել է համապատասխան ցուցում: Ո՞ր ժամին է հրավիրվել խորհրդակցությունը՝ չի ճշտվել: Նույն օրն Աղբբան է գործուղվել գլխավոր շտաբի պետ Շահին Մուսաեւը: Վերջինս հենց օդանավակայանից կապվել է Մութալիբովի հետ եւ իրազեկել, որ «կան հազարավոր սպանվածներ»:

Փետրվարի 27-ին «Ազերինֆորմ»-ը, ներողություն խնդրելով նա-

խորդ օրվա «սխալ տեղեկատվության համար», տարածել է, որ «Խոջալուում սպանվել է 100 հոգի»: Նույն օրն Աղղամում Չինգիզ Մուստաֆաեւին տված հարցազրույցում Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» էլման Մամեդովը հստակ ասել է, որ «զոհվել է 1000 մարդ»: Նույն թիվը նա հնչեցրել է նախագահ Մութալիբովի մատավայրում անցկացրած ասուլիսին: Այդուհանդերձ, մարտի 2-ին Մութալիբովի մամուլի քարտուղար Ռասիմ Աղաեւը օտարերկրյա լրագրողների համար ճեպազրույցում ասել է, որ «դաժանորեն սպանվել է 1 432 հոգի»: Ավելի սարսափելի թիվ է հնչեցրել ԱԺԾ մամուլի կենտրոնը՝ «կա 1600 սպանված»:

Քրեական հետապնդման ենթարկված Ֆահմին Չաջիեւի գործով մեղադրական եզրակացության մեջ կարդում ենք, որ նա «Աղղամ հասցված համազարկային կրակի «Գրադ» 3 կայանքներն ուղարկել է Աղջաբեդու շրջան», որ «չի կարողացել համակարգել Աղղամում առկա ուժերը», փետրվարի 21-22-23-24-ին «զանազան պատճառաբանություններով հետաձգվել եւ ի վերջո տապալվել է Խոջալուի «ազատագրման» (չակերտները մերն են.- Վ. Ա.) օպերացիան, ինչի հետեւանքով Խոջալուի «գրավման» (չակերտները մերն են.- Վ. Ա.) հետեւանքով զոհվել է 339 հոգի (չի նշված՝ զոհվածները խաղաղ բնակիչներ էին, թե՞ զինվորականներ.- Վ. Ա.) 30-ը՝ (դարձյալ՝ անորոշ «հոգի» ձեւակերպմամբ.- Վ. Ա.) պատանդ վերցվել, 115-ը՝ (նույն «հոգի» բնութագրմամբ.- Վ. Ա.) անհայտ կորել»:

Ֆահմին Չաջիեւի դեմ քրգործ հարուցվել է 1993-ի իշխանափոխությունից հետո, հետեւաբար Խոջալուի զոհերի 339 թիվը չի կարելի համարել «դեպքերի անմիջական ազդեցության տակ լիովին չճշտված տեղեկությունների արդյունք»: Պատկան մարմինները մեկ տարուց ավելի ժամանակ են ունեցել, որպեսզի ամենավերջին մանրամասնություններով ճշտեին, թե քանի մարդ է զոհվել, անհայտ կորել կամ «պատանդ տարվել»: Ադրբեջանի ԳԽ՝ Խոջալուի դեպքերը հետաքննող հանձնաժողովը նշել է զոհերի այլ թիվ՝ 485:

Քրգործում առկա է հետեւյալ փաստաթուղթը. «Խոջալուի դեպքի ժամանակ մեր միավորման փորձագետների կողմից դատաբժշկական քննության է ենթարկվել 181 դիակ: Այդ դիակներից 130-ը տղամարդու է, 51-ը՝ կնոջ: Փորձաքննության ենթարկված դիակներից 13-ը երեխայի է: Վնասվածքների առաջացման մեխանիզմների բաժանումը՝ ներքուհիշյալ կարգով

ա. բեկորներից- 20

բ. գնդակից-151

գ. բուք գործիքից-10:

Ըստ վնասվածքների տեղակայման

ա. գլխի մասում- 40

բ. կրծքավանդակի մասում-74

գ. որովայնի մասում-17

դ. վերջույթների մասում-11

Գլխավոր դատաբժկական փորձագետ պրոֆ. Ռ. Ս. Յուսիֆով»:

Վկայաբերելով փաստաթուղթը, «Մեմորիալ»-ի փորձագետները եկել են եզրակացության, որ «ամենայն հավանականությամբ դրանք ճիշտ տվյալներ են»: Քրգործի վերաբերյալ «Ղարաբաղի» դատախազության քննիչ Սիքաիլովի կազմած «Տեղեկանքում» նշված է, որ ինքը «դատաբժկական փորձաքննություն է նշանակել 184 դիակի փաստով»:

Ամփոփում

Մենք ադրբեջանական բաց աղբյուրների որոշ նյութերի հիման վրա, թվում է, կարողացանք գոնե ընդհանուր գծերով ներկայացնել Խոջալուի դեպքերի վերաբերյալ առկա փաստական եւ այլ կարգի հակասությունների մի մասը, հաճախ իրարամերժ գնահատականները: Հակված չենք պնդելու, որ հաջողվել է գտնել, վերծանել եւ ներկայացնել բոլոր կարեւոր հանգամանքները: Խոստովանում ենք, որ համացանցում տեղադրված՝ քրգործի նյութերը հիմնականում ձեռագիր են, այն էլ՝ ադրբեջաներեն:

Որպեսզի այդ ամենից գատվի էականը, մեծ ջանքեր, ոչ միայն լեզվական, այլեւ՝ ձեռագրագիտական անհրաժեշտ գիտելիքներ են պետք, մասնագիտական աչք: Մենք հեռու ենք մեզ ադրբեջաներենի գիտակ համարելու գայթակղությունից, սակայն մեջբերումների հավաստիությունը երաշխավորում ենք: Թերեւս կարելի էր ավելին անել: Մենք ընդամենն ամփոփել ենք անցած երկու տարում Խոջալուի թեմայով «Ազգ» օրաթերթի մեր հրապարակումները, կատարել անհրաժեշտ կրճատումներ կամ, ընդհանակը, հավելումներ:

Հույս ունենք, որ ընթերցողը կգնահատի մեր փորձագիտական աշխատանքը: Բավարարվում ենք նրանով, որ «հարկ չկա դատարկել ծովը, մի կաթիլն էլ բավական է, որպեսզի համոզվես՝ ջուրն աղի է»: Պատրաստ ենք սիրով ընդունել դիտողություններ, առաջարկություններ եւ առարկություններ: Ստադիո ենք շարունակել աշխատանքը եւ հրապարակել սույն ուսումնասիրության երկրորդ մասը: Այդ դեպքում, գուցե, Խոջալուի խաղաղ բնակչության դեմ Ադրբեջանի գործած հանցանքի պատկերն ավելի կամբողջանա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր ակնարկ.....	8
Թոմաս Գոլց. Խոջալուի «ցեղասպանության» կնքահա՞յր.....	24
Թուրքական հե՞տք.....	29
366-րդ գնդի «մասնակցությունը».....	35
Ադրբեջանական կողմի տեղեկատվական առաջին արձագանքները.....	37
Ադրբեջանի իրավապահ մարմինների անմիջական արձագանքը.....	41
«Վկան» կրկնում է «Զննության» արձանագրությունը.....	45
Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդով.....	49
«Դատախազ» Աթաքիշի Աթաքիշիեի առեղծվածը.....	57
Ադդամում.....	60
Ալիֆ Յաջիեւ. հերո՞ս, թե՞.....	68
Մարդկանց ճակատագիրը ոչ ոքի չի հուզել.....	72
Թամեռլան Գարաեւի 20-ամյա ազատ աքսորն ու չմարած պարտքը.....	77
Ադրբեջանական «թվաբանություն».....	83
Անփոփում.....	86

ՎԱՅՐԱՄ ՍԵՐՊԵՅԻ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**«ԽՈՋԱԼՈՒ.
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՆԱՏՈՄԻԱ»**

Խմբագիր՝
Սրբագրիչ՝
Համ/Էջադր.

Միքայել Հաջյան
Ֆլորա Ստեփանյան
Լուսինե Բաղդասարյանի

*Թուղթը՝ օֆսեթ: Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/16: Ծավալը՝
5.5 տպագր. մամուլ: Տառատեսակը՝ Arial Armenian Long:
Տպաքանակը՝ 350:*

Տպագրվել է «Դիզակ պլուս» հրատարակչության տպարանում
Հ.Հակոբյան, 25
Ստեփանակերտ-2013